ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Սևծովյան ավազանի

համատեղ գործառնական ծրագիր

2007-2013թթ.

Վերջնական տարբերակ

Նոյեմբեր 2007թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 4
2. ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 11
2.1 Դիտարկվող տարածաշրջանի նկարագրությունը 11
Ընդհանուր նկարագիրը 12
Տարածքը և ժողովրդագրությունը 14
Տնտեսական կառուցվածքը և կատարողական ցուցանիշները 15
Կրթությունը, հետազոտությունները և մշակույթը 28
Շրջակա միջավայրը և բնության պաշտպանությունը 29
2.2 ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն 33
3. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻՆ ԵՎ ԱՌԿԱ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 36
3.1 Համապատասխանությունը այլ միջազգային նախաձեռնություններին և միջսահմանային ծրագրերին 36
3.2 Եզրակացություններ ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան տարածաշրջանային ծրագրի ռազմավարության վերաբերյալ 43
4. Ծրագրի ռազմավարությունը. նպատակները, գերակայությունները և միջոցառումները 50
4.1 Ծրագրի ռազմավարության սահմանման սկզբունքները և մեթոդաբանությունը 50
4.2 Ծրագրի նպատակները 52
4.3 Գերակայությունները և միջոցառումները, ինդիկատիվ գործողությունները 55
4.4 Ծրագրի գերակայությունների և միջոցառումների դերը հնարավորությունների և վտանգների հասցեագրման գործում 55
Նպատակ 1. Սահմանամերձ տարածաշրջաններում տնտեսական և սոցիալական զարգացման խթանում 59
Գերակայություն 1 - Համախմբված ռեսուրսների հիման վրա աջակցություն տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով ստեղծված միջսահմանային գործընկերություններին 59
Միջոցառում 1.1. Նոր ներտարածաշրջանային տեղեկատվության, կապի, տրանսպորտի և առևտրի ուղիների մատչելիության փոխկապվածության հզորացում 60
Միջոցառում 1.2. Զբոսաշրջության զարգացման համատեղ նախաձեռնությունների և ավանդական արտադրանքների խթանման նպատակով զբոսաշրջության ցանցերի ստեղծում 60
Միջոցառում 1.3. Տեղական զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման համար վարչական կարողությունների ստեղծում 61
Նպատակ 2. Համատեղ աշխատանք ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ 62
Գերակայություն 2. Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության համար ռեսուրսների և կարողությունների փոխանակում 62
Միջոցառում 2.1. Գետերի և ծովային համակարգերի, ինչպես նաև վերականգնվող էներգիայի ոլորտներում համընդհանուր մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ համատեղ գիտելիքների և տեղեկատվական բազայի հզորացում 64
Միջոցառում 2.2. Հատուկ պահպանվող տարածքների պաշտպանության և պահպանության ոլորտում հետազոտության, նորարարության և իրազեկության խթանում 65

Միջոցառում 2.3. Կոշտ թափոնների և ջրահեռացման համակարգերի տեխնոլոգիաների և կառավարման ոլորտում նորարարություններին ուղղված համագործակցության նախաձեռնությունների խթանում 65
Նպատակ 3. Տեղական, միջանձնային գործողությունների խթանում 66
Գերակայություն 3. Աջակցություն մշակութային և կրթական նախաձեռնություններին՝ ավազանում ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու նպատակով 66
Միջոցառում 3.1. Սևծովյան ավազանի համայնքներում մշակութային ցանցերի և կրթական փոխանակման խթանում 67
Տեխնիկական աջակցությունը 68
Միջոցառում 1. Ծրագրի կառավարումը և իրականացում 70
Միջոցառում 2. Տեղեկատվական, խթանման և ծրագրերի մշակման հետ կապված գործողություններ 70
4.5 Դիտարկվող ծրագրերի բնույթը 71
4.6 Ցուցանիշները 72
5. Ինդիկատիվ ֆինանսավորման պլանը 79
6. Համատեղ կառույցները և իրավասու մարմինների նշանակումը 83
6.1 Համատեղ կառույցները և իրավասու մարմինների նշանակումը 83
Համատեղ դիտանցման կոմիտեի խնդիրները 83
Համատեղ դիտանցման կոմիտեի կազմը և ընթացակարգային կանոնները 84
6.2 Համատեղ ղեկավարման մարմինը 85
Համատեղ ղեկավարման մարմնի խնդիրները 85
Համատեղ ղեկավարման մարմնի նշանակումը 87
6.3 Համատեղ տեխնիկական քարտուղարությունը 89
ՀՏՔ-ի խնդիրները 89
Համատեղ տեխնիկական քարտուղարության նշանակումը 90
Ազգային տեղեկատվական կենտրոնները 90
6.4 Աուդիտ իրականացնող մարմինը 91
6.5 Թուրքական մարմինները 92
6.6 Ծրագրով դիտարկվող գործընկերները 92
6.7 Թույլատրելի ծախսերը 94
7. Ծրագրի իրականացումը 96
7.1 Նախագծերի իրականացման հայտերը և դրանց ընտրությունը 96
7.2 Ֆինանսական կառավարումը 99
7.3 Ծրագրի աուդիտը 104
7.4 Դիտանցման ընթացակարգերը 105
7.5 Գնահատումը 109
7.6 Անցումային միջոցառումները 110
7.7 ՏԱ-ի բյուջեի օգտագործումը 110
7.8 Հայտերի հրավերը 110
7.9 Լեզուները 111

1 Ծրագրի համառոտ նկարագրությունը

ԵՄ հարևանության նոր քաղաքականությունը

Սևծովյան ավազանը ԵՄ-ի և արևելքում գտնվող նրա հարևան երկրների միջև համագործակցության հիմնական տարածքներից մեկն է, որը կառուցվածքային արագ և հաստատուն զարգացում է ապրում: 2007 թվականի վերջին ընդլայնումից հետո առափնյա երկու պետություն՝ Բուլղարիան և Ռումինիան, անդամակցեցին ԵՄ-ին (Թուրքիայի անդամակցության վերաբերյալ բանակցություններն ընթացքի մեջ են), և այժմ ԵՄ–ն իր կազմում ունի սևծովյան ափամերձ տարածքներ: Արդյունքում, ավելացավ նաև այս տարածաշրջանում կայունության և անվտանգության հաստատման ուղղությամբ ԵՄ-ի շահագրգռվածությունը:

Այս տարածաշրջանում ծագող մարտահրավերներին դիմակայելու, ինչպես նաև ԵՄ հարավային և արևելյան այլ հարևանների հետ հարաբերությունները կարգավորելու նպատակով 2003 թվականին ԵՄ-ն որոշում կայացրեց հարևան երկրների հետ համագործակցության նոր մոտեցում կիրառելու վերաբերյալ, որի արդյունքում 2004 թվականի մայիսին մշակվեց համապարփակ նոր ռազմավարություն՝ Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ):[1] Այս ռազմավարության իրականացման նպատակով Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի (ԵՀԳԳ) միջոցով ներգրավվում են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ:[2]

Այս երկրների և ԵՄ-ի միջև հարաբերությունների համար կիրառվող **իրավական հիմքը** սահմանված է Գործընկերության և համագործակցության համաձայնագրերով կամ Գործակցության համաձայնագրերով: Գերակայությունները կարտացոլվեն ԵՀՔ գործողությունների ծրագրերում և Ռուսաստանի համար «Ճանապարհային քարտեզում»:

Միջսահմանային համագործակցությունը (ՄՍՀ) Եվրոպական հարևանության քաղաքականության և ԵՄ-Ռուսաստան ռազմավարական գործընկերության բաղկացուցիչ մասերից է, ինչը և՛ ԵՄ անդամ երկներին և՛ գործընկեր երկրներին տարածաշրջանային մակարդակով համատեղ աշխատանքներ իրականացնելու հնարավորություն է տալիս: ԵՀԳԳ ՄՍՀ այս ծրագրերն ընդգրկում են Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և միջերկրածովյան արևելյան ու հարավային երկրները: Այս ծրագրերով նախատեսվող նպատակները՝ ներգրավված տարածքների ու ինդիկատիվ ֆինանսական հատկացումների հետ միասին, նախատեսված են ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթղթում:[3]

ՄՍՀ քաղաքականության առանցքային նպատակներն են ԵՄ արտաքին սահմանների երկու կողմերում կայուն զարգացման ապահովումը, այդ սահմանների տարածքում կենսամակարդակների միջև գոյություն ունեցող տարբերությունների նվազեցումը, ինչպես նաև ԵՄ ընդլայնումից առաջացող կամ եվրոպական ցամաքային ու ծովային սահմաններին տարածքների միջև հարևանությունից այլ կերպ ծագող մարտահրավերներին դիմակայելը և հնարավորություններից օգտվելը:

---

[1] Եվրոպական հարևանության քաղաքականության ռազմավարության փաստաթղթի վերաբերյալ ԵՀ հաղորդագրություն (COM (2004թ.) 373, Բրյուսել, 12.05.2004թ.):

[2] Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման հիմնական դրույթները սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1638/2006 (ԵՀ) կանոնակարգ:

[3] Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի միջսահմանային համագործակցության 2007-2013թթ. ռազմավարության փաստաթուղթ, 2007-2010թթ. Ինդիկատիվ ծրագիր:

Սևծովյան ավազանի ՄՍՀ ծրագիրը ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության շրջանակներում ծովային ավազանի մասով ստեղծված երեք ծրագրերից մեկն է, ընդ որում՝ ամենաբարդը, չնայած ֆինանսական միջոցների սահմանափակ լինելուն:

Դիտարկվող տարածաշրջանը

Սևծովյան ավազանի ծրագրում ընդգրկման ենթակա գոտին ընդգրկում է 834,719 քառ. կմ տարածք՝ 74.2 մլն. բնակչությամբ: Այն ընդգրկում է տասը երկիր, որոնցից մի քանիսը ներգրավված են իրենց երկրի ամբողջական տարածքով (Հայաստան, Ադրբեջան, Մոլդովայի Հանրապետություն և Վրաստան), մյուսները՝ ավազանին մոտ գտնվող տարածքներով (Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա[4] և Ուկրաինա): Տասը երկրներից չորսը (Հունաստան, Հայաստան, Ադրբեջան և Մոլդովայի Հանրապետություն) աշխարհագրական առումով չեն գտնվում Սև ծովի ափին, սակայն պատմական, տնտեսական, մշակութային, սոցիալական և բնապահպանական գործոններով անմիջականորեն կապված են սևծովյան ավազանի հետ: Մյուս վեց երկրները (Բուլղարիա, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա, Վրաստան և Ուկրաինա) ուղղակի ելք ունեն դեպի Սև ծով:

Ծրագրի մշակման գործընթացը

ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթղթում կարևորվում է գործընթացում համատեղ մասնակցությունը՝ հիմնված ընդհանուր արժեքների և շահերի մասին իրազեկվածության վրա: ԵՄ-ն իր գործընկերների համար գերակայություններ ու պայմաններ սահմանելու նպատակներ չի հետապնդում: Այդ իսկ պատճառով ծրագրի մշակման նպատակով ստեղծվել է գործընկերություն, որը ներառում է բոլոր մասնակից պետությունները, որտեղ Եվրոպական հանձնաժողովը (ԵՀ) Տեխնիկական աջակցության (ՏԱ) ծրագրերի միջոցով աջակցություն է տրամադրում ծրագրի գործընկերության[5] շրջանակներում ընդգրկված թե՛ ԵՄ անդամ պետություններին, և թե՛ գործընկեր երկրներին: Ծրագրի մշակման գործընթացում, ինչպես նաև ծրագրի իրականացման ինստիտուցիոնալ կառուցվածքում ապահովվել է յուրաքանչյուր մասնակից երկրի ընդհանուր և հավասար մասնակցությունը:

Ծրագրի Համատեղ ղեկավարման մարմինը (ՀՂՄ) հիմնվել է Ռումինիայում՝ Եվրոպական ինտեգրման նախարարությունում (այժմ՝ Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանաշինության հարցերի նախարարություն): Մասնակից պետությունները 2006 թվականի ամռանը ստեղծեցին Համատեղ աշխատանքային խումբ (ՀԱԽ): Հաջորդող տարվա ընթացքում ծրագրի ռազմավարության շուրջ համաձայնություն ձեռք բերելու և ծրագրի իրականացման հիմնական կանոններն ու ընթացակարգերը սահմանելու նպատակով անցկացվել են պարբերական հանդիպումներ:

Սևծովյան ավազանի ծրագրին մասնակցող 10 պետությունները դիտարկվող շրջաններում կազմակերպել են խորհրդակցություններ՝ ընդգրկելով իշխանության

---

4 Որպես բանակցությունների փուլում գտնվող թեկնածու՝ Թուրքիան դեռ ընդգրկված չէ ԵՀԳԳ թիվ 1638/2006 կանոնակարգով (ԵՀ) կարգավորվող շրջանակում, բայց թույլտվություն է ստացել մասնակցելու Սևծովյան ավազանի ծրագրին՝ Հանձնաժողովի թիվ 718/2007 կանոնակարգի 86(4) հոդվածի և ԵՀԳԳ կանոնակարգի 9(5) հոդվածի համաձայն:

5 Կարողությունների զարգացման տարածաշրջնային նախաձեռնությունը (ԿԶՏՆ) ծրագրի մշակման գործընթացում աջակցություն է ցուցաբերել գործընկեր երկրների մասնակցությունն ապահովելու համար, տեխնիկական աջակցության ծրագիրը ֆինանսավորվել է TACIS գործիքի շրջանակներում, իսկ Բուլղարիայում և Ռումինիայում աջակցության ծրագրերը ֆինանսավորվել են PHARE գործիքի շրջանակներում:

տեղական և կենտրոնական մարմիններին, շահագրգիռ կողմերին և հնարավոր շահառուներին: 2006 թվականի հոկտեմբերից մինչև 2007 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած այս խորհրդակցությունների արդյունքում բացահայտվել են դիտարկվող տարածաշրջանի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առկա հնարավորությունները և վտանգները: Միաժամանակ, ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթղթով նախատեսված նպատակները քննարկվել են տարածաշրջանային դերակատարների կողմից նշված նպատակների և գերակայությունների հետ համեմատության կարգով, ինչի արդյունքում ձևավորվել են Սևծովյան ավազանի ծրագրի նպատակները և գերակայությունները: Բացի այդ, որոշ շրջաններում, օրինակ՝ Ռումինիայում, 2007 թվականի ապրիլից ձեռնարկված միջոցառումները, որոնց միջոցով ներկայացվել են ծրագրի ընձեռած հնարավորությունները և ծրագրի միջոցով իրականացվելիք միջսահմանային գործընկերությունների նկարագրությունը, հիմնականում ունեին խթանող բնույթ:

Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատումը (ՇՄՌԳ)

Ծրագրի ռազմավարության և գերակայությունների հիմնական բովանդակության շուրջ համաձայնություն ձեռք բերելով՝ 2007 թվականի սկզբին Համատեղ ղեկավարման մարմինը ծրագրի գործընկերների և ԵՀ-ի հետ միասին սկսեց Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման (ՇՄՌԳ) գործընթացը:

Ծրագրով նախատեսված օժանդակության ուղղությունների առանձնահատկությունները և դրանց մանրամասն նկարագրությունը հնարավորություն տվեցին կատարել շրջակա միջավայրի վրա ծրագրի որոշակի մասի հնարավոր ազդեցության կոնկրետ գնահատում: Այնքանով, որքանով թույլ է տրվել կատարել գնահատում, կազմվել է ընդհանուր որակական գնահատական, որը ցույց է տվել, թե շրջակա միջավայրի նախանշված հարցերի վրա ազդեցությունները դրական են, բացասական թե չեզոք:
Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման հիման վրա կազմված ընդհանուր եզրակացությունն այն է, որ շրջակա միջավայրի որևէ էական ազդեցություն ամենայն հավանականությամբ բացասաբար չի ներգործի շրջակա միջավայրի նախանշված նպատակների վրա:

Շրջակա միջավայրի ռազմավարական գնահատման մասին հրահանգի 10-րդ հոդվածի համաձայն՝ նախագծերի և ծրագրերի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա ազդող գործոնները պետք է դիտանցման ենթարկվեն, որպեսզի հնարավոր լինի սկզբնական փուլում հայտնաբերել անկանխատեսելի բացասական ազդեցությունները և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար:
Ամեն դեպքում, քանի որ Համատեղ գործառնական ծրագրի իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն գրեթե չի ակնկալվում, ապա դիտանցման համար կոնկրետ մեխանիզմ մշակելու անհրաժեշտություն չի առաջանում:

Սակայն կարևոր է, որ ծրագրի միջանկյալ և վերջնական գնահատումների ժամանակ հստակ պահանջ սահմանվի՝ աշխատանքների և ծրագրերի իրականացման բնապահպանական ազդեցությունը գնահատելու համար: Անհրաժեշտ է նախատեսել նաև հստակ պահանջ, որ միջանկյալ գնահատմամբ առաջարկվեն հետևանքների վերացման միջոցառումներ, եթե գնահատման արդյունքում հայտնաբերվեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության դեպքեր:

Զարգացման հիմնական խնդիրները և ընդհանուր մարտահրավերները

Բոլոր դիտարկվող շրջանները, այդ թվում՝ ԵՄ նորանդամ պետությունները և գործընկեր երկրները, հետ են մնում ԵՄ զարգացման միջին մակարդակից: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ տարեկան միջին ցուցանիշը 3600 եվրոյից ցածր է՝ բացառությամբ հունական շրջանների: Չնայած բոլոր շրջաններում նկատվում են զարգացման դինամիկ տեմպեր, որոնք որոշ չափով նվազեցնում են առկա տարբերությունները և հնարավորություններ ստեղծում հետագա զարգացման համար, միևնույն է՝ տնտեսական վիճակի անհավասարաչափությունը դեռ բավականին ակնհայտ է:

Որպես հետևանք, սևծովյան ավազանի բոլոր երկրներում առկա է միգրացիային նպաստող հզոր գործոն, որը եվրոպական հարուստ տնտեսությունների հարևանությամբ պայմանավորված միգրացիայի գործոնի հետ մեկտեղ ձևավորել է բացասական կամ խիստ բացասական զուտ միգրացիայի հաշվեկշիռներ: Որոշ դեպքերում, այդպիսի միգրացիան, հատկապես աշխատունակ տարիքի բնակչության և հմուտ աշխատողների շրջանում, այնքան ազդեցիկ է, որ խոչընդոտում է տեղական զարգացմանը:

Տարածաշրջանի ենթակառուցվածքի որակական ու քանակական ցուցանիշներն արտացոլում են տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակը: Տրանսպորտային ենթակառուցվածքի մատչելիությունը սահմանափակ է անգամ դրա հարաբերականորեն աննշան շահագործման դեպքում, ինչը վկայում է ցածր տնտեսական զարգացման մասին: Կոմունալ ծառայությունների ենթակառուցվածքը նույնպես թերզարգացած է, քանի որ ջրային տնտեսության ենթակառուցվածքը հասանելի չէ տարածաշրջանի բնակիչներից շատերին, հատկապես գյուղական վայրերում:

Բացի այդ, նկատվում են մի շարք այլ ընդհանուր մարտահրավերներ: Դրանց թվում են սառեցված հակամարտությունների վերածված ներքին և միջազգային վերջին լարվածությունները, մարդկանց առևտուրը, ապօրինի միգրացիան, աշխարհագրական կառուցվածքային սահմանափակումները և սոցիալական ու տնտեսական ոչ բավարար ենթակառուցվածքը: Այնուամենայնիվ, ծրագրի ռազմավարության շրջանակներում գործընկերների կողմից որպես գերակա մարտահրավեր է ճանաչվել շրջակա միջավայրի վատթարացումը, որը, արմատացած լինելով ավազանի երկրաբանական կառուցվածքում, ավելի մեծ չափերի է հասել մարդկային գործոնի հետևանքով, հատկապես՝ վաղ 90-ականների աշխարհաքաղաքական և տնտեսական փոփոխությունների շրջանում: Բոլոր երկրները էներգիայի մեծածավալ սպառողներ են, ինչն էլ մեծ ազդեցություն է թողնում շրջակա միջավայրի վրա: Շրջակա միջավայրի ոչ բավարար ենթակառուցվածքը հանգեցնում է, մասնավորապես, ծովի ավազանի գետերի և հենց Սև ծովի ուժեղ աղտոտվածությանը:

Ռազմավարությունը

Գործընկերները մշակել են ծրագրի ռազմավարությունը՝ կիրառելով մի շարք հիմնական սկզբունքներ.



Մշակութային մակարդակում ազդեցությունը առավելագույնի հասցնելու կարողություն ունեցող ռազմավարության ընդունումը և առկա համընդհանուր մարտահրավերների դիմակայմանն ուղղված գործընկերության ու համագործակցության ներուժի վերաբերյալ իրազեկության բարձրացումը

Նպատակները և գերակայությունները

Հաշվի առնելով ծրագրի մշակման ընդունված ռազմավարական սկզբունքները՝ գործընկերների կողմից ծրագրի համընդհանուր նպատակ է ճանաչվել **առավել սերտ տարածաշրջանային գործընկերության և համագործակցության հաստատումը**:

Այսպիսով, ծրագիրը նպատակ ունի նպաստելու իր առանցքային համապարփակ նպատակի իրականացմանը՝ **«Սևծովյան ավազանի շրջանների ավելի հզոր և կայուն տնտեսական ու սոցիալական զարգացում»**:

Ծրագրի երեք **առանձնահատուկ նպատակները,** որոնք հիմնված են ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթղթի վրա, հետևյալն են՝

1. սահմանամերձ գոտիներում տնտեսական և սոցիալական զարգացման խթանումը.
2. համընդհանուր մարտահրավերների դիմակայման ուղղությամբ միասնական աշխատանքը.
3. տեղական, միջանձնային համագործակցության խթանումը:

Այս երեք նպատակները կիրականացվեն երեք **գերակայությունների** միջոցով, որոնք միասին կազմում են ծրագրի՝ նպատակներին հասնելու համար մշակված մոտեցումները՝

1. միջսահմանային աջակցություն՝ համախմբված ռեսուրսների հիման վրա տնտեսական զարգացման նպատակով.
2. միջոցների և ունակությունների ցանցերի ստեղծում՝ ուղղված շրջակա միջավայրի պաշտպանությանն ու պահպանությանը.
3. մշակութային և կրթական նախաձեռնությունների կազմակերպում՝ ավազանի երկրներում ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու համար:

Այս երեք գերակայությունները գործառնական մակարդակով կիրականացվեն թվով յոթ միջոցառումների միջոցով: Վերը նշված միջոցառումները մանրամասն ներկայացված են ծրագրի սույն փաստաթղթի 4-րդ գլխում:

Ծրագրի մշակման ուղեցույցում նշված չորս հիմնական նպատակներից մեկը՝ ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության «Տնտեսապես արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովում» նպատակը չի ընդգրկվի Սևծովյան ավազանի 2007-2013 թվականների համար ծրագրի մշակման փուլում:

Ֆինանսական հատկացումները և ծրագրի ֆինանսական պլանը

Ծրագիրը կֆինանսավորվի ԵՀԳԳ միջոցներից: Որպես ԵՄ թեկնածու երկրի՝ Թուրքիայի մասնակցությունը ծրագրին կֆինանսավորվի ԵՄ նախանդամակցային աջակցության գործիքի (ՆԱԳ) միջոցով: Մասնակից երկրները կապահովեն 10 տոկոս

համաֆինանսավորման մակարդակ: ԵՄ ֆինանսական հատկացումների 10 տոկոսը կտրամադրվի գործընկերների կողմից չֆինանսավորվող՝ ծրագրի կառավարմանն ուղղված գործողությունների ՏԱ-ին, ինչպես օրինակ՝ Համատեղ ղեկավարման մարմնի գործառնական ծախսերը, որոնք կֆինանսավորվեն Ռումինիայի կողմից:

Ծրագրի գործողության ընթացքում (2007-2013թթ.) ԵՀԳԳ-ի միջոցով տրամադրվող ընդհանուր բյուջեն կկազմի 17 305 994 եվրո: Թուրքիայի մասնակցության համար ԵՄ-ի ՆԱԳ-ի միջոցներից տրամադրվող ինդիկատիվ հատկացումը 2007-2009թթ. կկազմի տարեկան 1 000 000 եվրո, որը պետք է հաստատվի տարեկան ֆինանսավորմանն առնչվող որոշումների հիման վրա՝ յուրաքանչյուր տարվա կտրվածքով:

Իրականացման ռազմավարությունը

ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթղթի սկզբունքներից մեկի համաձայն՝ ծրագրի բոլոր գործընկերները կունենան հավասար կարգավիճակ և կկրեն հավասար պատասխանատվություն ծրագրի իրականացման համար: Այս հավասար պատասխանատվությունը ծագեց ծրագրի մշակման գործընթացի համար նախատեսված ՀԱԽ-ի ստեղծմամբ և կշարունակվի ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ հետևյալ համատեղ կառույցների ստեղծմամբ.

- **Համատեղ դիտանցման կոմիտե (ՀԴԿ),** որը վերահսկում և դիտանցում է ծրագրի իրականացումը.
- **Համատեղ ղեկավարման մարմին (ՀՂՄ),** որը պատասխանատու է ծրագրի իրականացման և կառավարման համար.
- **Համատեղ տեխնիկական քարտուղարություն (ՀՏՔ),** որը կոչված է աջակցելու ՀՂՄ-ին և ՀԴԿ-ին.
- **Ընտրող կոմիտե (ԸԿ),** որը գնահատում է նախագծերի իրականացման համար ներկայացված առաջարկները.
- **Աուդիտ իրականացնող մարմին (ԱիՄ),** որն իրականացնում է ՀՂՄ-ի ծախսերի և հաշիվների տարեկան ֆինանսական աուդիտը.
- **Ազգային մարմիններ (ԱՄ)՝ ծրագրի նախապատրաստման փուլում ՀՂՄ-ի գործընկերներ,** որոնք պատասխանատու են իրենց երկրներում ծրագրի աշխատանքների համակարգման, ՀԴԿ-ի հանդիպումներին մասնակցելու, որպես ԸԿ-ի անդամներ՝ ՀԴԿ-ի հավանությանը թեկնածուներ ներկայացնելու, ծրագրի իրականացմանն օժանդակելու համար, ԵՄ անդամ երկրների դեպքում՝ միջոցների ֆինանսական կառավարման, այդ թվում՝ իրենց տարածքում անտեղի ծախսված ցանկացած գումարի վերադարձի ապահովման համար:

Գործընկեր երկրներում[6] ԵՀ-ի հետ ԱՄ-ները ստորագրում են ֆինանսավորման համաձայնագիրը, որով կանոնակարգվում է մասնակից երկրների միջև պարտականությունների բաշխումը:

Թուրքիայի մասնակցությունը ծրագրին կարգավորվում է հստակ նորմերի միջոցով: Թուրքիայի՝ **Ֆինանսների և պայմանագրերի հարցերով կենտրոնական մարմինը,** ՆԱԳ-ի միջոցներից վճարումը կատարելու պարագայում, համատեղ ծրագրին մասնակցող թուրքական գործընկերների համար հանդես կգա որպես պայմանավորվող մարմին: Թուրքիայում ԱՄ-ի դերում հանդես կգա **Իրականացնող մարմինը:**

Ծրագրերը կիրականացվեն այնպիսի գործընկերությունների միջոցով, որոնք մշտապես կներգրավեն ԵՄ անդամ պետություններին և գործընկեր երկրներին: Թուրքական գործընկերների մասնակցությունը հնարավոր կլինի միայն եռակողմ

[6] Գործընկեր երկրները սահմանվում են (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 2-րդ հոդվածի համաձայն:

ծրագրերի դեպքում, որոնցում ներգրավված կլինեն առնվազն մեկական գործընկեր ԵՄ անդամ պետությունից և գործընկեր երկրից:

Բոլոր գործընկերությունները կղեկավարվեն **Շահառու / Գլխավոր գործընկերոջ**[7] կողմից, որը պատասխանատու է համապատասխան ծրագրի ֆինանսական կառավարումն իրականացնելու համար և գործընկերության անունից ՀՂՄ-ի հետ պայմանագիր ստորագրելու համար: Թուրքիայի համար սահմանվելու են իրականացման ՆԱԳ կանոնների վրա հիմնված հատուկ ընթացակարգեր:

Երկիրը	**Ազգային մարմինը**
Հայաստան	Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
Ադրբեջան	Տնտեսական զարգացման նախարարություն
Բուլղարիա	Տարածքային զարգացման և հանրային աշխատանքների նախարարություն
Վրաստան	Պետական նախարարի եվրոպական և եվրատլանտյան ինտեգրման հարցերով գրասենյակ
Հունաստան	էկոնոմիկայի և ֆինանսների նախարարություն
Մոլդովայի Հանրապետություն	էկոնոմիկայի և առևտրի նախարարություն
Ռուսաստանի Դաշնություն	Տարածքային զարգացման նախարարություն
Թուրքիա	Միջազգային համագործակցության և զարգացման թուրքական գործակալություն (ՄՀԶԹԳ)
Ուկրաինա	էկոնոմիկայի նախարարություն

[7] **Շահառուն** սահմանված է (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 2.2 հոդվածի համաձայն:

2 Ծրագրով նախատեսվող աշխարհագրական տարածքների նկարագրությունը և վերլուծությունը

2.1 Դիտարկվող տարածաշրջանի նկարագրությունը

Սևծովյան ծրագրին մասնակցող երկրները դասակարգվում են ըստ երեք տարբեր խմբերի.

- ԵՀԳԳ (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի հավելվածում ընդգրկված երկրներ՝ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն, Ռուսաստան և Ուկրաինա,
- Անդամ պետություններ՝ Բուլղարիա, Հունաստան և Ռումինիա,
- Թեկնածու երկիր՝ Թուրքիա:

ԵՀԳԳ ռազմավարության փաստաթղթի[8] համաձայն՝ Սևծովյան ծրագրում ընդգրկման ենթակա տարածաշրջանը ձևավորում են հետևյալ շրջանները կամ երկրները՝

- **Բուլղարիա**՝ Սևերոիստոչենի և Յուգոիստոչենի շրջաններ՝ համաձայն NUTS II-ի.
- **Հունաստան**՝ Կենտրիկի Մակեդոնիայի, Անատոլիկի Մակեդոնիայի, Թրակիայի շրջաններ՝ համաձայն NUTS II-ի.
- **Ռումինիա**՝ Հարավ-արևելյան շրջան՝ համաձայն NUTS II-ի,
- **Ռուսաստան**՝ Ռոստովի մարզ, Կրասնոդարի մարզ, Ադիգեայի Հանրապետություն.
- **Թուրքիա**՝ Ստամբուլի, Թեքիրդաղի, Քոջայելի, Զոնգուլդակի, Քաստամոնուի, Սամսունի և Տրապիզոնի՝ NUTS II-ին համարժեք շրջանները[9].
- **Ուկրաինա**՝ Օդեսա, Միկոլայիվ, Խերսոն, Զապորոժյեի և Դոնեցկի մարզեր, Ղրիմի Հանրապետություն, Սևաստոպոլ.
- **Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովայի Հանրապետություն՝** բոլոր շրջանները:

[8] ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարաության փաստաթուղթ, հավելված 2՝ աշխարհագրական համապատասխանելիություն

[9] Ավելի մանրամասն՝ NUTS II-ի համարժեք տարածքներն են. ԹՐ10 (Ստամբուլ), ԹՐ21 (Թեքիրդաղ, էդիրնե, Քըրքլարելի), Թր42 (Քոջայելի, Սաքարիա, Դյուզջե, Բոլու, Յալովա), Թր81 (Զոնգուլդակ, Քարաբյոք, Բարթին), Թր82 (Քաստամոնու, Չանքըրը, Սինոպ), Թր83 (Սամսուն, Թոխաթ, Չորում, Ամասիա) և Թր90 (Տրապիզոն, Օրդու, Գիրեսու, Ռիզե, Արդվին, Գյումուշհանե):



Ընդհանուր նկարագիրը[10]

Սևծովյան տարածաշրջանը գտնվում է քաղաքակրթությունների խաչմերուկում, որտեղ առկա են մահմեդական, ուղղափառ, պարսկական, թուրքական և արևմտյան քաղաքական ու հասարակական մշակույթները: Սև ծովը շրջապատող հողատարածքները մարդկային պատմության մեջ մի շարք հնագույն բազմամշակութային զարգացումների բեմահարթակ են հանդիսացել, ինչի մասին տարածաշրջանի պատմության գծով փորձագետի կողմից հիշատակվում է հետևյալ կերպ[11]. «*Պատմության ընթացքում Սև ծովը շրջապատող հողատարածքները սահմանագծեր են հանդիսացել երկու հիմնական իմաստներով. որպես առանձին համայնքների տեղակայման վայր, որոնք բաժանված են ըստ կայսրությունների և պետությունների միջև իրենց զբաղեցրած դիրքի, և որպես հիմք, որի շնորհիվ ձևավորվել են տարածաշրջանից դուրս գտնվողների մշակութային և քաղաքական ինքնությունները*»: Ըստ նույն գիտնականի, այդ սահմանագծերից ոչ մեկը երկար չի գոյատևել և մեկուսացման ժամանակաշրջանը փոխարինվել է միջերկրածովյան և եվրոպական քաղաքակրթությունների հետ սերտ ինտեգրման ժամանակաշրջանով: Սակայն այժմ այդ տարածքի ողջ բնակչության համար նման խաղաղ և արդյունավետ ինտեգրումն անհրաժեշտություն է դարձել:

Ներկայումս սևծովյան ավազանը որոշիչ աշխարհառազմավարական խաչմերուկ է դառնում ավելի ընդարձակ Եվրոպայի ապագայի համար: Այս տարածաշրջանում սկիզբ են առել մի շարք լուրջ մարտահրավերներ, որոնք իրենց ազդեցությունն ունեն ներկա և ապագա Եվրոպայի անվտանգության վրա. դեպի Եվրոպա օրինական ու ապօրինի

[10] Չնայած մասնակից երկրներից միայն չորսն ունեն մասնակցության իրավունք իրենց ամբողջական տարածքով, մասնակից երկրների վերաբերյալ վիճակագրական տվյալները (բացառությամբ տարածքային և ժողովրդագրական տվյալների) ներկայացվել են միայն ազգային մակարդակով՝ մասնակցության իրավունք ունեցող տարածաշրջանների մասշտաբով նման վիճակագրական տեղեկատվության բացակայության պատճառով:

[11] Տես՝ Ս. Քինգ, «Սև ծով», 2004թ.

միգրացիայից սկսած մինչև շրջակա միջավայրի վատթարացում, էներգակիրների անվտանգությունից մինչև թմրադեղերի ու զենքի անօրինական վաճառք և «սառեցված» հակամարտություններ:

Սև ծովն ուղղակիորեն շրջապատող տարածաշրջաններում տնտեսական զարգացման մակարդակը չափազանց անհավասար է, իսկ այս ծրագրի դիտարկվող շրջանների միջև՝ արևմուտքում գտնվող Հունաստանից մինչև արևելքում գտնվող Ադրբեջանը, նույնիսկ էլ ավելի անհավասար: Ավելին, գործընկեր երկրներից շատերում դիտարկվող շրջանները ազգային մակարդակով ամենաթերզարգացածների թվում են:

Անդամ պետություններին պատկանող՝ սևծովյան ավազանի տարածաշրջանում գտնվող շրջաններն իրենց զարգացման մակարդակով դեռևս զգալիորեն հետ են մնում ԵՄ-ի մյուս շրջաններից: ԵՄ-ի և դիտարկվող շրջանների զարգացման միջին ցուցանիշների միջև առկա հսկայական տարբերությունը հիմնական կառուցվածքային խնդիրներից մեկն է հանդիսանում բոլոր ԵՄ անդամ պետությունների և գործընկեր երկրների համար: ԵՄ առավել զարգացած շրջանների համեմատ այդ տարբերության կրճատումը գալիք տարիներին գերակա նպատակ կլինի սևծովյան ավազանի բոլոր կողմերի համար:

Մակրոտնտեսական վերջին ցուցանիշները համեմատաբար համասեռ են և դրական: Իրականում, աճի ցուցանիշները ԵՄ-ի ցուցանիշներից ավելի բարձր են: Մասնավորապես, սևծովյան ավազանում գրանցված ՀՆԱ-ի միջին աճը երկու կամ երեք անգամ բարձր էր, քան ԵՄ-ում և դա, անկասկած, կօգնի կրճատել զարգացման տարբերությունը:

Սևծովյան տարածաշրջանի տնտեսական համակարգերը խիստ բազմազան են: Հունաստանում համեմատաբար գերակշռող դիրք ունի ծառայությունների ոլորտը, հատկապես՝ զբոսաշրջությունը և ծովային ծառայությունները: Թուրքիայում գերիշխում են զբոսաշրջության, առևտրային և հանրային ծառայությունների ոլորտները (65.2%), որոնց հաջորդում է արդյունաբերության ոլորտը (25.6 %): Տարածաշրջանում մյուս երկրներից շատերը, ինչպես օրինակ՝ Ռուսաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռումինիան, Ուկրաինան, Բուլղարիան և Ադրբեջանը ունեն առավելապես **արդյունաբերական ուղղվածություն** ունեցող տնտեսություն: Նույն իրավիճակն է նաև Սևծովյան ծրագրում ընդգրկման ենթակա նրանց շրջաններում, չնայած որ Ուկրաինայի և Ռուսաստանի՝ ընդգրկման ենթակա շրջաններում ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռն ազգային միջին ցուցանիշից փոքր-ինչ բարձր է, հատկապես՝ զբոսաշրջության և ծովային ծառայությունների ոլորտում՝ շնորհիվ ծովին մոտ գտնվելու հանգամանքի: Երկրների մյուս խմբում, այդ թվում՝ Հայաստանում և Վրաստանում, և ավելի քիչ չափով Մոլդովայի Հանրապետությունում, ավելի լավ է ներկայացված **գյուղատնտեսական հատվածը:**

Դիտարկվող 10 երկրներում իշխող վարչական համակարգերը (բացառությամբ Հունաստանի) հիմնված են կառավարման երկշերտ համակարգի վրա. կենտրոնական և տեղական, որտեղ կենտրոնական և տեղական կառավարման մակարդակներում զգալիորեն գերիշխում են կենտրոնական մարմինները՝ բավականին քիչ տեղ թողնելով տեղական մարմիններին, ինչն էլ իրենից ներկայացնում է ծրագրի մյուս հիմնախնդիրը: Փաստորեն, տեղական զարգացման քաղաքականության համար վարչական կարողություն ստեղծելու գերակայությունը ծրագրում հանդես կգա առաջինների շարքում՝ կայուն զարգացման հիմնական նպատակներին ուղղված մյուս գերակայությունների հետ մեկտեղ:

Տարածքը և ժողովրդագրությունը

Սևծովյան ավազանի դիտարկվող տարածաշրջանը **834,719** կմ^2 է՝ **74.2 մլն** բնակչությամբ: Բնակչության միջին խտությունը կազմում է միջինում 89 մարդ/կմ^2, խիստ

ուրբանիզացված Ստամբուլում՝ 2237 մարդ/կմ^2, իսկ Քաստամոնուում (Թուրքիա)՝ 30 մարդ/կմ^2: Եթե հաշվի չառնենք Ստամբուլը, միջին խտությունը Սևծովյան ծրագրի տարածաշրջանում կազմում է 78 մարդ/կմ^2, որը մոտավորապես մեկ երրորդով ցածր է ԵՄ միջին ցուցանիշից (115.6 մարդ/կմ^2):

Ծրագրի տարածաշրջանում ընդգրկված են թե՛ մի շարք մեծ **գյուղական բնակավայրեր**, որոնք, մասնավորապես, գտնվում են Ռուսաստանում, Ուկրաինայում, Թուրքիայում և Բուլղարիայում, թե՛ 1 միլիոնից ավելի բնակչություն ունեցող **8 քաղաք** (այդ թվում՝ երեք մայրաքաղաք)՝ Ստամբուլ, Սալոնիկ, Բաքու, Թբիլիսի, Երևան, Դոնեցկ, Դոնի Ռոստով և Օդեսա: Քաղաքային բնակչությունը կազմում է ծրագրի տարածաշրջանի ընդհանուր բնակչության միջինում 59%: Չնայած վերջինս զիջում է ԵՄ շատ երկրների ցուցանիշներին, այնուամենայնիվ, այն բավականին բարձր է, ինչը վկայում է ուրբանիզացիայի հետևանքով ի հայտ եկող բնապահպանական, սոցիալական և տնտեսական բնույթի մի շարք հիմնախնդիրների առկայության մասին:

Աղյուսակ 2.1– Դիտարկվող շրջանների տարածքը և բնակչությունը

	Ցամաքային տարածք (կմ^2)	*Բնակիչների թիվը (հազար)*	*Որից՝ քաղաքային (%)*	*Որից՝ գյուղական (%)*	*Բնակչության խտությունը (մարդ/ կմ^2)*
Ադրբեջան	86 600	8 436	52	48	97
Վրաստան	69 700	4 315	52	48	62
Հայաստան	29 743	3 216	64	36	108
Մոլդովայի Հանրապետություն	33 843	3 383	41	59	100
Ռուսաստան	184 600	9 980	58	42	54
Բուլղարիա	33 679	2 132	55	45	63
Հունաստան	33 303	2 523	67	33	76
Ուկրաինա	174 819	13 595	74	26	78
Ռումինիա	35 762	2 850	54	46	80
Թուրքիա	152 671	23 811	73	27	156
Ընդամենը Սևծովյան ծրագրի տարածաշրջան	**834 719**	**74 241**	**59**	**41**	**89**

Աղբյուր՝ գործընկեր երկրների ազգային վիճակագրական մարմիններ

Ծրագրում ընդգրկված երկրների **ժողովրդագրական իրավիճակը**, ընդհանուր առմամբ, կայուն է, չնայած կան որոշակի տարբերություններ, ինչպես օրինակ՝ Ադրբեջանում և Թուրքիայում բնական աճ է գրանցվում, մինչդեռ Բուլղարիայում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում վերջին մի քանի տարիների ընթացքում նվազման միտումներ են արձանագրվում: Այս տարածաշրջանում 65 տարեկանից բարձր բնակչությունը կազմում է մոտավորապես 15%[12]՝ ԵՄ 27 պետությունների 17%-ի համեմատությամբ: Տարբերությունն ավելի շուտ բացատրվում է կյանքի տևողության և ծնելիության միջև առկա բացասական տարբերությամբ: Կյանքի միջին տևողությունը 71 տարի է, սակայն այստեղ ևս առկա են հսկայական տարբերություններ. Ռուսաստանում՝ 65 տարի, իսկ Հունաստանում՝ 79 տարի[13]: Սակայն, ցանկացած պարագայում այն ԵՄ միջին ցուցանիշից ավելի ցածր է (2005 թվականի[14] դրությամբ տղամարդիկ՝ 76, կանայք՝ 81):

[12] Տե՛ս վիճակագրական հավելվածը (առանց Թուրքիայի տվյալների)
[13] Համաշխարհային բանկ. համաշխարհային զարգացման ցուցանիշներ, 2004թ.
[14] ԵՄ վիճակագրական տարեգիրք 2006-2007թթ.

Աղյուսակ 2.2 - Զուտ միգրացիայի ցուցանիշ 2000-2005թթ.

	%
Հայաստան	-6,6
Ադրբեջան	-2,4
Բուլղարիա	-1,1
Վրաստան	-10,8
Մոլդովայի Հանրապետություն	-12,5
Ռուսաստանի Դաշնություն	1,03
Թուրքիա	-0,1
Ուկրաինա	-0,7
Ռումինիա	-2,5
Հունաստան	2,08
Եվրոպա	**2,2**

Աղբյուր՝ ՄԱԿ. համաշխարհային բնակչության հեռանկարներ, 2007թ.

Աղյուսակ 2.2-ից երևում է, որ տարածաշրջանը կենտրոնական նշանակություն ունի որպես օրինական և ապօրինի բազմաթիվ միգրանտների համար դեպի Եվրոպա տանող դարպաս, ինչպես նաև որպես միգրացիոն հոսքերի աղբյուր: 2000-2005թթ. ընկած ժամանակահատվածում Սևծովյան ավազանի ծրագրի գործընկերներից ընդհանուր առմամբ միայն Հունաստանում և Ռուսաստանում են գրանցվել զուտ միգրացիայի դրական ցուցանիշներ: Մնացած բոլոր երկրներում, ներառյալ ԵՄ նորանդամ պետություններում՝ Բուլղարիայում և Ռումինիայում, գրանցվել են բացասական ցուցանիշներ: Որոշ դեպքերում նույնիսկ չափազանց բացասական, ինչպես օրինակ՝ Մոլդովայի Հանրապետությունում, որտեղ նշված ժամանակահատվածի ընթացքում գրանցվել է -12% միգրացիոն զուտ ցուցանիշ: Միգրացիոն բալանսը աշխատունակ բնակչության շրջանում նույնիսկ ավելի մեծ բացասական թիվ է կազմում: Տարածաշրջանային մակարդակով առկա տեղեկությունները նույնիսկ ավելի քիչ մանրամասն են, սակայն դիտարկվող շրջաններից շատերի համար միգրացիոն հոսքերի հաշվեկշիռը կարելի է գնահատել բացասական՝ ներառյալ Ռուսաստանի շրջանների, օրինակ՝ Կրասնոդարի մարզի համար, որտեղ այն տարբերվում է միջին ազգային ցուցանիշից: Տարածաշրջանի՝ ԵՄ նորանդամ պետությունների՝ դեպի ԵՄ միգրացիոն հոսքերի զուտ մատակարարներ հանդիսանալու փաստը տարբերվում է ԵՄ-ի մյուս սահմաններում առկա դինամիկայից, Ինչպես օրինակ՝ միջերկրածովյան ավազանի դեպքում, որտեղ միգրացիոն հոսքերի մի մասը ներքին բնույթ ունի, և Միջերկրականի հյուսիսային ափերի դեպքում, որտեղ Իսպանիան, Իտալիան և Հունաստանն իրենց վրա են զգում ներգաղթի տնտեսական և սոցիալական հետևանքները: Այդ իսկ պատճառով, Սևծովյան համագործակցության հիմնական նպատակներից մեկը ավազանի բոլոր կողմերում տեղական մասշտաբով զարգացման ապահովումն է, որը հնարավորություն կտա հակազդել դեպի ԵՄ-ի մնացած մասը միգրացիոն հոսքերը ձգող հզոր գործոններին:

Տնտեսական կառուցվածքը և կատարողական ցուցանիշները

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշն արտացոլում է երկրների տնտեսությունների միջև առկա հսկայական անհավասարությունը, որը տատանվում է Մոլդովայի Հանրապետությունում գրանցված մոտ 650 եվրո ցուցանիշից մինչև մոտավորապես 14,400 եվրո ցուցանիշը Հունաստանում՝ 2005 թվականին կազմելով միջինում 3,270 եվրո: Վերջինս ավելի քան վեց անգամ ցածր է ԵՄ-ում մեկ շնչին ընկնող միջին ՀՆԱ-ից և, ըստ Համաշխարհային բանկի դասակարգման, համապատասխանում է միջինից ավելի բարձր եկամտի մակարդակին:

Աղյուսակ 2.3 – Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը՝ ընթացիկ գներով (1000 եվրո)

Երկիր	2000	2001	2002	2 003	2004	2005	2006
Հայաստան	0,36	0,48	0,53	0,62	0,71	0,82	0,89
Ադրբեջան	0,47	0,50	0,55	0,63	0,75	1,07	1,72
Բուլղարիա	1,14	1,23	1,43	1,84	2,25	2,49	2,66
Վրաստան	0,50	0,53	0,56	0,66	0,87	1,07	1,27
Հունաստան	7,47	7,71	8,76	11,33	13,49	14,46	14,79
Մոլդովայի Հանրապետություն	0,25	0,30	0,33	0,40	0,52	0,60	0,66
Ռումինիա	1,21	1,31	1,50	1,96	2,49	3,27	3,78
Ռուսաստան	1,28	1,52	1,71	2,15	2,97	3,87	4,56
Թուրքիա	2,22	1,58	1,93	2,49	3,09	3,64	4,10
Ուկրաինա	0,45	0,56	0,63	0,75	0,99	1,25	1,45

Աղբյուր՝ Արժույթի միջազգային հիմնադրամ. համաշխարհային տնտեսական տվյալների բազա, 2006թ. ապրիլ

Աղյուսակ 2.4 - Մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքը՝ ըստ գնողունակության պարիտետի (PPP) (1000 եվրո)

Երկիր	2000	2001	2002	2003	2004	2005	2006
Հայաստան	1,43	1,89	2,18	2,53	2,84	3,07	3,25
Ադրբեջան	1,84	1,99	2,17	2,45	2,74	3,31	4,25
Բուլղարիա	4,52	4,85	5,21	5,59	6,09	6,64	7,20
Վրաստան	1,61	1,74	1,87	2,14	2,35	2,61	2,79
Հունաստան	11,97	12,74	13,41	14,28	15,24	16,12	16,93
Մոլդովայի Հանրապետություն	1,09	1,19	1,30	1,43	1,57	1,71	1,83
Ռումինիա	4,18	4,54	4,87	5,25	5,85	6,32	6,80
Ռուսաստան	5,19	5,62	6,00	6,61	7,31	7,95	8,57
Թուրքիա	4,73	4,41	4,62	4,90	5,39	5,72	6,03
Ուկրաինա	2,96	3,35	3,61	4,08	4,73	5,16	5,59

Արժույթի միջազգային հիմնադրամ. համաշխարհային տնտեսական տվյալների բազա, 2006 թ. ապրիլ

Ըստ գնողունակության պարիտետի համեմատություն կատարելու դեպքում պատկերը փոքր-ինչ այլ է. այս պարագայում որոշ երկրներ զբաղեցնում են ավելի ցածր դիրք, քան ըստ ընթացիկ գների դասակարգման: Դա հատկապես վերաբերում է Թուրքիային: Այլ երկրներում, ինչպես օրինակ՝ Բուլղարիայում, գնողունակությունը շատ ավելի մեծ է, քան ընթացիկ արժույթով գնահատելու դեպքում:

Աղյուսակ 2.5 - Երկրների դասակարգումն ըստ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի՝ գնողունակության պարիտետ և ընթացիկ գներ

Ըստ գնողունակության պարիտետի (1,000 եվրո)		*Ըստ ընթացիկ գների* (1,000 եվրո)	
Հունաստան	16,93	Հունաստան	14,79
Ռուսաստան	8,57	Ռուսաստան	4,56
Բուլղարիա	7,20	Թուրքիա	4,10
Ռումինիա	6,80	Ռումինիա	3,78
Թուրքիա	6,03	Բուլղարիա	2,66
Ուկրաինա	5,59	Ադրբեջան	1,72
Ադրբեջան	4,25	Ուկրաինա	1,45
Հայաստան	3,25	Վրաստան	1,27
Վրաստան	2,79	Հայաստան	0,89
Մոլդովայի Հանրապետություն	1,83	Մոլդովայի Հանրապետություն	0,66

Աղբյուր՝ ԱՄՀ. համաշխարհային տնտեսական տվյալների բազա, 2006թ. ապրիլ

Սևծովյան ավազանի երկրների տնտեսությունը զարգանում է դինամիկ տեմպերով. սևծովյան ավազանի դիտարկվող տարածաշրջանի երկրներից շատերում վերջին մի քանի տարիների ընթացքում գրանցվել է բարձր տնտեսական աճ, որը ԵՄ միջին ցուցանիշից շատ ավելի բարձր է: 2004 թվականին ՀՆԱ-ի աճը 10 երկրներից 8-ում 7%-ից բարձր էր, մինչդեռ տարածաշրջանում գրանցվել է ՀՆԱ-ի 7.8%[15] միջին աճ: ՀՆԱ-ի աճը բերել է տարածաշրջանում բարձր և ցածր եկամուտների միջև տարբերության աճին նույնիսկ այն դեպքում, երբ այդ երկրները, բոլորը միասին վերցրած, ավելի շատ են մոտեցել Հունաստանին:

Գծանկար 2.6 – Ըստ գնողունակության պարիտետի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի դինամիկան, ինդեքս՝ 2000= 1.00



Աղբյուր՝ ԱՄՀ. համաշխարհային տնտեսական տվյալների բազա, 2006թ.

Այն դեպքում, երբ երկիրն ամբողջությամբ ծրագրի տարածաշրջանի մաս չի կազմում, դիտարկվող շրջաններում հաճախ արձանագրվում է մեկ շնչին ընկնող ավելի ցածր ՀՆԱ, քան միջին ազգային ցուցանիշն է, ինչպես օրինակ՝ Ուկրաինայում, Բուլղարիայում և Ռումինիայում[16] :

Սևծովյան ավազանի ծրագրի դիտարկվող տարածաշրջանի արտադրական կառուցվածքի գյուղատնտեսական և արդյունաբերական ոլորտների մասնաբաժինը բարձր է ԵՄ-ի միջինից: Գյուղատնտեսությունը կազմում է ընդհանուր ՀՆԱ-ի մոտ 14%-ը, արդյունաբերական հատվածը՝ մոտ 30%, իսկ ծառայությունները՝ 56%: Այս կապակցությամբ, դիտարկվող շրջաններում առկա է մեծ բազմազանություն, հիմնականում գյուղական շրջաններից մինչև նավթարդյունաբերության հետ կապված շրջաններ, գերազանցապես արդյունաբերական և ծառայությունների վրա հիմնված զբոսաշրջության շրջաններ:

Էներգիայի և հանքային ռեսուրսների մեծ պաշարները զգալի տնտեսական նշանակություն ունեն դիտարկվող շատ շրջանների համար: Սևծովյան ավազանի շատ երկրներ զգալի մասնաբաժին ունեն նավթի և գազի հատվածներում՝ հանդես գալով կամ որպես արդյունահանողներ (Ռուսաստան, Ադրբեջան) կամ այդ ռեսուրսների

[15] ՄԱԿ-ի վիճակագրություն
[16] Տե՛ս հավելվածը՝ Մասնակցության իրավունք ունեցող տարածաշրջանների վիճակագրական ուսումնասիրություն

խողովակաշարային և ծովային ճանապարհներով տարանցիկ փոխադրողներ (Ռուսաստան, Վրաստան, Ռումինիա, Թուրքիա, Ուկրաինա և Ադրբեջան):

Էներգետիկ ցանցերի զարգացման և դեպի Եվրոպա տանող հետագա տարանցիկ միջանցքների ստեղծման հետ կապված գործոններն իրենց ուղղակի ազդեցությունն են ունենում սևծովյան տարածաշրջանի վրա, քանի որ այստեղ են գտնվում գործող և ծրագրվող հիմնական ենթակառուցվածքներից մի քանիսը:

Միջազգային առևտուրը և ներդրումները

Սևծովյան տարածաշրջանի շատ երկրներ ունեն առևտրային խիստ բացասական հաշվեկշիռ՝ ի տարբերություն այդ երկրներից շատերի մոտ առկա ներդրումային հոսքերի խիստ դրական հաշվեկշռի: Թե՛ կոմերցիոն առևտուրը և թե՛ ներդրումային հոսքերը գրեթե ամբողջությամբ ուղղված են արտաքին (այսինքն՝ սևծովյան տարածաշրջանից դուրս) առևտրային և ֆինանսական գործընկերներին, բացառությամբ մի քանի դեպքերի, ինչպես օրինակ՝ հունական տնտեսական նախաձեռնությունները հարևան (սևծովյան ավազանի) երկրներում: Բոլոր երկրները, բացի Ռուսաստանից և Ուկրաինայից, համաշխարհային առևտրում ունեն բացասական հաշվեկշիռ: Պակասուրդը կազմում է ՀՆԱ-ի մոտ 38%-ը: Երկրներից շատերում այս բացասական հաշվեկշիռն աճում է, բացառությամբ Ռուսաստանի, որտեղ ավելցուկն էական է և վերջին տարիներին փոքր-ինչ մեծանում է: Սևծովյան ավազանի ներքին առևտրի բաժինը շատ սահմանափակ է և բաղկացած է հիմնականում էներգիայի վաճառքից:

Աղյուսակ 2.7 – Առևտրային հաշվեկշռի (արտահանում – ներմուծում) տոկոսը ՀՆԱ-ի կազմում

	2002	2003	2004	2005
Հայաստան	-18	-18	-15	-13
Ադրբեջան	-7	-24	-24	3
Բուլղարիա	-7	-9	-10	-16
Վրաստան	-13	-14	-12	-12
Մոլդովայի Հանրապետություն	-25	-34	-31	-38
Ռուսաստանի Դաշնություն	11	11	13	13
Թուրքիա	-2	-4	-6	-7
Ուկրաինա	4	3	7	1
Ռումինիա	-6	-7	-9	-10
Հունաստան	-9	-9	-9	-7
Եվրոյի գոտի	3	2	2	1

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. զարգացման ցուցանիշներ

Բարձր տեխնոլոգիաներ արտահանելու գործընկեր երկրների կարողությունը դեռևս շատ է հետ մնում ԵՄ միջին ցուցանիշից: Միակ բացառություն կազմող երկրներն են Ռուսաստանը և Հունաստանը: Վրաստանը նույնպես ունի շատ բարձր ցուցիչ, սակայն դա, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Վրաստանում այդ ցուցանիշն ունի վիճակագրական այլ կառուցվածք և այդ երկրից սահմանափակ թվով ապրանքներ են արտահանվում:

Աղյուսակ 2.8 - Բարձր տեխնոլոգիաների արտահանման տոկոսը ընդհանուր արտահանման կազմում

	2002	2003	2004	2005
Հայաստան	1	1	1	1
Ադրբեջան	8	5	2	1
Բուլղարիա	4	4	4	5
Վրաստան	44	18	38	23
Մոլդովայի Հանրապետություն	5	3	4	3
Ռուսաստանի Դաշնություն	13	19	9	8
Թուրքիա	2	2	2	2
Ուկրաինա	5	7	6	4
Ռումինիա	3	4	3	3
Հունաստան	12	12	11	10
Եվրոյի գոտի	16	16	16	16

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. զարգացման ցուցանիշներ

Գրավչությունը օտարերկրյա ուղղակի ներդրումների համար

Արտաքին մակրոտնտեսական հավասարակշռությունը ներկայումս պահպանվում է մի շարք առանցքային գործոնների շնորհիվ, որոնք հավասարակշռում են առևտրային համատարած պակասուրդը: Այդ դրական գործոններից առաջինն օտարերկրյա ուղղակի ներդրումներն են (ՕՈՒՆ), որոնց անմիջապես հետևում են արտագաղթածների կատարած փոխանցումներն իրենց երկրներ:

ՕՈՒՆ-ի ազդեցությունը էական է տնտեսական զարգացման արագացման, տեխնոլոգիապես զարգացած գործունեության տեսակների ընդլայնման և այն գործոնների հավասարակշռման վրա, որոնց հետևանքով արտագաղթում է առավել հմուտ և կիրթ աշխատուժը: Տարածաշրջանի բոլոր երկրներն ապահովել են ՕՈՒՆ-ի ներգրավման համար գրավիչ միջավայր, ինչի մասին վկայում է ՀՆԱ-ի կազմում ՕՈՒՆ-ի տոկոսային այնպիսի ցուցանիշը, որը շատ ավելի բարձր է ԵՄ միջին ցուցանիշից: Ավելին, բոլոր երկրներում վերջին հինգ տարիների ընթացքում այդ ցուցանիշի աճ է գրանցվել: Հունաստանի վիճակագրական ցուցանիշներից երևում է, որ ՀՆԱ-ի կազմում ՕՈՒՆ-ի տոկոսային ցուցանիշը գտնվում է ԵՄ միջին ցուցանիշի մակարդակի վրա:

ՕՈՒՆ-ը հիմնականում ուղղվում է բնական ռեսուրսների շահագործմանը, էներգահամակարգերի ցանցային ենթակառուցվածքի կառուցմանը և, որն ամենակարևորն է, արտադրական գործարանների ստեղծմանը: Վերջինս պայմանավորված է տարածաշրջանում առկա աշխատուժի մրցունակությամբ, հմուտ աշխատուժի առկայությամբ, որակյալ աշխատուժի մատչելիությամբ և աշխատավարձերի շատ ցածր մակարդակով: Այդ մասին ավելի մանրամասն կնկարագրվի ստորև ներկայացվող բաժնում, որը վերաբերում է աշխատանքի շուկային:

Աղյուսակ 2.9 – Օտարերկրյա ուղղակի ներդրումների տոկոսը ՀՆԱ-ի կազմում

	2002	2003	2004	2005
Հայաստան	4,66%	4,31%	6,12%	5,27%
Ադրբեջան	22,33%	45,15%	40,97%	13,37%
Բուլղարիա	5,81%	10,52%	10,92%	9,81%
Վրաստան	4,93%	8,52%	9,74%	7,03%
Մոլդովայի Հանրապետություն	5,06%	3,72%	3,30%	6,81%
Ռուսաստանի Դաշնություն	1,00%	1,84%	2,62%	1,98%
Թուրքիա	0,62%	0,73%	0,95%	2,70%
Ուկրաինա	1,63%	2,84%	2,65%	9,42%
Ռումինիա	2,50%	3,10%	8,53%	6,73%
Հունաստան	0,04%	0,76%	1,01%	0,28%
Արժույթի եվրոպական միություն	0,04%	0,76%	1,01%	0,28%

Համաշխարհային բանկ. զարգացման ցուցանիշներ

Հետագա տարիներին տվյալ իրավիճակի զարգացմանը խոչընդոտող հիմնական երկու գործոնները կարող են լինել մրցակցությունն այլ տարածաշրջանների կողմից, հատկապես՝ Ասիայից, աշխատուժի ծախսերի և բնական ռեսուրսների առումով, ինչպես նաև վերսկսվող քաղաքական և տնտեսական անկայունությանն առնչվող ռիսկը: Ռումինիայի և Բուլղարիայի անդամակցությունը ԵՄ-ին կարող է ՕՈւՆ-ների հոսքերի վրա ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցություն: Մի կողմից այս երկրներում նկատվում է ընդհանուր կայունության և օրենսդրական բազայի բարելավման միտում, սակայն, մյուս կողմից այդ երկրների աշխատանքի շուկաների առավել սերտ ինտեգրումը ԵՄ–ին հավանաբար կհանգեցնի աշխատուժի ծախսերի: Այս գործոնները կարող են նաև հանգեցնել ներդրումային հոսքերի որոշ մասի փոխանցմանը դեպի սևծովյան ավազանի այլ տարածաշրջաններ:

Աշխատանքի շուկա

Սևծովյան ավազանի աշխատանքի շուկայում, միջինում, բնակչության[17] մոտ կեսը աշխատունակ է: Զբաղվածության մակարդակը մոտ է 45%–ի, ինչը գրեթե 20%-ով ցածր է ԵՄ միջին ցուցանիշից, որը 2005 թվականին կազմել է 65%: Այս միջին ցուցանիշը քողարկում է ընդգրկված 10 երկրների միջև առկա զգալի տարբերությունները. Հայաստանում և Մոլդովայի Հանրապետությունում գրանցվել է զբաղվածության ամենացածր, իսկ Վրաստանում և Ուկրաինայում՝ ԵՄ միջինին մոտ ամենաբարձր մակարդակը:

Գործազրկությունը կազմում է աշխատունակ բնակչության միջինում 9.1%-ը, որը բավականին մոտ է ԵՄ միջինին (2005 թվականին այն կազմում էր 7.9% ԵՄ 15 երկրների և 8.8% ԵՄ 25 երկրների համար), այնուամենայնիվ, տարածաշրջանային մակարդակով կրկին զգալի փոփոխականություն է նկատվում (1.4%-ից մինչև 18.2%): Երկրների միջև առկա այս տարբերությունները բացատրվում են ինչպես կառուցվածքային բազմատարրությամբ (ավանդական արդյունաբերության ճյուղերի մասնաբաժինը, գյուղատնտեսության հատվածի կշիռը), այնպես էլ տնտեսական զարգացման տեմպերով և տարածաշրջանում արտադրական ոլորտների վերակազմավորմամբ (անկում արդյունաբերության պետական ոլորտում, աճ ծառայության և նավթարդյունաբերության ոլորտներում և այլն):Նկատվում են նաև տարիքային և գենդերային անհավասարություններ: Գործազրկությունը հաճախ առավել տարածված է երիտասարդության շրջանում: Դիտարկվող տարածաշրջանում կանանց գործազրկության ցուցանիշը միջինում կազմում է ընդհանուր գործազրկության ցուցանիշի մոտ կեսը, սակայն, տարածաշրջանային մակարդակով առկա են զգալի տարբերություններ՝

[17] Եվրոպական վիճակագրության տարեգիրք 2006-2007թթ. Ներգրավված տարածաշրջանների վիճակագրական ուսումնասիրություն

արտացոլելով աշխատանքի շուկայում կանանց ինտեգրման տարբեր աստիճաններ: Ռուսաստանի, Հայաստանի, Ուկրաինայի և Հունաստանի՝ դիտարկվող շրջաններում կանանց գործազրկության մակարդակը երկուսից երեք անգամ ավելի բարձր է տղամարդկանց գործազրկության մակարդակից, մինչդեռ այն զգալիորեն ցածր է Մոլդովայի Հանրապետությունում և Ռումինիայում, իսկ Թուրքիայում կազմում է ընդհանուր գործազրկության ընդամենը 28%-ը: Այդուհանդերձ, տնտեսական կառուցվածքների զգալի բազմատարրության պարագայում հարկ է զգուշավորությամբ կատարել պետությունների միջև ուղղակի համեմատությունները:

Աշխատավարձերի մակարդակը նույնպես արտացոլում է ազգային տնտեսությունների կառուցվածքը: Միայն Հունաստանում այն մոտ է ԵՄ միջինին: Մյուս բոլոր երկրներում աշխատավարձի միջին մակարդակը կազմում է Հունաստանի մակարդակի 10-25%-ը:

Աղյուսակ 2.10 – Միջին ամսական աշխատավարձեր

	Տարի	Միջին աշխատավարձը եվրոյով
Ադրբեջան	2005	113,3
Վրաստան	2005	91,3
Հայաստան	2005	116,9
Մոլդովայի Հանրապետություն	2005	83,8
Ռուսաստանի Դաշնություն	2005	238,3
Բուլղարիա	2005	161,0
Հունաստան	2004	1315,0
Ուկրաինա	2005	150,8
Ռումինիա	2004	207,7
Թուրքիա	2005	291,9

Աշխատավարձերի այս մակարդակը, աճի և մրցունակության տեսանկյունից առավելություն լինելով հանդերձ, միաժամանակ վտանգ է ներկայացնում կայուն զարգացման համար: Տարածաշրջանում աշխատավարձերի համեմատաբար ցածր մակարդակների ամենակարևոր դրական ազդեցությունն ՕՈՒՆ-երի համար գրավչության բարձրացումն է: Ինչպես վերը նշվեց, ՕՈՒՆ-երն ունեն բավականին զգալի մասնաբաժին տարածաշրջանում կատարվող ընդհանուր ներդրումների կազմում: Եթե չկան այնպիսի խոչընդոտող գործոններ, ինչպիսիք են քաղաքական անկայունությունը, կոռուպցիան և ոչ կատարյալ օրենսդրական բազան, արտադրական ոլորտը գրավիչ կլինի ՕՈՒՆ-ի համար՝ պայմանավորված աշխատուժի ծախսերով, ինչը մրցակցային կարևոր գործոն է համաշխարային շուկայում: Միաժամանակ, աշխատավարձերի շատ ցածր մակարդակը և ԵՄ աշխատանքի շուկային մոտ գտնվելու հանգամանքը մեծապես խթանում են օրինական և ապօրինի միգրացիան: Միգրացիան հաճախ ընդգրկում է առավել հմուտ աշխատողներին և աշխատունակ բնակչության առավել դինամիկ զանգվածը:

Ենթակառուցվածքը

Հանրային ենթակառուցվածքի ակտիվներն արտացելում են հետևյալ երեք հիմնական գործոնների ազդեցությունը.

- Գործընկեր երկրների տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունը ԵՄ մակարդակից,
- 1990-ականներից սկսված բարեփոխումների արդյունքում ի հայտ եկած արագընթաց տնտեսական աճի և ազգային տնտեսությունների վերակազմավորման գործընթացը,
- Եվրոպական և ասիական տնտեսությունների ընդլայնվող ինտեգրումը:

Այս գործոնները վերջին տարիների ընթացքում հանգեցնում են սևծովյան ավազանում միջազգային տրանսպորտային հոսքերի զգալի ավելացմանը, ինչպես նաև միջազգային փոխադրումների տնտեսական արդյունավետության հետ կապված նոր պահանջների առաջադրմանը: Դրական միտումներ են գրանցվել տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման ոլորտում, սակայն տարածաշրջանում տրանսպորտը դեռևս կարիք ունի համակցված փոխադրումների և մատակարարման ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման, և դրա զարգացումը դանդաղում է տրանսպորտային համակարգերին առնչվող տեղեկատվական տեխնոլոգիաների ցածր մակարդակի հետևանքով:

Բացառությամբ Թուրքիայի՝ ճանապարհների շահագործման ցուցանիշը, որը չափվում է տոննա-կմ/կմ-ով, դեռևս ԵՄ այլ երկրներից շատ ցածր է: Մյուս կողմից, ուղևորների թիվը մեկ կմ-ի վրա արդեն շատ ավելի մոտ է ԵՄ որոշ երկրների միջին ցուցանիշին:

Գծանկար 2.11 – ճանապարհների շահագործումը



Աղբյուր: Ա. Փիրս, Սևծովյան տարածարջանում ճանապարհային ենթակառուցվածքի զարգացում. «Սևծովյան տարածաշրջանի տրանսպորտային ցանցի ձևավորում» թեմայով միջազգային երրորդ խորհրդաժողով, Օդեսա, Ուկրաինա, 2004թ. հունիսի 9–11

Սևծովյան ավազանի տարածաշրջանում **տրանսպորտային** համակարգերի և կապերի վերականգնումը միավորում է ազգային տրանսպորտային ծրագրերը և Համաեվրոպական տրանսպորտային միջանցքների զարգացման ծրագրերը: Սևծովյան ավազանի տարածաշրջանում ներկայումս ընթացքի մեջ են տրանսպորտային ցանցերի հետ կապված երեք խոշոր նախաձեռնություններ և գործընթացներ.

- Եվրոպա - Կովկաս - Ասիա տրանսպորտային միջանցքը (TRACECA), որը նախաձեռնվել է 1993 թվականին, և ընդգրկում է սևծովյան և Կենտրոնական Ասիայի 14 երկիր,
- «Կետրոնական տրանսպորտային առանցքը», որն ընդգրկում է Սև ծովի հյուսիսային մասը (կապում է Կենտրոնական Եվրոպան Ուկրաինայի հետ),
- «Հարավ-արևելյան տրանսպորտային առանցքը», որն ընդգրկում է Սև ծովի հարավային մասը (կապում է Բալկանները, Թուրքիան, Կովկասը և Կասպից ծովի ավազանը):

Տարածաշրջանում առկա այլ նախաձեռնություններից են՝

- Բաքվի նախաձեռնությունը, որը սկիզբ է առել 2004 թվականին և կապում է ԵՄ-ի, Սև ծովի և Կասպից ծովի առափնյա պետությունները,
- Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու կառուցման ծրագիրը, որը Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի համատեղ նախաձեռնությունն է,
- Սև ծովի օղակաձև մայրուղին:

Միջպետական գործառնական–ինստիտուցիոնալ շրջանակները, որոնք ներառում են տրանսպորտային միջանցքները, Համաեվրոպական տրանսպորտային տարածքները (PETRA) և այնպիսի նախաձեռնություններ, ինչպիսին է Ծովային մայրուղիների ծրագիրը, թույլ են տալիս դիտարկել և խթանել ուղևորների ու ապրանքների միջազգային փոխադրումը տարածաշրջանային առումով ինտեգրված բազմաֆունկցիոնալ տրանսպորտային ցանցերով:

Տարածաշրջանի ենթակառուցվածքային ներուժը լիարժեք չի օգտագործվում, և առկա որոշ պիտանի ճանապարհներ չեն գործում, ինչպես օրինակ՝ Կարս-Գյումրի երկաթուղին:

Էներգետիկայի ոլորտում սևծովյան տարածաշրջանը ծառայում է որպես ածխաջրածինների փոխադրման Արևելք-Արևմուտք միջանցք՝ Կենտրոնական Ասիան և Կասպից ծովի ավազանը կապելով մայրցամաքային Եվրոպայի հետ: Դա, ի թիվս այլոց, ներառում է Ադրբեջանը Թուրքիային կապող գազի և նավթի խողովակաշարերը (Բաքու-Թբիլիսի-Էրզրում և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան), Թուրքիա– Հունաստան գազի խողովակաշարը՝ Իտալիայի հետ նախատեսվող միակցմամբ (այսպես կոչված ԹՀԻ միակցումը), Հյուսիս-Հարավ միջանցքը (ներառյալ Ռուսաստանը և Թուրքիան կապող գազի խողովակաշարը՝ Bluestream I), ինչպես նաև Սամսուն-Ջեյհան նավթի խողովակաշարը: Սևծովյան ավազանի տարածաշրջանում էներգիայի տարանցիկ փոխադրման ենթակառուցվածքը վճռորոշ ռազմավարական և քաղաքական նշանակություն ունի՝ հաշվի առնելով ԵՄ ներմուծվող էներգիայի ծավալները, որի փոխադրումը գալիք տարիներին ակնկալվում է իրականացնել սևծովյան տարածաշրջանով: 2.12 - 2.15 գծապատկերներում ներկայացվում է այդ խնդիրը: էներգետիկ լրացուցիչ ենթակառուցվածքների զարգացման հեռանկարների միջոցով, ինչպիսիք են, օրինակ, Նաբուկոյի գազի խողովակաշարը, Նավթի համաեվրոպական խողովակաշարը (PEOP կամ Կոնստանտա-Տրիեստ) և Բուրգաս-Ալեքսանդրապոլ նավթի խողովակաշարը, սևծովյան տարածաշրջանը կշարունակի նպաստել տարածաշրջանային և ԵՄ մակարդակով էներգետիկ անվտանգության ամրապնդմանը:

Գծանկար 2.12 – Հում նավթի խողովակաշարերի համար առաջարկվող առանցքային ուղիները



Գծանկար 2.13 – Նավթի խողովակաշարերի քարտեզը[18]

Գծանկար 2.14 – Բնական գազի խողովակաշարերի համար առաջարկվող առանցքային ուղիները



[18] Հատված *Նավթի խողովակաշարերի քարտեզից, ծրագրեր 2007թ. հոկտեմբերի դրությամբ*, էներգետիկ խարտիա՝ հիմնված Գլոբալ էներգետիկ հետազոտությունների կետրոնի քարտեզների վրա:

Գծանկար 2.15 - Բնական գազի խողովակաշարերի քարտեզը[19]

Ինչ վերաբերում է **հեռահաղորդակցություններին,** դիտարկվող տարածաշրջաններում հեռախոսագծերի կամ շարժական կապի մատչելիությունը շատ անհավասար է բաշխված. 2004 թվականին Հայաստանում յուրաքանչյուր 1000 բնակչի հաշվով գրանցված էր 203.3 բաժանորդ, մինչդեռ Հունաստանում՝ 1,465: Այդուհանդերձ, ներդրումների զգալի ավելացում է նկատվում: Օրինակ՝ Հայաստանում 2005 թվականին հեռախոսագծերի թիվը 1000 բնակչի հաշվով արդեն 678.8[20] էր կազմում:

Ինտերնետի մատչելիությունը դեռևս սահմանափակ է. Վրաստանում ինտերնետից օգտվողների թիվը կազմում է 4%, իսկ Բուլղարիայում՝ 28%, մինչդեռ ԵՄ-ում՝ միջինում բնակչության 49%–ը: Ինտերնետի մատչելիությունը, այնուամենայնիվ, արագորեն տարածվում է բոլոր շրջաններում. 2002-2004 թվականների ընթացքում դիտարկվող տարածաշրջաններում ինտերնետից օգտվողների թիվը երկուսից չորս անգամ ավելացել է:

[19] Հատված *Նավթի խողովակաշարերի քարտեզից, ծրագրեր 2007թ. հոկտեմբերի դրությամբ*, էներգետիկ խարտիա՝ հիմնված Գլոբալ էներգետիկ հետազոտությունների կենտրոնի քարտեզների վրա:

[20] Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն:

Աղյուսակ 2.15 – Ֆիքսված հեռախոսագծերի և շարժական կապի բաժանորդների թիվը/1000 բնակիչ

	2001	2002	2003	2004	2005
Հայաստան	182	201	223	260	..
Ադրբեջան	197	210	243	299	397
Բուլղարիա	561	695	808	958	1128
Վրաստան	187	248	302	337	..
Հունաստան	1239	1421	1382	1415	1472
Մոլդովայի Հանրապետություն	203	249	299	391	480
Ռումինիա	360	428	523	673	820
Ռուսաստանի Դաշնություն	281	366	500	780	1119
Թուրքիա	561	606	662	757	868
Ուկրաինա	265	301	368	545	..
Եվրոյի գոտի	1272	1317	1367	1426	1511

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. զարգացման ցուցանիշներ

ԵՄ միջին ցուցանիշի համեմատությամբ՝ **ջրային ենթակառուցվածքի** ոլորտում բնակչության՝ ջրի բարելավված աղբյուրներից և ջրամաքրման կայաններից օգտվելու հնարավորության առումով նկատվում է զգալի տարբերություն: Միջինում, սևծովյան ավազանի բնակչության միայն 86%-ն է օգտվում ջրի բարելավված աղբյուրներից, իսկ քաղաքային բնակչության միայն 91%-ն է օգտվում բարելավված ջրամաքրման կայաններից: Համաշխարհային բանկի վիճակագրության համաձայն՝ Ռումինիայում և Ադրբեջանում ենթակառուցվածքները վատթարագույն վիճակում են, որոնց հետևում են Հայաստանը և Վրաստանը:

Գծանկար 2.16 – Ջրի բարելավված աղբյուրները 2004թ. դրությամբ (օգտվելու հնարավորություն ունեցող բնակչության %-ը)



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. զարգացման ցուցանիշներ
Համաշխարհային բանկ 2006

Կրթությունը, հետազոտությունները և մշակույթը

Սևծովյան ավազանի դիտարկվող տարածաշրջանը բնութագրվում է կրթության բարձր մակարդակով, ընդ որում, աշխատունակ բնակչության ավելի քան 20%-ը ունի համալսարանական կրթություն: Լայն տարածում ունի միջնակարգ դպրոցում ներգրավվածությունը, և, տվյալ դեպքում, միջինում 89%–ը բավականին ներկայացուցչական է ամբողջ տարածաշրջանի համար: Իրավիճակն առավել անհավասարակշռված է բարձրագույն կրթության ոլորտում, քանի որ ներկայիս 44%[21] միջին ցուցանիշը զուգակցվում է երկրների միջև զգալի կրթական տարբերություններով. Ադրբեջանում 18-22 տարեկանների 15%-ն են ուսանող, իսկ Հունաստանում՝ 79%–ը:

Աղյուսակ 2.17 – Ուսանողների թիվը կրթության երրորդ մակարդակում (համապատասխան տարիքային խմբի ընդհանուր թվի կազմում ուսանողների ընդհանուր թվի տոկոսային արտահայտությունը)

	2001	2002	2003	2004	2005
Հայաստան	25	26	25	26	28
Ադրբեջան	16	16	15	15	15
Բուլղարիա	42	40	41	41	..
Վրաստան	39	41	42	41	46
Հունաստան	59	66	72	79	..
Ռումինիա	28	32	36	40	..
Ռուսաստանի Դաշնություն	..	..	65	68	..
Թուրքիա	23	24	28	29	..
Ուկրաինա	53	58	62	66	69
Մոլդովայի Հանրապետություն	32	33	34	37	34
Եվրոյի գոտի	56	57	60	62	..

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. համաշխարհային զարգացման ցուցանիշներ

Դիտարկվող տարածաշրջանի երկրների մեծ մասը գիտության և տեխնոլոգիաների ոլորտում ունի հարուստ ժառանգություն և խոստումնալից ապագա՝ չնայած հանդիպող դժվարություններին, մասնավորապես, կրթական և հետազոտական ենթակառուցվածքներում տեխնոլոգիական առաջընթացին համընթաց շարժվելու առումով: Տարածաշրջանում դերակատարներից մի քանիսը Եվրոպական շրջանակային ծրագրին միանալու միջոցով ներկայումս ներգրավված են ԵՄ հետազոտական աշխատանքներում (Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա և Թուրքիա):

Այնուամենայնիվ, արտահանումների ներկա կազմը վկայում է այն մասին, որ տարածաշրջանի երկրների մեծ մասը տուժում է հետազոտությունների և նորարարությունների ցածր մակարդակից և բնական ռեսուրսների արտահանումից իրենց ծայրահեղ կախվածությունից: Ավելին, այս ցուցանիշը բացասական միտում ունի, ինչը վկայում է այդ երկրներում խորացող շեղումների մասին:

Մշակույթի ոլորտում, դիտարկվող տարածաշրջանի բոլոր երկրները Եվրոպայի խորհրդում իրենց մասնակցության և համագործակցության միջոցով դրսևորում են իրենց հավատարմությունն ընդհանուր արժեքներին: Շատ շրջաններում տեղի են ունենում նաև հասարակական միջմշակութային շփումներ: Դիտարկվող երկրներից շատերում պահպանվում են ազգային հարուստ և կենսունակ ավանդույթները, մասնավորապես,

[21] Համապատասխան տարիքային խմբի անձանց թվի հետ համեմատած, ՄԱԿ-ի վիճակագրություն

ազգային յուրահատուկ երաժշտական գործիքներով երաժշտության ասպարեզում: Պահպանվում են նաև տարբեր արհեստագործական ավանդույթները:

Որոշ շրջաններում կարելի է հանդիպել կարևոր հնագիտական նյութերի և ճարտարապետական հարուստ ժառանգության: Այդ ժառանգությունը գտնվում է հնագիտական և պատմական ուսումնասիրություններն ու հետազոտությունները խթանող միջազգային կազմակերպությունների հովանու ներքո և վերականգնվում է նրանց ջանքերով: Մշակութային առումով Մակեդոնիայի և Թրակիայի ընդլայնված տարածքներն ունեն 9000 տարվա պատմություն (գրված և չգրված)՝ քարե դարի վաղ ժամանակաշրջանից սկսած առ այսօր: Քաղաքակրթությունը տարածաշրջանում սկսել է զարգանալ նեոլիթի ժամանակաշրջանից սկսած՝ կրելով դասական, հելլենիստական, բյուզանդական և օսմանյան դարաշրջանների մշակութային ազդեցությունը: Բազում հնագիտական վայրերը, տաճարները, եկեղեցիները, մենաստանները, մզկիթները, շուկաները, քարավանատները, բնակավայրերը, թանգարանները և գրադարանները, ինչպես նաև ժամանակակից արվեստների զարգացումը վկայում են տարբեր էթնիկ և կրոնական ծագում ունեցող բնակչության համար բնակատեղի դարձած տարածաշրջանի հարուստ մշակութային կյանքի մասին՝ նպաստելով տարածաշրջանը զբոսաշրջության խոշոր կենտրոն դարձնելուն:

Շրջակա միջավայրը և բնության պաշտպանությունը

Շրջակա միջավայրի, մասնավորապես՝ ջրային էկոհամակարգերի պաշտպանությունը, կարող է հեշտությամբ դասվել որպես դիտարկվող շրջանների համար հիմնական ընդհանուր մարտահրավեր: Որպես շրջակա միջավայրի հավասարակշռության վրա ազդող գործոնների չափման առաջին ցուցանիշ կարող է համարվել մեկ միավոր ՀՆԱ-ին բաժին ընկնող էներգիայի սպառումը: Ինչպես երևում է ստորև բերված քարտեզից, գործընկեր երկրների մեծ մասը դեռևս շատ էներգատար է, և այդ ցուցանիշը 3-4 անգամ բարձր է ԵՄ միջինից:

Գծանկար 2.18 – Էներգատարությունը



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. համաշխարհային զարգացման ցուցանիշներ

Արդյունաբերական, քաղաքային և գյուղատնտեսական գործունեությունը սպառնում է բնապահպանական հավասարակշռությանը: Նախկինում Սև ծովը հարուստ էր բազմազան կենդանի ծովային ռեսուրսներով և ձկների զանազան տեսակներով, ինչպես նաև այնպիսի

արժեքավոր կենսամիջավայրերով, ինչպիսին է Դանուբի դելտան, ինչը նպաստում էր կենսաբազմազանությանը: Դրա գեղեցկությունը գրավել է միլիոնավոր այցելուների: Այնուամենայնիվ, 1990-ական թվականների դրությամբ ծովի շրջակա միջավայրը վատթարացել էր կենսաբազմազանության, կենսամիջավայրերի, ռեկրեացիոն արժեքի և ջրի որակի առումով: Աղտոտիչները, այդ թվում՝ ագրոքիմիկատները, թունավոր մետաղները և ռադիոակտիվ նյութերը մթնոլորտային արտանետումների կամ գետերի արտահոսքի միջոցով ներթափանցել են ծով: Մայրցամաքային Եվրոպայի ցամաքային ընդհանուր տարածքի մոտավորապես մեկ երրորդի ջրատար առուները թափվում են Սև ծով Եվրոպայի երկրորդ, երրորդ և չորրորդ ամենախոշոր գետերի՝ Դանուբի, Դնեպրի և Դոնի միջոցով: Մամռակալման հիմնախնդիրը սաստկացել է Սև ծովի՝ գրեթե ամբողջությամբ ցամաքով շրջապատված լինելու հետևանքով:

Ծովային կենդանի ռեսուրսների գերշահագործումը, ինչպես նաև արդյունաբերական գործունեությունը, հանքարդյունաբերությունը, նավթի արդյունահանումը և փոխադրումն էլ ավելի են վատթարացրել ծովի վիճակը: Որոշ երկրներ կոշտ թափոններ են արտանետել ծով կամ մակընթացության և տեղատվության գոտի: Քաղաքային բնակավայրերից չմաքրված կեղտաջրերի արտանետումները և անկատար պլանավորումը քայքայել են ծովափնյա գծի գեղագիտական տեսքը: Ծովը շրջապատող մեծ թվով քաղաքների առկայությունը, որոնցից 155-ի բնակչության թիվը գերազանցում է 50.000-ը, բավական է պատկերացնելու այն բնապահպանական հիմնախնդիրները, որոնք գոյանում են մարդաբնակեցումից:

Գծանկար 2.19 – Ջրի բարելավված աղբյուրների մատչելիությունը



Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. բնապահպանական ցուցանիշներ

Բնապահպանական հիմնական խնդիրները կապված են նաև բոլոր բնակավայրերում որակյալ խմելու ջրի մատչելիության, կոյուղու ցանցերի առկայության, որոշ տարածաշրջաններում օդի և ջրի որակի բարելավման և բնական ռեսուրսների, ինչպես օրինակ՝ անտառների, գետերի, լճերի և ծովի վրա արդյունաբերական գործունեության ազդեցության նկատմամբ հսկողության հետ: Շատ երկրներում ինտենսիվ և անհսկելի տնտեսական վերափոխման գործընթացն իր նախադեպը չունեցող ազդեցությունն է թողել բնական ռեսուրսների և աղտոտվածության վրա: Այս կապակցությամբ, տարածաշրջանի բոլոր երկրների համար օրհասական անհրաժեշտություն է դառնում միջազգային համապատասխան կոնվենցիաներին միանալը:

Աղյուսակ 2.20 – Քաղաքային վայրերի օդում առկա կարծր մասնիկները (PM10 ցուցանիշ) - միջին մակարդակը երկրի կտրվածքով

	2000	2001	2002	2003	2004
Հայաստան	91	88	92	87	69
Բուլղարիա	70	74	69	65	55
Վրաստան	66	51	49	51	45
Մոլդովայի Հանրապետություն	42	40	39	39	39
Ռումինիա	21	22	21	19	16
Ռուսաստանի Դաշնություն	28	26	24	23	20
Ադրբեջան	98	70	66	61	59
Թուրքիա	56	60	56	51	48
Ուկրաինա	29	28	30	30	27
Հունաստան	49	51	48	43	41
Եվրոյի գոտի	28	28	27	26	24

Աղբյուր՝ Համաշխարհային բանկ. բնապահպանական ցուցանիշներ

Տարածաշրջանի շատ երկրներում օդի որակի վճռորոշ ցուցանիշը՝ աղտոտիչ միկրո մասնիկների կոնցենտրացիան օդի մեկ խորանարդ մետրում (PM10-ը)[22], 2-3 անգամ բարձր է եվրոպական երկրների ցուցանիշից:[23]

Տարածաշրջանի չորս երկրները հատող Քուռ և Արազ գետերի բնապահպանական վիճակն արդեն իսկ մեծ մտահոգություն է առաջացնում, քանի որ դրանց ջրերն աղտոտված են վտանգավոր քիմիական նյութերով, օրգանական աղտոտիչներով և կարծր մետաղներով: Թունավոր աղտոտիչներ պարունակող գյուղատնտեսական և արդյունաբերական թափոնների արտանետման աճող ծավալները ոչ միայն հանգեցնում են գետերի ավազաններում բնապահպանական աղետի, այլ նաև վտանգում են Կասպից ծովի եզակի ծովային աշխարհը:

Կարելի է նշել նաև տարածաշրջանի յուրաքանչյուր երկրին բնորոշ՝ շրջակա միջավայրի առանձնահատուկ հիմնախնդիրներ: Օրինակ՝ Հայաստանում, փորձագիտական գնահատման համաձայն, անտառահատումների հսկայական ծավալները հանգեցրել են ժամանակին ընդհանուր հողատարածքի 12%–ը կազմող անտառապատ հատվածի կրճատմանը մինչև ներկայիս 8-9%-ը: Սևանա լճի ջրերն օգտագործվել են էներգիայի արտադրության համար՝ հանգեցնելով ջրի մակարդակի նվազեցմանը, հողի ուժգին քայքայմանն ու անապատացմանը: Ադրբեջանում՝ արդյունաբերական աղտոտումը, քիմիկատների գյուղատնտեսական օգտագործումը և, հատկապես, նավթի արդյունահանման աշխատանքները ստեղծել են բնապահպանական ճգնաժամ Կասպից ծովի շրջակայքում: Բուլղարիայում դեռևս կան շրջաններ, ինչպիսիք են, օրինակ, Տրգովիշյեն և Յամբոլը, որտեղ չկան կեղտաջրերի մաքրման կայաններ: Հունաստանում մտահոգություն առաջացնող հիմնական խնդիրները կապված են կոշտ թափոնների, ջրահեռացման համակարգերի և ջրային ռեսուրսների կառավարման, ինչպես նաև քաղաքաշինության (օրինակ՝ ապօրինի շինարարության) հետևանքով առաջացած հիմնախնդիրների հետ: Սև ծով թափվող՝ գյուղատնտեսական արտադրությունից աղտոտված ջրամբարների ջրերը և ջրահեռացման կայանների պակասը Թուրքիայում սևծովյան տարածաշրջանի ափամերձ շրջանների հիմնական խնդիրներն են: Գետերի կամ ուղղակիորեն ծովի մեջ թափվող կենցաղային և արդյունաբերական չմաքրված կեղտաջրերի հետևանքով առաջացող ցամաքային աղտոտվածությունը նույնպես

[22] Կարծր մասնիկներ (PM), որոնց տրամագիծը տատանվում է 10 նանոմետրից 100 միկրոմետրի սահմաններում: PM10-ը կիրառվում է՝ նկարագրելու համար 10 միկրոմետր չափ ունեցող մասնիկները, սահմանում ըստ WIKIPEDIA բառարանի,

[23] Ըստ Համաշխարհային բանկի տվյալների բազայի, բնապահպանական ցուցանիշների միակ համադրելի շրջանների համախումբը եվրոգոտին է, որը բաղկացած է եվրոն ընդունած 12 երկրներից:

բացասաբար է անդրադառնում ծովային միջավայրի, կենդանական և բուսական աշխարհի և մարդու առողջության վրա:

Չնայած Սև ծովի ավազանի շրջակա միջավայրի հավասարակշռությանը սպառնացող բազմաթիվ լուրջ մարտահրավերներին, տարածաշրջանը դեռևս հարուստ է բնական և կենսաբանական ռեսուրսներով: Սև ծովի ափին են գտնվում Եվրոպայի և Կովկասի ամենաարժեքավոր բնության հուշարձաններից մի քանիսը: Դրանցից են՝ դեպի ծով անմիջական ելք ունեցող բոլոր վեց երկրներով ձգվող սևծովյան Ռիվիերան, Դանուբի դելտան, Ղրիմի թերակղզին և Թուրքիայի ափամերձ շրջանները: Ռուսաստանում, օրինակ, Ռոստովի շրջանի տափաստանները, անտառները, Դոնի առափնյա տարածքները և Ազովի ծովի ափագիծը հանդիսանում են մեկ հարյուրից ավելի տարբեր կենդանատեսակների և արժեքավոր ձկների բնակատեղի: Ադիգեայի բարձրադիր սարերում (ավելի քան 3000մ) գտնվող ռելիկտային անտառները և Կրասնոդարի մարզի ծովափը աշխարհագրական եզակի տարածքներ են:

Սևծովյան տարածաշրջանում շրջակա միջավայրի աղտոտվածության ակնհայտորեն միջսահմանային տարածաչափը վերջին 15 տարիների ընթացքում ձևավորել է այս հարցի շուրջ համագործակցության ավանդույթ՝ գոնե առավելագույնս ներազդված առափնյա պետությունների մակարդակով: Կենսածին նյութերի նվազեցմանը և թունավոր նյութերի արտանետումների դադարեցմանն ուղղված միջազգային համագործակցության և քաղաքական կամքի դրսևորման արդյունքում արձանագրվել են որոշակի խոստումնալից արդյունքներ (որոնք դեռևս հաստատման կարիք ունեն) Սև ծովը բնապահպանական խորը ճգնաժամից հանելու ուղղությամբ: Նվազում է գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացող աղտոտվածության մակարդակը, ավազանի վերին հատվածներում վերականգնվում են որպես կենսածին նյութերի ամբարներ ծառայող մակընթացության և տեղատվության գոտիները:

Վերջին մի քանի տարիների ընթացքում ձեռնարկված որոշ միջոցառումների շնորհիվ արդեն հաջողվում է հակազդել շրջակա միջավայրի վատթարացմանը: Բնապահպանական ձեռքբերումների շարքում կարելի է նշել Հայաստանում Սևանա լճի մակարդակի հետևողական բարձրացումը ջրօգտագործման խիստ նորմավորման և Արփա-Սևան թունելի միջով Որոտան գետի ջրերը Սևանա լիճ ուղղելու միջոցով: Բուլղարիայում՝ Սև ծովի ափի երկայնքով ձգվող շրջաններում, վերջին տարիներին մեծ թվով ջրամաքրման կայաններ են կառուցվել՝ Վառնայի շրջանում՝ 11, իսկ Բուրգասի շրջանում՝ 7 կայան: Վրաստանի ընդհանուր հողատարածքի 2.8%-ը ստացել է պաշտպանվող տարածքի կարգավիճակ: Աշխատանքներ են սկսվել ափամերձ մակընթացության և տեղատվության գոտիները պաշտպանելու ուղղությամբ: Հունաստանում՝ Կենտրոնական Մակեդոնիայում են գտնվում NATURA 2000 եվրոպական ցանցի ամենամեծ թվով (40) պաշտպանված տարածքները՝ կազմելով ընդհանուրի 13%-ը, որին հետևում են Արևելյան Մակեդոնիան և Թրակիան՝ 36 վայրերով: Պաշտպանված վայրերը կազմում են տարածաշրջանի ողջ տարածքի 20%-ը:

Սառեցված հակամարտությունները, արդարադատությունը և ներքին գործերը

Ծրագիրն իրականացնող գործընկերները մատնանշել են նաև սևծովյան ավազանի երկրներում առկա որոշ հիմնախնդիրներ, որոնցից են սառեցված հակամարտությունները, կոռուպցիան և կազմակերպված հանցավորությունը: Երկրների մեծ մասի վրա իրենց ազդեցությունն են թողել այդ հիմնախնդիրների հետևանքները, ինչը կարող է զգալիորեն խոչընդոտել տնտեսական և սոցիալական զարգացումը: ԵՄ նորանդամ երկու պետություններում ներդրվել է կոռուպցիայի և կազմակերպված հանցավորության դեմ

պայքարի կատարելագործմանն ուղղված ռազմավարությունը: Մյուս բոլոր գործընկեր երկրները նույնպես նախաձեռնություններ են խթանում այդ ոլորտներում՝ որոշ դեպքերում միջազգային համագործակցության նախաձեռնությունների շրջանակներում, ինչպես օրինակ «Söderköping Process»–ը, որը ներառում է Սևծովյան ծրագրի որոշ գործընկեր երկրներ (Մոլդովայի Հանրապետություն, Ուկրաինա և Ռումինիա):

2.2. ՈՒԹՀՎ (SWOT) վերլուծություն

Տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությամբ պարզված տեղեկությունները ՈՒԹՀՎ վերլուծության միջոցով քննարկվել են գործընկերների հետ՝ վերլուծության և ընտրված նպատակների ու գերակայությունների միջև պարզ տրամաբանական կապ ստեղծելու նպատակով: Դիտարկվել են և՛ ժողովրդագրական ու տնտեսական կառուցվածքների ընդհանուր հատկանիշները, և՛ տնտեսական ու սոցիալական զարգացման միտումները, և՛ բնապահպանական ուղղվածության ծագող հարցերը:

ՈՒԹՀՎ վերլուծության մշակման ընթացքում կիրառվել են 5 հիմնական կանոններ: Դրանք են՝

1. շեշտը դնել մասնակից երկրների կողմից տվյալ շրջաններում առավել հաճախ դիտարկվող խնդիրների վրա՝ հաշվի առնելով, որ որոշ խնդիրներ վերաբերում են դիտարկվող տարածաշրջանի միայն մի մասին, և, հետևաբար, ամբողջ սևծովյան ավազանի տարածաշրջանում առկա առաջնային խնդիրների համեմատ երկրորդական գերակայություն են: Ավելին, որոշ երկրների թույլ կողմերը մյուս երկրների համար որոշ դեպքերում կարող են ուժեղ կողմ լինել.

2. շեշտը դնել տվյալ շրջաններում դիտարկվող տարածաշրջանային նշանակության այն հարցերի վրա, որոնք վերաբերում են միջսահմանային հարաբերություններին և տարածաշրջանի զարգացմանը, և հատկապես այն հարցերի վրա, որոնք արտացոլում են տեղական գործոնները և սկզբնաղբյուրները և այնուհետև կարող են լուծում ստանալ՝ օգտագործելով կամ ներգրավելով տեղական ռեսուրսները.

3. հաշվի առնել հատկապես այնպիսի տարրեր, որոնք կապված են ավազանում առկա ընդհանուր խոչընդոտների և միջտարածաշրջանային փոխներգործության հետ.

4. դասակարգել ՈՒԹՀՎ վերլուծության յուրաքանչյուր կատեգորիայի համար սահմանված թեմաները՝ ամենակարևորի վրա կենտրոնանալու և հետագայում ամենակարևոր նպատակներն ու գերակայությունները սահմանելու համար.

5. Վերլուծությունը սահմանափակել կարևորագույն և հաճախ դիտարկվող տարրերով՝ ՈՒԹՀՎ վերլուծության յուրաքանչյուր մասում վճռորոշ տարրերի սահմանափակ խումբ ձևավորելու համար:

Վերը նշված չափորոշիչների հիման վրա մշակվել է հետևյալ ՈՒԹՀՎ-ն: Սույն ընդհանուր նկարագիրը հիմք է հանդիսացել 4-րդ գլխում ներկայացված նպատակներն ու գերակայությունները մշակելու համար:

Աղյուսակ 2.21 – ՈւԹՀՎ վերլուծություն

Ուժեղ կողմերը	**Թույլ կողմերը**
1. Ռազմավարական աշխարհաքաղաքական դերը և դիրքը առևտրի և աշխատանքի միգրացիայի առումով ԵՄ-ի հիմնական արտաքին սահմանամերձ տարածաշրջաններից մեկը, 2. ԵՄ-ի դարպաս էներգետիկ ռեսուրսների առևտրի համար 3. Օտարերկրյա ուղղակի ներդրումների զգալի ներհոսք 4. Շրջակա միջավայրի բազմազանության մեծ ներուժ և գյուղատնտեսության, տուրիզմի ու ձկնարդյունաբերության ռեսուրսներ 5. ԵՄ անմիջական հարևանությամբ գտնվող մրցակիցների համեմատ էժան աշխատուժ / հմտությունների և կարողությունների բարձր մակարդակ 6. Հարուստ մշակութային ժառանգություն, մարդկային կարողություններ և սոցիալական արժեքներ:	1. Արդյունաբերական և տրանսպորտային ենթակառուցվածքների ցածր որակ 2. Տնտեսական զարգացման ներտարածաշրջանային և միջտարածաշրջանային անհավասարություններ 3. «Փակ ծով»՝ Սև ծովի ֆիզիկական ավազանում առկա արտաքին գործոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա 4. Միգրացիայի հետևանքով ժողովրդագրական անկում 5. Տեղական զարգացման քաղաքականություններն իրականացնելու համար վարչական կարողությունների ցածր մակարդակ 6. Կրթական ենթակառուցվածքների պակաս, նորարարական կենտրոնների ցածր տեխնոլոգիական մակարդակ, 7. Ֆիզիկակլիմայական պայմանների հետևանքով տնտեսական զարգացման խոչընդոտներ, հատկապես Հարավում, ինչպես նաև շրջակա միջավայրի վատթարացում 8. Առևտուրը և մարդկանց ազատ տեղաշարժը խոչընդոտող աշխարհաքաղաքական գործոններ 9. Անվտանգության հարցեր / սառեցված հակամարտություններ, կոռուպցիա, կազմակերպված հանցավորություն:

Հնարավորությունները	Վտանգները
1. 2000 թվականից հետո ՀՆԱ-ի զգալի աճ՝ հարևան տարածաշրջաններում բազմապատիկ ազդեցությամբ 2. Անդամ պետությունների ափամերձ տարածքների մեծ մասի համար մատչելի կդառնան Համահարթեցման քաղաքականության միջոցները 3. Բարելավվող քաղաքական և տնտեսական կայունություն, որը կմեծացնի օտարերկրյա ուղղակի ներդրումների համար գրավչությունը 4. Զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի աճ, որը հնարավորինս կընդգրկի բոլոր ափամերձ շրջանները, 5. Համաեվրոպական տրանսպորտային առանցքների, նավթի/գազի խողովակաշարերի մասով ծրագրված խոշոր ներդրումներ 6. Նոր մեթոդաբանությունների կիրառում կրթության, վերապատրաստման և շարունակական ուսուցման ոլորտներում՝ հաղթահարելու ֆիզիկական և կառուցվածքային խոչընդոտները (օր.՝ Բոլոնիայի գործընթաց, ՏՀՏ, ՄԿՎ բարեփոխում) 7. Սև ծովի ափամերձ շրջանների միջև Համաշխարհային գործընկերության նախաձեռնությունների կողմից խթանվող կապերի ամրապնդում:	1. Վերադարձ դեպի տնտեսական և քաղաքական գործոններով պայմանավորված մակրոտնտեսական անկայունություն (օրինակ՝ նավթի գները) 2. Առավել հմուտ աշխատողների միգրացիա դեպի ԵՄ-ի արդյունաբերական երկրներ 3. Մրցակցություն նոր զարգացող արդյունաբերական երկրների կողմից՝ արդյունաբերության զարգացման և օտարերկրյա ուղղակի ներդրումներ գրավելու առումով 4. Արտաքին գործոններով պայմանավորված՝ շրջակա միջավայրի շարունակական վատթարացում, 5. ԵՄ-ի անդամ և հարևան երկրների միջև աճող անհամապատասխանություններ՝ մաքսային, ընդհանուր շուկայի և աշխատուժի շարժունակության հարցերում 6. Տեղական հակամարտությունների, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, ահաբեկչության աճող սպառնալիքներ 7. Սառեցված հակամարտությունների, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, ահաբեկչության հիմնախնդիրները լուծելու կամ դրանց դեմ պայքարի միջոցառումների հետաձգում:

3 Համապատասխանությունը այլ ծրագրերին և առկա ռազմավարություններին

ԵՀԳԳ ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագիրն արժևորվում է մյուս ծրագրերը և նախաձեռնությունները փոխլրացնելու շնորհիվ: Այն ստեղծում է համագործակցության մի նոր բնագավառ՝ ուղղված սևծովյան ափամերձ և հարակից շրջանների համար ընդհանուր գերակայություններին:

Այս շրջաններում գործող համագործակցության և զարգացման ծրագրերն իրենց բազմազանությամբ և տարբեր կարգավիճակներով արտացոլում են սևծովյան ավազանում առկա հսկա սոցիալ-տնտեսական, մշակութային և քաղաքական տարբերությունները: ԵՀԳԳ ՄՍՀ ծրագիրը կհիմնվի այդ բազմաբնույթ նախաձեռնությունների վրա և կլրացնի դրանք ազգային, միջսահմանային և միջազգային մակարդակներում: Այն նաև կինտեգրվի և կնպաստի ԵՄ «Սևծովյան համադաշնեցում» տարածաշրջանային համագործակցության նոր նախաձեռնությանը:

3.1 Համապատասխանությունը այլ միջազգային նախաձեռնություններին և միջսահմանային ծրագրերին

ԵՄ «Սևծովյան համադաշնեցում» տարածաշրջանային համագործակցության նախաձեռնությունը

ԵՄ-ի քաղաքականության երեք ճյուղեր նպաստում են սևծովյան տարածաշրջանի համագործակցության ծրագրերին. դրանք են՝ նախաանդամակցային գործընթացը Թուրքիայի համար, Եվրոպական հարևանության քաղաքականությունը Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի համար, և Ռազմավարական գործընկերությունը Ռուսաստանի հետ: Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) շրջանակներում ԵՀ-ն 2007 թվականի ապրիլի 11-ին ընդունեց «Սևծովյան համադաշնեցում - Տարածաշրջանային համագործակցության նոր նախաձեռնություն՝ սևծովյան ընդլայնված տարածաշրջանում ԵՀՔ-ն որոշակիացնելու և ամրապնդելու համար» հաղորդագրությունը: Ընդհանուր գործերի և արտաքին հարաբերությունների խորհրդի 2007 թվականի մայիսի 14-ի և Եվրոպական խորհրդի 2007 թվականի հունիսի 22-ի եզրակացություններով հաստատված՝ Հանձնաժողովի հաղորդագրությունը միտված է զարգացնելու համագործակցությունը սևծովյան տարածաշրջանի ներսում և Եվրոպական միության հետ, խթանելու համագործակցության ընթացիկ գործընթացները, բարելավելու համադաշնեցումը տարածաշրջանային մարմինների հետ և խորացնելու տարածաշրջանային համագործակցությունը միջսահմանային կարևորություն ունեցող այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են.

1. Ժողովրդավարությունը, հարգանքը մարդու իրավունքների հանդեպ և պատշաճ կառավարումը,
2. Տեղաշարժի կառավարումը և անվտանգության բարելավումը,
3. «Սառեցված հակամարտությունները»,
4. Էներգետիկան,
5. Տրանսպորտը,
6. Շրջակա միջավայրը,
7. Ծովային քաղաքականությունը,
8. Ձկնարդյունաբերությունը,
9. Առևտուրը,

10. Հետազոտությունների և կրթության ցանցերը,
11. Գիտությունը և տեխնոլոգիան,
12. Զբաղվածությունը և սոցիալական հարցերը,
13. Տարածաշրջանային զարգացումը:

Համագործակցության այս ոլորտներն աջակցություն են ստանում ԵՄ բազմաթիվ ծրագրերից, այդ թվում՝ ԵՄ անդամ պետություններին տրամադրվող ԵՏԶՀ-ի միջոցներից, ԵՀԳԳ-ի ազգային, տարածաշրջանային և միջսահմանային ծրագրերից, ինչպես նաև ոլորտային այլ նախաձեռնություններից:

ԵՀԳԳ ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագրի ռազմավարությունը համապատասխանում է ԵՄ-ի «Սևծովյան համադաշնեցում» տարածաշրջանային նախաձեռնությանը, չնայած որ գերակայությունների և համագործակցության շրջանակների առումով ակնհայտորեն պակաս հավակնոտ է: Այն կօժանդակի Սևծովյան համադաշնեցման համագործակցության 1-ին, 6-13-րդ բաժիններին՝ ակնհայտորեն շեշտը դնելով քաղաքացիական հասարակության և տեղական մակարդակով միջսահմանային համագործակցության վրա:

Ակնկալվում են ԵՀԳԳ-ՄՍՀ-ի հետ նույն ծրագրային մակարդակում գտնվող համադաշնեցումներ, մասնավորապես, «տեղական, միջանձնային համագործակցության խթանման» ծրագրային նպատակների գծով, ինչպես նաև հետազոտական և կրթական ոլորտներին ուղղված՝ ԵՄ ՏԵՄՊՈՒՍ ծրագրի, էրազմուս Մունդուս արտաքին համագործակցության պատուհան ծրագրի (Erasmus Mundus external cooperation window), Հետազոտությունների 7-րդ շրջանակային ծրագրի հետ: ՀՂՄ/ՀՏՔ-ը նաև մշտական կապ կպահպանեն DABLAS–ի հետ՝ Աշխատանքային հանձնախումբ, որը ստեղծվել է 2001 թվականին՝ նպատակ ունենալով հիմքեր ստեղծել Դանուբի և սևծովյան տարածաշրջանի ջրի և ջրային էկոհամակարգերի պաշտպանությանն ուղղված համագործակցության համար: Վերջինս կոչված է ապահովելու «Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանման նպատակով ռեսուրսների և կարողությունների համախմբում» ծրագրային գերակայության շրջանակներում տրամադրվելիք օժանդակության համակարգումը:

Համապատասխանությունը միջազգային այլ ծրագրերին և նախաձեռնություններին

Սևծովյան ավազանի երկրները միջազգային տարբեր ծրագրերի և նախաձեռնությունների շրջանակներում ակտիվորեն համագործակցում են, ինչը պետք է հաշվի առնվի ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի ընթացքում՝ ծրագրային կրկնություններից խուսափելու և փոխլրացումն ապահովելու նպատակով:

ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի ընթացքում **Եվրոպայի խորհրդի** շրջանակներում կիրականացվեն երեք հիմնական նախաձեռնություններ.

- **Սևծովյան եվրատարածաշրջան** ստեղծելու վերաբերյալ նախաձեռնությանը սկիզբ դրվեց 2006 թվականի մարտին Ռումինիայի Կոնստանցա քաղաքում կայացած Միջտարածաշրջանային համագործակցության վերաբերյալ միջազգային համաժողովում: Այս նախաձեռնության նպատակն է հզորացնել տարածաշրջանային համագործակցությունը՝ բնական ռեսուրսները պաշտպանելու, համատեղ ծրագրերի միջոցով սոցիալական ինտեգրումն ամրապնդելու և մշակութային համագործակցության և փոխանակման համար հիմքեր ապահովելու նպատակով: Նախաձեռնության շրջանակներում ընդգրկված են ԵՀԳԳ–ՄՍՀ սևծովյան տարածաշրջանային ծրագրին մասնակցող բոլոր երկրները, հետևաբար, գործողությունների փոխլրացման անհրաժեշտությունը և ներուժը մեծ է: Սևծովյան եվրոտարածաշրջանի համար

ընտրված համագործակցության ոլորտները՝ ունենալով միանման գերակայություններ, արտացոլում են ծրագրային գործընթացների հետ կապված համատեղ գործողությունների իրականացման ներուժը:

- **Կիևի նախաձեռնությունը** Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության և Ուկրաինայի միջև մշակութային համագործակցության տարածաշրջանային ծրագիր է, որը սկսվել է 2006 թվականի դեկտեմբերին: Այն նպատակաուղղված է մշակութային և բնական ժառանգության ոլորտներում միջոցառումներ իրականացնելու միջոցով երկխոսության խթանմանը, ժողովրդավարության զարգացմանը և մշակութային բազմազանության նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանը:
- **Մշակութային կապիտալի ստեղծում (ՄԿՍ)** ծրագիրը մշակութային զբոսաշրջության և ձեռներեցության ոլորտներում քաղաքականություն և կառավարման գործիքներ մշակելու միջոցով աջակցում է մշակութային բազմազանությանը և ստեղծագործական զարգացմանը: Մասնակից երկրներն են՝ Բուլղարիան, Ռուսաստանը, Ուկրաինան, վերջերս միացան նաև Հունաստանն ու Ադրբեջանը, իսկ Թուրքիան նույնպես մեծապես շահագրգռված է այս ծրագրին մասնակցելու հարցում: Այս նախաձեռնության հետ համադաշնեցումը կարող է իրականացվել ծրագրային մակարդակով՝ ծրագրի Գերակայություն 3-ի, ինչպես նաև Գերակայություն 1-ի շրջանակներում, որոնք ուղղված են զբոսաշրջության և տեղական տնտեսական զարգացման վրա մշակույթի ազդեցությանը:

Ավելին, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիրը (ՄԱԿ-ի ԶԾ) Հունաստանի և Թուրքիայի հետ համատեղ իրականացնում է 2007 թվականի հունվարից երեք տարի ժամկետով սկսվող **Սևծովյան տարածաշրջանում առևտրի և ներդրումների խթանման ծրագիրը,** որի նպատակը ներտարածաշրջանային առևտրի և ներդրումային կապերի ընդլայնումն է: Այս ծրագրից կարող են բխել համապատասխան համադաշնեցումներ, հատկապես, տեղական զարգացումը կարևորող Գերակայություն 1-ի շրջանակներում, որտեղ պետական և մասնավոր նախաձեռնություններում կատարվող ներդրումների համար բարենպաստ գործարար միջավայրի ստեղծումը հանդիսանում է առանցքային ոլորտներից մեկը:

ՏՀԶԿ զարգացման կենտրոնը դոնորների (հիմնականում Հունաստանի, Ռումինիայի և Թուրքիայի) ֆինանսական օժանդակությամբ, մշակելու է **Սև ծովի և Կենտրոնական Ասիայի տնտեսական հեռանկարներ (ՍԾԿԱՏՀ)** ծրագիրը՝ խթանելու տնտեսական գործունեության և հիմնական քաղաքականությունների պարբերական դիտանցման և գնահատման անցկացումը Սև ծովի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջաններում, հեշտացնելու տեղեկատվության տրամադրումը և փաստերի վրա հիմնված՝ միջազգային և ազգային մակարդակով քաղաքական երկխոսության գործընթացը, ինչպես նաև օժանդակելու կարողությունների հզորացմանը՝ ընտրված տարածաշրջանային հաստատությունների և հետազոտական ինստիտուտների ցանցերի հետ միասին հիմնելով ռազմավարական գործընկերություններ:

Տարածաշրջանային համագործակցության Սևծովյան միավորումը ստեղծվել է 2006 թվականի հունիսին ԱՄՆ-ի German Marshall Fund հիմնադրամի կողմից: Այն տրամադրելու է դրամաշնորհներ, որոնք ուղղված կլինեն սևծովյան տարածաշրջանում ժողովրդավարության ամրապնդմանը և քաղաքացիական հասարակության զարգացմանը: Դրամաշնորհները տրամադրվելու են երկու ծրագրերի միջոցով՝ քաղաքացիական մասնակցություն և միջսահմանային համագործակցություն: Վերջինս կաջակցի ներազգային և անդրսահմանային համագործակցությանը կառավարությունների, ՀԿ-ների, քաղաքացիական նախաձեռնությունների և այն հաստատությունների միջև, որոնք աշխատում են ապահովել կայունությունը և համագործակցությունը ողջ տարածաշրջանում: Միջսահմանային դրամաշնորհային այս

համակարգը կարող է համադաշնեցման հնարավորություն ստեղծել ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագրային այն նախագծերի հետ, որոնք իրականացվում են Գերակայություն 3-ի շրջանակներում, սակայն այստեղ ևս առկա է ծրագրային կրկնությունների վտանգը: Այդ վտանգը հաշվի կառնվի ՀՂՄ-ի կողմից:Միջազգային այլ կազմակերպություններ, ինչպիսիք են՝ **ԱՄՆ ՄԶԳ-**ն և **ՄԱԿ-ի գործակալությունները,** պարբերական կարգով օժանդակություն են տրամադրում ծրագրերին՝ հիմնականում կենտրոնանալով կառուցվածքային բարեփոխումների և աղքատության հաղթահարման վրա:

Համապատասխանությունը սևծովյան ավազանի երկրների տարածաշրջանային համագործակցության այլ ծրագրերին

Սևծովյան ավազանի երկրների մեծ մասն արդեն իսկ, տարբեր նախաձեռնությունների միջոցով, ձեռք են բերել տարածաշրջանային բազմակողմ համագործակցության փորձ: Այդ համագործակցությունը վկայում է տեղական խնդիրների նկատմամբ տարածաշրջանային մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության մասին:

Սևծովյան ավազանում համագործակցության հիմնական նախաձեռնությունը 1992 թվականին ստեղծված **Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունն է** (ՍԾՏՀ): Այն ունի տարածաշրջանային ավելի լայն մասշտաբներ, քան ԵՀԳԳ–ՄՍՀ ծրագիրը, քանի որ **ներկայումս** միավորում է տասներկու պետություն. Ալբանիայի Հանրապետություն, Հունաստանի Հանրապետություն, Բուլղարիա, Մոլդովայի Հանրապետություն, Ռումինիա, Վրաստան, Ռուսաստանի Դաշնություն, Սերբիայի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Թուրքիայի Հանրապետություն և Ուկրաինա: Այդ կազմակերպության համագործակցության հիմնական ոլորտներն ընդգրկում են՝ առևտուրը և տնտեսական զարգացումը, տրանսպորտը, էներգետիկան, հանցավորության դեմ պայքարը, զբոսաշրջությունը, փոքր և միջին ձեռնարկությունները (ՓՄՁ–ները), կապը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, գիտությունն ու տեխնոլոգիան, ինչպես նաև կրթությունը: Այս համագործակցության օրինակներից են աջակցությունն այնպիսի ծրագրերին, ինչպիսին է Սև ծովի «Ծովային մայրուղիներ» ծրագիրը, ինչպես նաև «Սև ծովի օղակաձև մայրուղի» ծրագրի մշակումը: Նախատեսվում է աշխատանքներ իրականացնել նավթային աղտոտումը կանխելու, ինչպես նաև ածխաջրածնային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը հնարավոր դարձնելու ուղղությամբ: Ստորագրվել է համաձայնագիր բնական և մարդածին աղետների դեպքում համագործակցության մասին, և տարվում են դրա իրականացման աշխատանքներ:

ՍԾՏՀ-ն ունի Ստամբուլում գտնվող մշտական Քարտուղարություն, Գործարար խորհուրդ և Խորհրդարանական վեհաժողով (ՍԾՏՀԽՎ), որը տարբեր ոլորտներին առնչվող առաջարկություններ է ընդունում՝ սկսած տնտեսական ինտեգրման խթանումից մինչև կազմակերպված հանցավորության դեմ պայքար: ՍԾՏՀ-ի կողմից ստեղծված ծրագրերի Զարգացման հիմնադրամը ֆինանսավորում է սևծովյան ավազանի տարածաշրջանում իրականացվելիք հնարավոր ծրագրերի տեխնիկատնտեսական ուսումնասիրությունները, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել համադաշնեցում ԵՀԳԳ–ՄՍՀ սևծովյան տարածաշրջանային ծրագրի հետ: Սալոնիկում գտնվող **Առևտրի և զարգացման սևծովյան բանկը** միջազգային ֆինանսական հաստատություն է, որը հիմնվել է Ալբանիայի, Հայաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Ռուսաստանի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից: Այն համարվում է ՍԾՏՀ-ի գլխավոր ֆինանսական հենասյունը: Բանկն աջակցություն է ցուցաբերում տնտեսական զարգացմանը և տարածաշրջանային համագործակցությանը,

իրականացնելով առևտրի և ծրագրերի ֆինանսավորում, ինչպես նաև իր անդամ երկրների պետական և մասնավոր ձեռնարկությունների զարգացման օժանդակող ծրագրերի համար տրամադրելով երաշխիքներ և միջոցներ:

Աթենքում տեղակայված Սևծովյան ուսումնասիրությունների միջազգային կենտրոնը (ՍՈՒՄԿ), ՍԾՏՀ-ի հետ կապակցված տարածաշրջանային գիտահետազոտական կենտրոն է, որը ղեկավարվում է Տնօրենների միջազգային խորհրդի կողմից՝ ներկայացնելով ՍԾՏՀ-ի անդամ տասներկու պետություններ: Կենտրոնը մշակել է սևծովյան հետազոտությունների ցանց, որի նպատակը սևծովյան ավազանի հետազոտական կառույցների միջև հայեցակետերի և փորձի փոխանակումն է: Սևծովյան մայրաքաղաքների ղեկավարների և քաղաքապետերի միությունը (ՍԾՄՄ)՝ ստեղծված ՍԾՏՀԽՎ–ի հովանու ներքո, ներազգային մակարդակով տարածաշրջանային համագործակցության նախաձեռնություն է: Միությունը կարող է օգտակար ֆորում լինել ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրերի արդյունքների տարածման համար:

ԵՀ դիտորդի կարգավիճակ ստացած ՍԾՏՀ-ն ողջունում է ՍԾՏՀ-ի անդամ երկրների մասնակցությունը ԵՄ նախաձեռնություններին, մասնավորապես՝ 2007-2013 թվականների ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան տարածաշրջանային ծրագրին և ԵՄ-ին առաջարկեց անցկացնել նախարարների մակարդակով հանդիպում՝ սևծովյան համադաշնության գործընթացը սկսելու համար: ՍԾՏՀ-ի նպատակները մեծապես համապատասխանում են ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ավազանի միջսահմանային համագործակցության ծրագրի նպատակներին: Կարող են իրականացվել սևծովյան տարածաշրջանում առկա համագործակցության երկու ձևաչափերի համադաշնեցումներ, որոնք աստիճանաբար կարող են ուրվագծել տարածաշրջանային ընդլայնվող համագործակցության շրջանակներ: Սևծովյան համադաշնեցման մասին Հանձնաժողովի հաղորդագրությունը ՍԾՏՀ-ն բնորոշում է որպես երկխոսության համար ԵՄ-ի կարևոր տարածաշրջանային գործընկերներից մեկը և ուղի է հարթում լայնածավալ շփումների համար, ինչը, հավատացած ենք, խթանում է սևծովյան տարածաշրջանում հետագա համադաշնեցումները:

ՍԾՏՀ-ի համագործակցության հիմնական բնագավառների շարքում ԵՀԳԳ-ՄՍՀ–ի հետ համադաշնեցման խոշորագույն բնագավառներն են առևտուրն ու տնտեսական զարգացումը և զբոսաշրջությունը (Գերակայություն 1), շրջակա միջավայրի պաշտպանությունը (Գերակայություն 2) և կրթությունը (Գերակայություն 3):

2006 թվականի հունիսին Բուխարեստում տեղի ունեցած գագաթաժողովում մեկնարկեց **Սևծովյան երկխոսության և գործընկերության ֆորումը:** Հայաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Ուկրաինայի և Թուրքիայի՝ պետությունների և կառավարական պատվիրակությունների ղեկավարների կողմից ընդունված հռչակագիրը նախանշում է ապագա համագործակցության համար գլխավոր ոլորտները, այն է՝ համադաշնեցման և ընդհանուր օրակարգի զարգացում, պատշաճ կառավարման խթանում, հանդուրժողականության ամրապնդում, կայուն զարգացում, շրջակա միջավայրի պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության պլանավորում: Ֆորումը նպատակաուղղված է ոչ թե նոր կառուցվածքի ստեղծմանը, այլ տարածաշրջանում հիմնախնդիրների լուծմանը և արդյունքների ստացմանն ուղղված համագործակցության զարգացմանը: Ֆորումի հավելյալ արժեքը բխում է, տարածաշրջանային գործընկերությունների և ցանցերի խթանման նպատակով, կառավարական և միջկառավարական դերակատարների հետ մեկտեղ նաև բազմաթիվ այլ շահագրգիռ կողմեր ներգրավելու վրա կենտրոնանալուց, ինչպիսիք են՝ քաղաքացիական հասարակությունը, գործարար հատվածը, գիտնականները և զանգվածային լրատվամիջոցները:

Վերջին 15 տարիների ընթացքում սևծովյան վեց առափնյա երկրները (Բուլղարիա, Վրաստան, Ռումինիա, Ռուսաստան, Թուրքիա և Ուկրաինա) ակտիվ համագործակցել են բնապահպանության ոլորտում՝ արտացոլելով Սև ծովի շրջակա միջավայրի վատթարացմանը համատեղ ուժերով դիմակայելու անհրաժեշտությունը: Ստամբուլում մշտական Քարտուղարություն ունեցող՝ **Սև ծովն աղտոտվածությունից պաշտպանելու հարցերով հանձնաժողովը** գործում է որպես Սև ծովն աղտոտվածությունից պաշտպանելու մասին կոնվենցիայի (1992 թվականին ընդունված) և Սևծովյան ռազմավարական գործողությունների ծրագրի (1996 թվականին ընդունված, 2002 թվականին վերանայված) իրականացումը համակարգող կառույց: Որպես հիմնական խնդիրներ ընդգծվել են աղտոտվածության ցամաքային աղբյուրները, օտարածին տեսակների ներմուծումը և ռեսուրսների ոչ ճիշտ կառավարումը: Ներկայացվել են կայուն զարգացման, նախազգուշության սկզբունքի և կանխարգելիչ միջոցառումների հասկացությունները, որոնցից են արտակարգ իրավիճակների կառավարումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և բնապահպանական ռազմավարական գնահատումը: ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ծրագիրը հիմնվելու է կուտակված փորձի վրա և փնտրելու է ընթացիկ գործընթացների հետ համադաշնեցման հնարավորություններ, մասնավորապես, Գերակայություն 2-ի՝ «Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանման համար ռեսուրսների և կարողությունների փոխանակման» շրջանակներում իրականացվող միջոցառումների մասով:

Վերջին տարիների ընթացքում մշակվել են մի քանի այլ նախաձեռնություններ՝ ապացուցելով միջսահմանային համագործակցության բեղմնավոր միջավայրի առկայությունը: Սահմանապահ ծառայությունը և Բուլղարիայի, Վրաստանի, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի նմանատիպ գործառույթներ ունեցող կառույցները ստեղծել են **Սևծովյան առափնյա պետությունների սահմանի/ափի պարեկային ծառայությունների համագործակցության ֆորում** (ՍԾՀՖ): ՍԾՀՖ–ի նպատակն է խթանել հանդիպումները, բանակցությունները և համագործակցության զարգացմանն առնչվող փորձի, գաղափարների և կարևոր սկզբունքների փոխանակումը:

Գյուղատնտեսության և զբոսաշրջության ոլորտում, **Կիևի նախաձեռնության** շրջանակներում նախագծվում է **«Գինու ճանապարհ»** ծրագիրը: Ծրագրի նպատակն է տարածաշրջանում զարգացնել գինեգործությանը և խաղողագործությանն առնչվող զբոսաշրջությունը: Այս նախաձեռնությունները բեղմնավոր հիմք են հանդիսանում Գերակայություն 1-ի, Միջոցառում 1.2-ի՝ «Զբոսաշրջության զարգացման նախաձեռնությունների և ավանդական արտադրանքների ինտեգրման և խթանման նպատակով զբոսաշրջության ցանցերի ստեղծման» հետ համադաշնեցման համար (տե՛ս Գլուխ 4):

Համապատասխանությունը ազգային և միջսահմանային ծրագրերի և ռազմավարություններին

Բուլղարիան, Հունաստանը և Ռումինիան՝ որպես ԵՄ անդամ պետություններ, ունեն զարգացման ծրագրերի պլանավորման ընդհանուր համակարգ (հիմնականում ԵՄ կառուցվածքային հիմնադրամների կողմից ֆինանսավորվող), որոնք նաև իրականացվելու են ԵՀԳԳ-ՄՍՀ–ում ներգրավման ենթակա շրջաններում: Յուրաքանչյուր երկիր մշակել է Ազգային ռազմավարական հայեցակարգ (ԱՌՀ): Ի լրումն, մշակվել և ԵՀ-ի կողմից հաստատվել են Տարածաշրջանային գործառնական ծրագրեր և այլ թեմատիկ գործառնական ծրագրեր: Այսպիսով, 2007-2013 թվականների համար այս երկրներում տնտեսական զարգացման և սոցիալական համերաշխության գծով արդեն զգալի բյուջետային հատկացումներ են նախատեսվել:

Սա անշուշտ ազդեցություն պետք է ունենա դիտարկվող ափամերձ շրջանների վրա՝ մասնավորապես, բարձրացնելով նրանց մրցունակությունը և բարելավելով բնապահպանական իրավիճակը: Այս ծրագրերից քաղած դասերը միջսահմանային համագործակցության ծրագրերի միջոցով կարող են տարածվել սևծովյան ավազանի շուրջը:

Բուլղարիան, Հունաստանը, Ռումինիան, Մոլդովան և Ուկրաինան հարավ-արևելյան եվրոպական միջպետական համագործակցության ծրագրում ներգրավված գործընկերներ են, որը ֆինանսավորվում է ՏՁԵՀ–ի և ՆԱԳ-ի միջոցներից:

Մյուս կողմից, **Բուլղարիան, Հունաստանը, Ռումինիան և Թուրքիան** մասնակցում են ՏՁԵՀ-ի և ՆԱԳ–ի շրջանակներում իրականացվող ՄՍՀ ծրագրերում, իսկ **Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան** ԵՀԳԳ գործիքի ներքո միջսահմանային մակարդակով համագործակցում են Ռումինիայի հետ (տե՛ս աղյուսակը սույն Գլխի վերջում):

Որպեսզի նվազեցվի անդրազգային, երկկողմ և եռակողմ ՄՍՀ ծրագրերի և Սևծովյան ավազանի ծրագրի միջև կրկնությունների վտանգը, վերջինս գլխավորապես կկենտրոնանա այն գերակայությունների վրա, որոնք ընդհանուր ճանաչում կստանան սևծովյան ավազանի բոլոր մասնակից երկրների կողմից: Ծրագրերի ընտրության փուլում և նախքան դրամաշնորհային պայմանագրերի ստորագրումը ՀՂՄ-ն այլ ծրագրերի նույնական կառույցների հետ տեղեկություններ կփոխանակի՝ ճշտելու համար, որ առաջարկվող միջոցառումները դեռևս չեն ֆինանսավորվում կամ չեն նախատեսվում ֆինանսավորվել միջսահմանային այլ ծրագրերի շրջանակներում:

Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Ռուսաստանը և Ուկրաինան՝ որպես ԵՄ-ի հարևաններ և գործընկերներ, ազգային մակարդակում ակտիվորեն համագործակցում են ԵՄ-ի հետ՝ տարածաշրջանային մակարդակով գործող տարբեր ծրագրերի միջոցով, որոնք, մասնավորապես, կենտրոնանում են տարածաշրջանային տնտեսական զարգացման վրա:

2006 թվականի հոկտեմբերի 25-27-ը Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում անցկացված համաժողովում ՀՀ Քաղաքաշինության նախարարության, Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի գրասենյակի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տրանսպորտի, կառուցապատման և քաղաքաշինական հարցերով դաշնային նախարարության միջև ստորագրվեց փոխըմբռնման հուշագիր «CEMAT-ի մոդելային տարածաշրջան. Հայստան-Վրաստան. սահմանամերձ շրջանների կայուն տարածական զարգացում» ծրագրի վերաբերյալ, որի շրջանակներում 2007 թվականի աշնանը նախատեսվում է համապատասխան միջոցառումներ անցկացնել շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Այս երկրների մեծ մասը, հաշվի առնելով տարածաշրջանների առանձնահատուկ կարիքները, իրականացնում է նաև տարածաշրջանային զարգացման ազգային ծրագրեր: ԵՀԳԳ-ՄՍՀ ՀՂՄ անդամները մշտապես տեղյակ կլինեն իրենց երկրի տարածաշրջանային զարգացման քաղաքականությանը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության՝ աջակցություն ստացող ծրագրերին՝ երաշխավորելու ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերի համապատասխանությունը առկա նախաձեռնություններին:

3.2 Եզրակացություններ ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան տարածաշրջանային ծրագրի ռազմավարության վերաբերյալ

Հիմնվելով սևծովյան ավազանում առկա համագործակցության և ծրագրերի վերլուծության վրա՝ կարելի է հանգել մի շարք եզրակացությունների՝ գոյություն ունեցող նախաձեռնությունների համեմատությամբ ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի հավելյալ արժեքի, համադաշնեցումներ ստեղծելու, կրկնություններից խուսափելու, ցատկահարթակի էֆեկտը խթանելու և ստացված արդյունքների վրա հիմնվելու անհրաժեշտության վերաբերյալ:

ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի հավելյալ արժեքը

ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագիրն ունի առանձնահատուկ շրջանակներ և ուղղվածություն, ինչը հավելյալ արժեք է տալիս համագործակցության առկա շրջանակներին և նախաձեռնություններին.

- Ծրագրի գործընկերների համապատասխանելիությունը հիմնված է ԵՀԳԳ կանոնակարգի վրա, բայց առաջնահերթությունը տրվելու է տեղական և տարածաշրջանային մարմիններին, քաղաքացիական հասարակությանը ու ՀԿ-ներին, առևտրի պալատներին և գիտական ու կրթական ոլորտների ներկայացուցիչներին[24].
- Ծրագրի գերակայությունների հիման վրա ծրագիրը սահմանելու նախաձեռնությունը գտնվում է տեղական և տարածաշրջանային մասնակիցների ձեռքում.
- Ծրագրերը նախապատրաստվում և իրականացվում են գործընկերության ոգով, որտեղ համանման կազմակերպություններն իրենց արտասահմանյան գործընկերների հետ իրականացնում են փորձի փոխանակում, համատեղ պայքարում են համընդհանուր մարտահրավերների դեմ կամ համատեղ ներուժ զարգացնելու համար.
- Ծրագրերը կունենան միջսահմանային ազդեցություն.
- Ծրագրի գերակայությունները կենտրոնանում են դիտարկվող շրջանների ընդհանուր կարիքների վրա՝ համատեղ սահմանվելով 10 մասնակից երկրների կողմից.
- Սևծովյան ավազանի ծրագրով սահմանված համագործակցության ոլորտը ընդարձակ է, տարածաշրջանային առումով՝ հետևողական և եզակի:

Այսպիսով, ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագիրը տարածաշրջանի համար համագործակցության նոր և յուրահատուկ ձև է, որը կփոխլրացնի հիմնականում ազգային մակարդակով կամ ավելի փոքր տարածաշրջանային մասշտաբներով իրականացվող առկա համագործակցությունը:

Համադաշնեցումը այլ ծրագրերի և նախաձեռնությունների հետ

Տրամադրվող աջակցության փոխլրացնող բնույթը կարևոր է՝ ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և դիտարկվող շրջանների ու շահառուների համար առավելագույն արդյունքներ ապահովելու համար: Սևծովյան ավազանի ծրագիրը կոչված է ապահովելու համապատասխան տարածքում կամ նրա մի մասում համանման գերակայություններ ունեցող ծրագրերին աջակցող առկա համագործակցության և նախաձեռնությունների հետ համադաշնեցումը: Աղյուսակ 3.1-ում արտացոլված են սևծովյան ավազանում առկա համագործակցության հիմնական

[24] ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության փաստաթուղթ, 2007-2013թթ. – պարբերություն 6.7

նախաձեռնությունների և տարածաշրջանային զարգացման աջակցության ծրագրերի միջև նմանություններն ըստ գերակայությունների:

ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագիրը կապահովի իր կողմից տրամադրվող աջակցության համապատասխանությունը տարածաշրջանային այլ նախաձեռնություններին և ծրագրերին.

- Ծրագրի ՀՂՄ/ՀՏՔ-ի և դիտարկվող տարածաշրջանում գործող տարածաշրջանային ու միջազգային կազմակերպությունների միջև տեղեկությունների կանոնավոր փոխանակման միջոցով.
- ՀՂՄ անդամները մշտապես տեղյակ կլինեն ազգային և տարածաշրջանային զարգացման քաղաքականությանը, ինչպես նաև իրենց երկրում այլ նախաձեռնություններից և համագործակցության շրջանակներից աջակցություն ստացող ծրագրերին՝ երաշխավորելու ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագրերի համապատասխանությունը և համադաշնեցումը դրանց հետ.
- Հայտատուները ծրագրի իրենց առաջարկներում կնկարագրեն, թե ինչքանով է համագործակցության իրենց ծրագիրը հիմնվում իրենց կամ գործընկերների կողմից իրականացվող այլ ծրագրերի և նախաձեռնությունների վրա կամ փոխլրացնում դրանք:

Ծրագրերի կրկնակի ֆինանսավորումից և դրանցում կրկնություններից խուսափելը

Հայտատուներից կպահանջվի իրենց առաջարկներում հստակորեն նշել, թե արդյոք առաջարկվող գործողությունների կամ դրանց մի մասի համար դիմել են նաև այլ ֆինանսավորման: Սա գնահատման փուլում չպետք է նրանց առաջարկների հանդեպ խտրականության հիմք հանդիսանա, սակայն, հաշվի կառնվի ծրագրերի վերջնական ընտրության ժամանակ: Դա կբարձրացնի ՀՎՀ-ի և ՀՂՄ-ի իրազեկվածությունը՝ ապահովելով, նախքան դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելը, մյուս դոնորների և ծրագրերի հետ խորհրդակցումը՝ ծրագրին աջակցելու դեպքում գործողությունների կրկնակի ֆինանսավորումից խուսափելու համար:

Համապատասխանության վերլուծությամբ պարզված կրկնությունների հիմնական վտանգը կապված է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ՄՍՀ այլ ծրագրերի հետ, մասնավորապես, ԵՀԳԳ-ՄՍՀ Ռումինիա-Մոլդովա-Ուկրաինա ծրագիրը, հարավարևելյան Եվրոպայի անդրազգային ծրագիրը և, ավելի փոքր չափով, ԵՏՋՀ-ՄՍՀ Ռումինիա-Բուլղարիա և Բուլղարիա-Հունաստան ծրագրերը, ինչպես նաև ՆԱԳ-ՄՍՀ Բուլղարիա-Թուրքիա ծրագիրը (տես աղյուսակ 3.1): Սևծովյան ավազանի ծրագրի ՀՂՄ-ն պարբերաբար կխորհրդակցի մյուս ծրագրերի ՀՂՄ-ների հետ ինչպես ընտրության փուլում, այնպես էլ դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելուց առաջ՝ աջակցություն ստացող գործողություններում կրկնությունների բացակայության մեջ հավաստիանալու համար: ԵՀԳԳ-ՄՍՀ Ռումինիա-Մոլդովա-Ուկրաինա ծրագրի ՀՂՄ-ի ներկայացուցիչը, որպես դիտորդ, կարող է հրավիրվել մասնակցելու Սևծովյան ավազանի ծրագրի ՀՎՀ-ի հանդիպումներին՝ ապահովելու աջակցության համաձայնեցումը:

Ցատկահարթակի և բազմապատիկի էֆեկտների խթանումը

Հաշվի առնելով ԵՀԳԳ-ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագրի սահմանափակ բյուջեն՝ դիտարկվող շրջաններում ազդեցություն ունենալու համար շատ կարևոր է ծրագրի՝ ցատկահարթակի և բազմապատիկի էֆեկտների խթանումը: Ծրագրի գործընկերներին կառաջարկվի իրենց հայտերում նկարագրել, թե ինչքանով իրենց

առաջարկը կարող է ցատկահարթակի և բազմապատիկի նման էֆեկտներ ապահովել, օրինակ՝ ստացված արդյունքներն այլ տարածաշրջաններում տարածելու կամ վերարտադրելու միջոցով կամ էլ ծրագրի՝ «փորձնական» համարվելու և այլ նախաձեռնությունների շրջանակներում ավելի լայն շրջանակներով վերարտադրվելու կարողությամբ: Հայտատուները նաև կխրախուսվեն՝ ներգրավելու լրացուցիչ ռեսուրսներ իրենց սեփական համաֆինանսավորման (հայտերի ներկայացման հրավերով սահմանված նվազագույնից բարձր) կամ լրացուցիչ ֆինանսավորման (պետական կամ մասնավոր) հաշվին:

Փորձի փոխանակումը և արդյունքների կիրառումը

Ծրագրի իրականացման ժամանակաշրջանի ընթացքում ՀՂՄ/ՀՏՔ-ը և ծրագրում ընդգրկված գործընկերները կաջակցեն այն նախաձեռնություններին, որոնք կոչված են ապահովելու ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի ռազմավարության համաձայնեցումն ու դրա վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը տարածաշրջանում գործող այլ կազմակերպությունների հետ: Դա հնարավորություն կընձեռի օգտագործելու դիտարկվող շրջաններում համանման գերակայությունների ուղղությամբ մյուս ծրագրերի փորձը, հասանելի լինելու դրանց արդյունքներին և կիրառելու դրանք:

Տեղեկատվության և տարածման ակտիվ քաղաքականության միջոցով ՀՂՄ/ՀՏՔ-ն այլ ծրագրերի և նախաձեռնությունների համար կապահովի ծրագրերից ստացված արդյունքների և քաղած դասերի մատչելիությունը:

Աղյուսակ 3.1 – Սևծովյան ծրագրի համապատասխանությունը այլ ծրագրերին և ռազմավարություններին

2007-2013թթ. ազգային և ՄԱՀ ծրագրերը և ռազմավարությունները		ԵՀԳԳ–ՄՄՀ Սևծովյան ավազանի ծրագիր		
		Նպատակ 1 Տնտեսական և սոցիալական զարգացում	**Նպատակ 2** Ընդհանուր մարտահրավերներ	**Նպատակ 3** «Միջանձնային»
ԵՄ անդամ պետությունների տարածաշրջանային և կառուցվածքային հիմնադրամների ծրագրերը				
Ազգային ռազմավարական հայեցակարգեր (Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա)	i. Գործարար միջավայրի բարելավում	✓		
	ii. Տնտեսության մրցունակության բարձրացում	✓		
	iii. Մարդկային ռեսուրսների զարգացում և զբաղվածության ապահովում	✓		
	iv. Վարչական կարողությունների բարելավում	✓		
Գործառնական ծրագրեր «Տարածաշրջանային զարգացում» (Բուլղարիա, Հունաստան, Ռումինիա)	i. Նորամուծությունների խթանում	✓	✓	
	ii. Ձեռներեցության օժանդակում	✓		
	iii. Կրթություն և մշակույթ			✓
	iv. Տարածաշրջանային հավասարակշռված զարգացման խթանում և աջակցություն թերզարգացած շրջաններին	✓		
	v. Բնապահպանական կառավարում և վարչական վերակազմավորում		✓	
Ճյուղային գործառնական ծրագրեր. Շրջակա միջավայր (Բուլղարիա, Ռումինիա, Հունաստան)	i. Հանրային ծառայությունների համընդհանուր մատչելիության ապահովում	✓	✓	
	ii. Օժանդակություն ջրհեղեղների կայուն կառավարմանը դրանց ենթակա տարածաշրջաններում		✓	
	iii. Սև ծովի ափերի պաշտպանության և վերականգնման ապահովում		✓	
	iv. ԵՄ բնապահպանական չափանիշների հետ տարբերության կրճատում		✓	
Սևծովյան ավազանում ՄՄՀ անդրազգային, եռակողմ և երկկողմ ծրագրերը				
ԵՀԳԳ–ՄՄՀ ծրագիր Ռումինիա-Մոլդովա-Ուկրաինա	i. Տնտեսական և սոցիալական զարգացում	✓	✓	
	ii. Ընդհանուր մարտահրավերների հաղթահարում		✓	
	iii. Տնտեսապես արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովում			
	iv. Միջանձնային համագործակցության խթանում			✓
ԵՏԶՀ–ՄՄՀ ծրագրեր Ռումինիա-Բուլղարիա, Բուլղարիա–Հունաստան և ՆԱԳ–ՄՄՀ ծրագրեր Բուլղարիա–Թուրքիա	i. Շրջանների հասանելիության ապահովում	✓		
	ii. Սահմանամերձ շրջանների տնտեսական աճի և մրցունակության բարձրացում	✓		
	iii. Նորամուծությունների և ձեռներեցության խթանում	✓		
	iv. Աջակցություն գիտելիքահեն տնտեսության աճին	✓		
	v. Մարդկային ռեսուրսների արժևորում	✓		✓
	vi. Աշխատատեղերի ստեղծման խրախուսում	✓		
	vii. Շրջակա միջավայրի պաշտպանություն և կառավարում		✓	
	viii. «Միջանձնային» գործողությունների միջոցով համագործակցության ընդլայնում			✓
ԵՏԶՀ-հարավարևելյան Եվրոպայի	i. Նորարարությունների և ձեռներեցության խթանում	✓		
	ii. Շրջակա միջավայրի պաշտպանություն և բարելավում		✓	

անդրազգային ծրագիր	iii. Հասանելիության բարելավում	✓		
	iv. Կայուն զարգացող շրջանների համար անդրազգային համադաշնեցումների զարգացում	✓		
Գործընկեր երկրների համագործակցությունը ԵՄ-ի հետ				
ԵՀՔ գործողությունների ծրագրեր Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի, Ուկրաինայի հետ	i. Իրավունքի գերակայության ամրապնդում	✓		
	ii. Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում	✓		
	iii. Տնտեսական զարգացման խրախուսում և աղքատության հաղթահարման ջանքերի ամրապնդում	✓		
	iv. Արդարադատության, ազատության և անվտանգության ոլորտներում համագործակցության ամրապնդում			
	v. Վարչական կարողությունների վերազինում	✓		
	vi. Տարածաշրջանային համագործակցության ուժեղացում	✓	✓	✓
	vii. Հակամարտությունների խաղաղ լուծման խթանում			✓
	viii. Տրանսպորտ և էներգետիկա		✓	
Ռազմավարական գործընկերություն Ռուսաստանի հետ	i. Ընդհանուր տնտեսական հարթություն	✓		
	ii. Արդարադատության, ազատության և անվտանգության ընդհանուր հարթություն			
	iii. Արտաքին անվտանգության ընդհանուր հարթություն			
	iv. Հետազոտությունների, կրթության և մշակույթի ընդհանուր հարթություն			✓

Տարածաշրջանային համագործակցության շրջանակները սևծովյան ավազանում		**ԵՀԳԳ–ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագիր**		
		Նպատակ 1 Տնտեսական և սոցիալական զարգացում	**Նպատակ 2** Ընդհանուր մարտահրա-վերներ	**Նպատակ 3** «Միջանձնա-յին»
Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպություն (ՍԾՏՀ)				
ՍԾՏՀ և ՍԾՏՀԽՎ	i. Առևտուր և տնտեսական զարգացում	✓		
	ii. Տրանսպորտ և էներգետիկա			
	iii. Հանցավորության դեմ պայքար			
	iv. Զբոսաշրջության զարգացում	✓		
	v. Աջակցություն ՓՄՁ-երին	✓		
	vi. Հաղորդակցության միջոցների զարգացում	✓		
	vii. Շրջակա միջավայրի պաշտպանություն		✓	
	viii. Գիտություն և տեխնոլոգիա			✓
	ix. Կրթություն			✓
Առևտրի և զարգացման սևծովյան բանկ	i. Առևտրի խթանում	✓		
	ii. Աջակցություն պետական և մասնավոր ձեռնարկություններին	✓		
Սևծովյան ուսումնասիրություն ների միջազգային կենտրոն	i. Տարածաշրջանային ուսումնասիրություններ	✓	✓	✓
	ii. Համագործակցություն հետազոտական կառույցների միջև			✓
Սևծովյան մայրաքաղաքների ղեկավարների և քաղաքապետերի միություն	i. Տեղական մակարդակով համագործակցության խրախուսում			✓
	ii. Տնտեսական, սոցիալական և վարչական նախագծերի խթանում	✓		✓
Երկխոսության և գործընկերության սևծովյան ֆորում				

	i.	Պատշաճ կառավարման խթանում	✓		
	iii.	Հանդուրժողականության ամրապնդում			✓
	iv.	Կայուն զարգացում	✓	✓	
	v.	Շրջակա միջավայրի պաշտպանություն		✓	
	vi.	Քաղաքացիական պաշտպանության պլանավորում		✓	
Սև ծովն աղտոտվածությունից պաշտպանելու հարցերով հանձնաժողով					
Սևծովյայն գործողությունների ռազմավարական ծրագիր	i.	Աղտոտվածության ցամաքային աղբյուրների կրճատում		✓	
	ii.	Կայուն զարգացում		✓	
	iii.	Արտակարգ իրավիճակների կառավարում		✓	

Տարածաշրջանային շրջանակներ ունեցող միջազգային այլ ծրագրերը և նախաձեռնությունները			ԵՀԳԳ–ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագիր		
			Նպատակ 1 Տնտեսական և սոցիալական զարգացում	**Նպատակ 2** Ընդհանուր մարտահրա-վերներ	**Նպատակ 3** «Միջանձ-նային»
Եվրոպական հանձնաժողով					
“Սևծովյան համադաշնեցում”	i.	Ժողովրդավարություն, հարգանք մարդու իրավունքների հանդեպ և պատշաճ կառավարում	✓		✓
	ii.	Տեղաշարժի կառավարում և անվտանգության բարելավում			
	iii.	Սառեցված հակամարտություններ			
	iv.	Էներգետիկա			
	v.	Տրանսպորտ			
	vi.	Շրջակա միջավայր		✓	
	vii.	Ծովային քաղաքականություն		✓	
	viii.	Ձկնարդյունաբերություն	✓	✓	
	ix.	Առևտուր	✓		
	x.	Հետազոտական և կրթական ցանցեր			✓
	xi.	Գիտություն և տեխնոլոգիա	✓	✓	✓
	xii.	Զբաղվածություն և սոցիալական հարցեր	✓		
	xiii.	Տարածաշրջանային զարգացում	✓	✓	✓
Եվրոպայի խորհուրդ					
Սևծովյան եվրատարածաշրջան	i.	Բնական ռեսուրսների պաշտպանություն		✓	
	ii.	Սոցիալական համերաշխության ամրապնդում			✓
	iii.	Մշակութային համագործակցություն			✓
Կիևի նախաձեռնություն	i.	Ժողովրդավարական զարգացման խթանում			✓
	ii.	Մշակութային բազմազանության հանդեպ հարգանքի խթանում			✓
Մշակութային կապիտալի ստեղծում	iii.	Մշակութային զբոսաշրջություն	✓		✓
	iv.	Մշակութային ձեռներեցություն	✓		✓
ՄԱԿ-ի ԶԳ (Հունաստանի և Թուրքիայի համաֆինանսավորմամբ)					
Առևտրի և ներդրումների խթանման սևծովյան ծրագիր	i.	Ներտարածաշրջանային առևտրի ընդլայնում	✓		
	ii.	Ներտարածաշրջանային ներդրումային կապերի խթանում	✓		
ՏՀԶԿ (Հունաստանի, Թուրքիայի և Ռումինիայի համաֆինանսավորմամբ)					
Սև ծովի և Կենտրոնական Ասիայի	i.	Տնտեսական գործունեության դիտանցում	✓		✓
	ii.	Փաստերի վրա հիմնված քաղաքական բանակցությունների հեշտացում	✓		

տնտեսական հեռանկարների նախագիծ	iii.	Գործընկերություններ տարածաշրջանային հաստատությունների և հետազոտական ցանցերի հետ	✓
Սև ծովի առափնյա պետությունների սահմանի/ափի պարեկային ծառայությունների համագործակցության ֆորում			
	i.	Գաղափարների և փորձի փոխանակում սահմանի/ափի պարեկային ծառայությունների միջև	

4 Ծրագրի ռազմավարությունը. նպատակները, գերակայությունները և միջոցառումները

4.1. Ծրագրի ռազմավարության սահմանման սկզբունքները և մեթոդաբանությունը

Ծրագրի ռազմավարությունը մշակելիս գործընկերները կիրառել են հետևյալ հիմնական սկզբունքները.

Խիստ կարիքների սահմանումը

Հիմք ընդունելով սևծովյան ավազանի, դրա տնտեսական կառուցվածքի և մակրոտնտեսական զարգացումների վերլուծությունը՝ սահմանվել են զարգացման հիմնական կարիքները և վերլուծվել են վտանգներն ու հնարավորությունները: Առաջացած հիմնական ընդհանուր հարցերից են տարածաշրջանում առկա զարգացման բացերը և անհավասարությունները, ինչպես Սև ծովի ավազանի շրջանների, այնպես էլ այդ շրջաններն ընդգրկող երկրների միջև: Այդ վերլուծությունից բխող առավել համապարփակ նպատակը տեղական ռեսուրսների հիման վրա **տնտեսական և սոցիալական զարգացման** արագացումն է:

Սև ծովի ավազանում առկա մեկ այլ վճռորոշ խնդիր է **շրջակա միջավայրի պաշտպանությունը՝** դիմակայելու համար վատթարացման գործընթացին, որը կարող է զգալիորեն խոչընդոտել կայուն տնտեսական զարգացմանը:

Երրորդ խնդիրը Սև ծովի ավազանի ժողովուրդների միջև **ավելի սերտ մշակութային շփման** կարիքն է: Երկու երկրների՝ ԵՄ–ին անդամակցելուց հետո մեծացել է ծովի ավազանում ավելի սերտ մշակութային և սոցիալական ինտեգրման կարևորությունը:

Հետևողականության և համապատասխանության մաքսիմալացումը

Ծրագրում ընդգրկված գործընկերների խնդիրն էր բացահայտել հետևողական ռազմավարության հնարավորությունը ԵՄ-ի ԵՀԳԳ-ՄՍՀ ռազմավարության փաստաթղթի և սևծովյան ավազանի վերլուծության հիման վրա նախանշված հստակ նպատակների շրջանակում, ինչպես նաև ընտրել առավել նպատակահարմար ռազմավարությունը՝ իրատեսական հստակ նպատակներով և հաշվի առնելով ծրագրի բյուջեն ու գործընկերների առանձնահատուկ կառուցվածքային և քաղաքական խոչընդոտները:

Գործնականում, վերը նշվածը նշանակում է **իրատեսական հստակ նպատակների ձևակերպում**, որոնք գործնականում կարող են իրագործել ծրագրում ընդգրկված գործընկերները, հաշվի առնելով գործընկեր շրջանների վարչական և օրենսդրական շրջանակները, ինչպես նաև հնարավոր գործընկերների սահմանափակ փորձը միջսահմանային համագործակցության նման ձևաչափում: Անվտանգ սահմանների ապահովման նպատակը, որն արտացոլված է ԵՄ ռազմավարությունում, սույն ծրագրի ներքո տարածաշրջանային դերակատարների մեծ մասի համար վերահսկողության շրջանակներից դուրս է: Դրա պատճառներից են երկրների մեծամասնությունում վարչական կառուցվածքը և օրենսդրությունը, որոնք ունեն միայն երկու մակարդակներ՝ ներկայացված կենտրոնական հաստատություններով և տեղական ինքնակառավարման մարմիններով: Այս համատեքստում, միայն կենտրոնական հաստատություններն են օժտված անվտանգ սահմանների վերաբերյալ հարցերը կարգավորելու իշխանությամբ և միջոցներով:

Ի լրումն, առկա էր այնպիսի **գերակայություններ որոշելու պահանջ, որոնք կարող են առավելագույնի հասցնել ազդեցությունը մշակութային մակարդակով**, ինչպես նաև բարձրացնել սևծովյան ավազանի համայնքների ընդհանուր մարտահրավերների հաղթահարման նպատակով հնարավոր գործընկերության և համագործակցության վերաբերյալ իրազեկությունը: Դա նաև նշանակում է **սևծովյան ավազանում իրականացվող այլ նախաձեռնությունների և ԵՄ ծրագրերի հետ առավելագույն համադաշնեցման և փոխլրացման ապահովում՝** տարածաշրջանային զարգացման և տարածքային համագործակցության նպատակով:

Տարածաշրջանային ամուր տարածաչափը

Ծրագրում ընդգրկված գործընկերների առանցքային խնդիրներից էր մշակել այնպիսի ռազմավարություն, որը **տարածաշրջանային տարածաչափը և տարածաշրջանային դերակատարներին կդարձնի ծրագրի առանցքը**: Սևծովյան ավազանի ծրագրի հատուկ մոտեցումը զարգացման ռազմավարության ձևավորման մասով «ներքևից վեր» գործընթացի ապահովումն է՝ հիմնվելով տեղական դերակատարների ունեցած ավանդի վրա: Ծրագրի առանձնահատկություններից է տարածքային համապատասխանելիության սկզբունքը, որը ծրագրի աշխարհագրությունը սահմանափակում է Սև ծովի համակարգում ուղղակիորեն ինտեգրացված շրջաններով՝ ընդգծելով ազգային մակարդակից վեր տեղական դերակատարների ունեցած ավանդը: Այս սկզբունքը կիրառվել է ծրագրի մշակման ընթացքում տարածաշրջանում անցկացվող հանրային լսումների միջոցով, ինչպես նկարագրված է ստորև:

Սևծովյան ծրագրի մշակման և հանրային լսումների անցկացման մի շարք միջոցառումների ընթացքում քննարկվել է ՈՒԹՀՎ առանձին տարրերի (ներկայացված են 2.2 բաժնում) և ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի մշակման ԵՀ ուղեցույցում[25] նկարագրված հնարավոր նպատակների ցանկի միջև եղած կապը: Չնայած տարբեր միջացառումների միջև մանրամասների առումով առկա էին որոշ տարբերություններ, կարելի է հանգել հետևյալ ընդհանրական եզրակացությունների.

Ծրագրի մշակման ուղեցույցում արտացոլված չորս հիմնական նպատակներից միայն «տնտեսապես արդյունավետ և անվտանգ սահմաններ» նպատակը լրջորեն չի հիմնավորվել ՈՒԹՀՎ վերլուծությամբ: Վերը նշված միջոցառումների մասնակիցների համաձայն՝ «Տնտեսական և սոցիալական զարգացում» վերտառությամբ Նպատակ 1–ը առավելագույնս է հիմնավորվել ՈՒԹՀՎ վերլուծությամբ: ՈՒԹՀՎ վերլուծությամբ առավելագույն հավանության են արժանացել ԵՀԳԳ-ՄՍՀ ծրագրի մշակման ուղեցույցում նշված հետևյալ թեմաները.

- Տեղական զարգացման և վարչական կարողությունների հզորացման համակցությունը,
- Զբոսաշրջության (և գյուղական) զարգացումը,
- ՓՄՁ-ների համար գործարար միջավայրի զարգացման և առևտրի խթանման համակցությունը,
- Տրանսպորտային (և էներգետիկայի) ու բնապահպանական մարտահրավերների համակցությունը,
- Բնական ռեսուրսների կառավարումը,
- Կրթությունը և մշակութային փոխանակումը:

Այս եզրակացություններն առանցքային դեր են կատարել ծրագրի գերակայությունները և միջոցառումները սահմանելու հարցում:

[25] Եվրոպական հարևանության և գործընկերության գործիք--ԵՀԳԳ ՄՍՀ—Ինչպես մշակել ծրագրեր. ԵՀԳԳ-ի շրջանակներում ՄՍՀ ծրագրերի մշակման ուղեցույց, ԵՀ մայիս 2006թ.

4.2. Ծրագրի նպատակները

Ծրագրի **ընդհանուր նպատակը տարածաշրջանային առավել ամուր գործընկերությունների և համագործակցության հասնելն է**:

Դրա միջոցով ծրագիրն ուղղված է իր առավել **համապարփակ** առանցքային **նպատակին նպաստելուն,** այն է՝ **«Սևծովյան ավազանի շրջանների առավել հզոր և կայուն տնտեսական և սոցիալական զարգացումը»:**

Այս նպատակները կիրագործվեն՝ հաշվի առնելով ընդհանուր արժեքներին հավատարիմ մնալու, հավասար հնարավորությունները խթանելու, հատկապես գենդերային խտրականությունը հաղթահարելու և տնտեսական ու սոցիալական զարգացմանը կանանց մասնակցությունը խթանելու, մարդու՝ հատկապես տարածաշրջանային նշանակության գործունեության արդյունքում բնապահպանական կայունությանը նպաստելու, ինչպես նաև սևծովյան ավազանի համայնքների մշակութային ինտեգրումը և փոխըմբռնումը խթանելու **սկզբունքները**:

ԵՀԳԳ-ՄՍՀ ռազմավարությամբ սահմանվում են ԵՀԳԳ–ՄՍՀ ծրագրերի չորս հիմնական նպատակներ՝ տնտեսական և սոցիալական զարգացում, ընդհանուր մարտահրավերներին դիմակայում, տնտեսապես արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովում և միջանձնային գործողությունների խթանում: Հիմնվելով կառուցվածքային վերլուծության, ինչպես նաև ՈՒԹՀՎ վերլուծության արդյունքների վրա՝ սևծովյան ավազանի մասնակից երկրները որոշել են կենտրոնանալ հետևյալ երեք նպատակների վրա.

Նպատակ 1 Սահմանամերձ տարածաշրջաններում տնտեսական և սոցիալական զարգացման խթանում
Նպատակ 2 Համատեղ աշխատանք ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ
Նպատակ 3 Տեղական, միջանձնային համագործակցության խթանում

Նպատակ 1. Սահմանամերձ տարածաշրջաններում տնտեսական և սոցիալական զարգացման խթանում

Այս նպատակը մեծապես հիմնավորված է ՈՒԹՀՎ վերլուծության արդյունքներով, հատկապես, գործընկերների կողմից ՈՒԹՀՎ վերլուծությունում սահմանված մի շարք հնարավորություններով: Դրանց թվում է «2000 թվականից հետո ՀՆԱ-ի զգալի աճ»–ը, որին երկարաժամկետ հատվածում կարող է նպաստել այն տեղական նախաձեռնություններին ցուցաբերվող աջակցությունը, որոնք ուղղված են ՓՄՁ-ների և հանրային նախաձեռնությունների համար բարենպաստ միջավայր ստեղծելուն: Այս նպատակին հետամուտ լինելը կհանգեցնի ափամերձ շրջանների կարողությունների բարելավմանը՝ «Օտարերկրյա ուղղակի ներդրումները խթանող բարելավված քաղաքական և տնտեսական կայունություն» հնարավորությունից օգտվելու նպատակով: Կառուցվածքային վերլուծությամբ նաև ուղղակիորեն հաստատվել է, որ այս նպատակը կապակցված է «Զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի աճ, որը հնարավորինս կընդգրկի բոլոր ափամերձ շրջանները» հնարավորության հետ: Այս նպատակն ուղղված է հաղթահարելու նաև մի շարք կարևորագույն վտանգներ, ինչպիսին է օրինակ՝ «Առավել հմուտ աշխատողների միգրացիա դեպի ԵՄ-ի արդյունաբերական երկրներ»:

Նպատակ 2: Համատեղ աշխատանք ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ

Սևծովյան ավազանի համայնքների բազում մարտահրավերների շարքից գործընկերները որոշել են կենտրոնանալ շրջակա միջավայրի հետ կապված խնդիրների վրա: Այս նպատակը մի կողմից կապակցված է «Սև ծովի հարավային և հյուսիսային ափամերձ շրջանների միջև կապերի ամրապնդում» և «Համաեվրոպական տրանսպորտային առանցքների, նավթի/գազի խողովակաշարերի մասով ծրագրված խոշոր ներդրումներ» հնարավորությունների հետ: Մյուս կողմից՝ այն ծառայում է շրջակա միջավայրի ոլորտում սահմանված բազում վտանգներին և թույլ կողմերին դիմակայելու համար: Դրանց թվում են՝ ««Փակ ծով»՝ Սև ծովի ֆիզիկական ավազանում առկա արտաքին գործոնների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» և «Արտաքին գործոններով պայմանավորված՝ շրջակա միջավայրի շարունակական վատթարացում» ծրագրերը:

Նպատակ 3: **Տեղական, միջանձնային համագործակցության խթանում**

Այս նպատակը կապակցված է ՈւԹՀՎ մի շարք տարրերի հետ՝ սկսած «Հարուստ մշակութային ժառանգություն, մարդկային կարողություններ և սոցիալական արժեքներ» ուժեղ կողմից: Այս նպատակի համար նույնչափ կարևոր է սահմանված այնպիսի թույլ կողմերին դիմակայելու կարողությունը, ինչպիսիք են, օրինակ՝ «Առևտուրը և մարդկանց ազատ տեղաշարժը խոչընդոտող պատմական և աշխարհաքաղաքական գործոններ»–ը, «Տեղական զարգացման քաղաքականություններն իրականացնելու համար վարչական կարողությունների ցածր մակարդակ»–ը և «Կրթական ենթակառուցվածքների պակաս, նորարարական կենտրոնների ցածր տեխնոլոգիական մակարդակ»–ը: Այս նպատակի ներքո իրականցվող նախաձեռնությունները նաև թույլ կտան օգտագործել գործընկերների կողմից սահմանված մի շարք հնարավորություններ, ինչպիսիք են, օրինակ՝ «Նոր մեթոդաբանությունների կիրառում կրթության, վերապատրաստման և շարունակական ուսուցման ոլորտներում՝ հաղթահարելու ֆիզիկական և կառուցվածքային խոչընդոտները», «Սև ծովի ափամերձ շրջանների միջև Համաշխարհային գործընկերության նախաձեռնությունների կողմից խթանվող կապերի ամրապնդում»–ը: Ընդհանուր առմամբ, ծրագրով նախատեսվում է միջանձնային գործողությունների միջոցով խթանել տարածաշրջանում տեղական և տարածքային իշխանությունների միջև համագործակցությունը և բարենպաստ միջավայր ստեղծել՝ հարատև տնտեսական հարաբերություններ զարգացնելու նպատակով (զբոսաշրջության, գործարարության զարգացում): «Միջանձնային գործողություններ» նպատակի ներքո իրականացվելիք ծրագրերը կնպաստեն տեղական հաստատությունների միջև մշակութային համագործակցությանը, ինչն ուղղված կլինի «Տեղական զարգացման քաղաքականություններն իրականացնելու համար վարչական կարողությունների ցածր մակարդակ» թույլ կողմի, ինչպես նաև միգրացիայի և հակամարտությունների վտանգի մարտահրավերների հաղթահարմանը:

Հաշվի առնելով առկա ֆինանսական ռեսուրսների սակավությունը, ինչպես նաև ԵՄ-ՄՍՀ ծրագրերում ընդգրկված գործընկերների մեծ մասի սահմանափակ փորձը՝ ծրագիրը չի կարող վերլուծությամբ բացահայտված և ՈՒԹՀՎ–ում համախմբված բոլոր խնդիրների վրա ուղղակի և անմիջական ազդեցություն թողնելու նպատակ ունենալ: Այնուամենայնիվ, ընտրված ոլորտներում գործողությունների հաջողված փորձը կարևոր ներդրում կունենա զուգահեռ և ապագա նախաձեռնություններում: Ինչ վերաբերում է ավելի զարգացած ենթակառուցվածքներ ստեղծելու անհրաժեշտությանը, հատկապես՝ տրանսպորտի, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում և նորարարական կենտրոններում, ծրագիրն իր ավանդը կունենա՝ խթանելով

- ծրագրերը, որոնք գործընկերություններ կստեղծեն կարիքների վերլուծության և ծրագրային գաղափարների մշակման համար, օրինակ՝ տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների միջոցով,
- ամենաթերզարգացած ոլորտներում ՏՏ–ն խթանելու նախաձեռնությունները,
- ենթակառուցվածքների համար ծրագրերի սահմանմանը նպաստող հետազոտական և նորարարական կենտրոնների ցանցերի ստեղծումը, որոնք այնուհետև աջակցություն կստանան ԵՄ այլ ծրագրերից և նախաձեռնություններից կամ այլ ազգային և միջազգային հաստատություններից:

ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարության «Տնտեսապես արդյունավետ և անվտանգ սահմանների ապահովում» նպատակը չի ընդգրկվի Սևծովյան ավազանի 2007-2013 թվականների համար ծրագրի մշակման փուլում: ԵՀԳԳ-ՄՍՀ ռազմավարության չորս նպատակներից միայն երեքի վրա կենտրոնանալու որոշումը պայմանավորված էր հետևյալ հինգ հիմնական պատճառներով.

- ծրագրի սակավ ռեսուրսների պատճառով գործողությունների հստակ սահմանված սակավաթիվ ոլորտների վրա կենտրոնացումը, հատկապես ծրագրի մշակման այս առաջին փորձի պարագայում,
- այն փաստը, որ այս գերակայությանն արդեն անդրադարձ է կատարվում համագործակցության այլ համակարգերի միջոցով (օրինակ՝ ՍԾՏՀԽՎ) և շատ գործընկեր երկրների միջև երկկողմ համագործակցության շրջանակներում,
- սահմաններում առկա պայմաններին միջամտելու և դրանց վրա ներգործելու իրավասություն ունեցող մարմինների և հաստատությունների չափազանց սահմանափակ կարողությունները,
- ոլորտում պահանջվող միջամտությունների տնտեսական և տեխնիկական չափազանց մեծ բաղադրիչը՝ ծրագրի համար առկա ռեսուրսների համեմատությամբ,
- տարածաշրջանում անցկացվող հանրային լսումների ընթացքում տեղական գործընկերների արտահայտած տեսակետի համաձայն՝ այս նպատակին առնչվող հարցերը նվազագույն կարևորություն ունեն:

4.3. Գերակայությունները և միջոցառումները, ինդիկատիվ գործողությունները

Աղյուսակ 4.3-ում արտացոլված են այն գերակայությունները և միջոցառումները, որոնք ձևակերպվել են ծրագրի երեք նպատակներն իրագործելու համար մշակված ռազմավարության իրականացման համար:

Աղյուսակ 4.3 – ԵՀԳԳ-ՄՄՀ սևծովյան ավազանի ծրագրի գերակայություններն ու միջոցառումներն ըստ նպատակների

ՆՊԱՏԱԿ 1. *Սահմանամերձ տարածաշրջաններում տնտեսական և սոցիալական զարգացման խթանում*	
Գերակայություն 1. Համախմբված ռեսուրսների հիման վրա աջակցություն տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով ստեղծված միջսահմանային գործընկերություններին	**Միջոցառում 1.1.** Նոր ներտարածաշրջանային տեղեկատվության, կապի, տրանսպորտի և առևտրի ուղիների մատչելիության փոխկապվածության հզորացում **Միջոցառում 1.2.** Զբոսաշրջության զարգացման համատեղ նախաձեռնությունների և ավանդական արտադրանքների խթանման նպատակով զբոսաշրջության ցանցերի ստեղծում **Միջոցառում 1.3.** Տեղական զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման համար վարչական կարողությունների ստեղծում
ՆՊԱՏԱԿ 2. *Համատեղ աշխատանք ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ*	
Գերակայություն 2. Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության համար ռեսուրսների և կարողությունների փոխանակում	**Միջոցառում 2.1.** Գետերի և ծովային համակարգերի, ինչպես նաև վերականգնվող էներգիայի ոլորտներում համընդհանուր մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ համատեղ գիտելիքների և տեղեկատվական բազայի հզորացում **Միջոցառում 2.2.** Հատուկ պահպանվող տարածքների պաշտպանության և պահպանության ոլորտում հետազոտության, նորարարության և իրազեկության խթանում **Միջոցառում 2.3.** Կոշտ թափոնների և ջրահեռացման համակարգերի տեխնոլոգիաների և կառավարման ոլորտում նորարարություններին ուղղված համագործակցության նախաձեռնությունների խթանում
ՆՊԱՏԱԿ 3. Տեղական, միջանձնային համագործակցության խթանում	
Գերակայություն 3. Աջակցություն մշակութային և կրթական նախաձեռնություններին՝ ավազանում ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու նպատակով	**Միջոցառում 3.1.** Սևծովյան ավազանի համայնքներում մշակութային ցանցերի և կրթական փոխանակման խթանում

4.4. Ծրագրի գերակայությունների և միջոցառումների դերը հնարավորությունների և վտանգների հասցեագրման գործում

Ծրագրի գերակայությունները, որոնք մշակված են ծրագրի նպատակներին հասնելու համար, անդրադառնում են ՈՒԹՀՎ վերլուծությամբ սահմանված բոլոր վտանգներին և հնարավորություններին, ինչպես նկարագրված է հետևյալ աղյուսակում:
Աղյուսակ 4.4-ը մի կողմից ներկայացնում է հնարավորությունների և վտանգների, իսկ մյուս կողմից՝ գերակայությունների և միջոցառումների միջև առկա կապը: Կարճ ասած՝ դա ապահովում է գերակայությունների և միջոցառումների ընտրության անհրաժեշտ հիմնավորում. բոլոր միջոցառումները ՈՒԹՀՎ վերլուծության տարրերում հիմնավորում են գտել, և բոլոր ՈՒԹՀՎ տարրերը բավականաչափ արտացոլված են գերակայություններում և միջոցառումներում:

Աղյուսակ 4.4 – Գերակայությունների և միջոցառումների հիմնավորումն ըստ հնարավորությունների և վտանգների

	Գերակայություն 1. Համախմբված ռեսուրսների հիման վրա աջակցություն տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով ստեղծված միջսահմանային գործընկերություններին			**Գերակայություն 2.** Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության համար ռեսուրսների և կարողությունների փոխանակում			**Գերակայություն 3.** Աջակցություն մշակութային և կրթական նախաձեռնություններին՝ ավազանում ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու նպատակով
	Միջոցառում 1.1. Նոր ներտարածաշրջանային տեղեկատվության, կապի, տրանսպորտի և առևտրի ուղիների մատչելիության փոխկապվածության հզորացում	**Միջոցառում 1.2.** Զբոսաշրջության զարգացման համատեղ նախաձեռնությունների և ավանդական արտադրանքների խթանման նպատակով զբոսաշրջության ցանցերի ստեղծում	**Միջոցառում 1.3.** Տեղական զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման համար վարչական կարողությունների ստեղծում	**Միջոցառում 2.1.** Գետերի և ծովային համակարգերի, ինչպես նաև վերականգնվող էներգիայի ոլորտներում համընդհանուր մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ համատեղ գիտելիքների և տեղեկատվական բազայի հզորացում	**Միջոցառում 2.2.** Հատուկ պահպանվող տարածքների պաշտպանության և պահպանության ոլորտում հետազոտության, նորարարության և իրազեկության խթանում	**Միջոցառում 2.3.** Կոշտ թափոնների և ջրահեռացման համակարգերի տեխնոլոգիաների և կառավարման ոլորտում նորարարություններին ուղղված համագործակցության նախաձեռնությունների խթանում	**Միջոցառում 3.1.** Սևծովյան ավազանի համայնքներում մշակութային ցանցերի և կրթական փոխանակման խթանում
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ							
12000 թվականից հետո ՀՆԱ-ի զգալի աճ՝ հարևան տարածաշրջաններում բազմապատիկ ազդեցությամբ	x	X	x		x	x	x
2. Անդամ պետությունների ափամերձ տարածքների մեծ մասի համար մատչելի կդառնան Համահարթեցման քաղաքականության միջոցները	x	X	x				x
3. Բարելավվող քաղաքական և տնտեսական կայունություն, որը օտարերկրյա ուղղակի ներդրումների համար կմեծացնի գրավչությունը	x		x	x		x	x

4. Զբոսաշրջության ծառայությունների պահանջարկի աճ, որը հնարավորինս կընդգրկի բոլոր ափամերձ շրջանները		X		x	x	x	
5. Համաեվրոպական տրանսպորտային առանցքների, նավթի/գազի խողովակաշարերի մասով ծրագրված խոշոր ներդրումներ	x		x	x			
6. Նոր մեթոդաբանությունների կիրառում կրթության, վերապատրաստման և շարունակական ուսուցման ոլորտներում՝ հաղթահարելու ֆիզիկական և կառուցվածքային խոչընդոտները			x			x	x
7. Սև ծովի ափամերձ շրջանների միջև Համաշխարհային գործընկերության նախաձեռնությունների կողմից խթանվող կապերի ամրապնդում		X		x		x	x
ՎՏԱՆԳՆԵՐ							
1. Վերադարձ դեպի տնտեսական և քաղաքական գործոններով պայմանավորված մակրոտնտեսական անկայունություն	x						
2. Առավել հմուտ աշխատողների միգրացիա դեպի ԵՄ-ի արդյունաբերական երկրներ	x	X		x	x	x	
3. Մրցակցություն նոր զարգացող արդյունաբերական երկրների կողմից՝ արդյունաբերության զարգացման և օտարերկրյա ուղղակի	x	X	x			x	x

ներդրումներ գրավելու առումով								
4. Արտաքին գործոններով պայմանավորված՝ շրջակա միջավայրի շարունակական վատթարացում				x	x	x		x
5. ԵՄ-ի անդամ և հարևան երկրների միջև աճող անհամապատասխանություններ՝ մաքսային, ընդհանուր շուկայի և աշխատուժի շարժունակության հարցերում	x	X					x	x
6. Տեղական հակամարտությունների, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, ահաբեկչության աճող սպառնալիքներ			x				x	x
7. Սառեցված հակամարտությունների, կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, ահաբեկչության հիմնախնդիրները լուծելու կամ դրանց դեմ պայքարի միջոցառումների հետաձգում			x				x	x

Նպատակ 1. Սահմանամերձ տարածաշրջաններում տնտեսական և սոցիալական զարգացման խթանում

Հաշվի առնելով աղյուսակ 4.4-ում բերված տեղեկատվությունը, ինչպես նաև ՈւԹՀՎ վերլուծության մյուս տարրերը (այսինքն, ուժեղ և թույլ կողմերը), ծրագրի մասնակիցները որոշել են, որ տնտեսական զարգացումը խթանելու համար միջամտությունների հիմնական ոլորտներն են տեղական ռեսուրսների վրա հիմնված նախաձեռնությունների զարգացումը, սկսած գյուղատնտեսության, զբոսաշրջության, ավանդական արտադրանքի զարգացումից՝ շեշտը դնելով ՓՄՁ-ների, ինչպես նաև տեղական մակարդակում վարչական կարողությունների խթանման վրա:

Գերակայություն 1 - Համախմբված ռեսուրսների հիման վրա աջակցություն տնտեսական և սոցիալական զարգացման նպատակով ստեղծված միջսահմանային գործընկերություններին

Այս նպատակը կիրականացվի Գերակայություն 1-ի միջոցով, որի շրջանակներում նախատեսվող գործողությունները կենտրոնացած են ՈւԹՀՎ վերլուծության համաձայն առավել հարուստ ներուժ ունեցող հետևյալ ոլորտներում. ՓՄՁ-ների զարգացման խթանում՝ աջակցելով այն նախաձեռնություններին, որոնք գործարարության համար բարենպաստ միջավայր ստեղծելու, գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը զարգացնելու նպատակ են հետապնդում: Գերակայության ներքո աջակցություն ստացող գործողությունները պետք է ուղղված լինեն մատչելիության, նորարարության, ինչպես նաև առևտրային և վարչական կարողությունների խթանմանը: Անդրազգային գործընկերությունները կխթանեն հաջողված փորձի փոխանակումը, համանման գործարար նախաձեռնությունների միջև նորարարությունների տարածումը:

1. **Ներգրավված աշխարհագրական տարածաշրջանները**

Բոլոր դիտարկվող շրջանները

2. **Թիրախային խմբերի և դրամաշնորհի շահառուների սահմանումները**

Դիտարկվող բոլոր համապատասխան խմբերը՝ համաձայն ծրագրի 6.6 գլխում ներկայացված սահմանման՝ հաշվի առնելով գերակայության շրջանակները. դրանք են, օրինակ՝ տեղական և տարածքային վարչական մարմինները, տեղական զարգացման ոլորտում ակտիվորեն գործող հասարակական կազմակերպությունները, գյուղատնտեսության ոլորտում գործող արտադրողների և ձկնորսների միությունները, գործարարությանն աջակցող պետական գործակալությունները:

3. **Թույլատրելի ծախսերը**

Ներառում է ԵՄ համապատասխան կանոնակարգերով նախատեսված բոլոր տեսակի ծախսերը. որպես ընդհանուր կանոն, ներդրումները փոքր ենթակառուցվածքների և (կամ) սարքավորումների ձեռքբերման համար խորհուրդ է տրվում նախատեսել միայն այն դեպքում, երբ դա բխում է ծրագրի իրականացման

պահանջներից՝ պատշաճ կերպով հիմնավորված փոքրաթիվ բացառությունների դեպքում:

4. Համաֆինանսավորման նկարագրությունը[26]

Պետությունների կողմից համաֆինանսավորման չափը կկազմի ԵՄ ներդրման (բացառությամբ տեխնիկական աջակցության) 10%-ը:

5. Շահառու/Գլխավոր գործընկերները

Շահառուների բոլոր դիտարկվող խմբերը

Միջոցառում 1.1. Նոր ներտարածաշրջանային տեղեկատվության, կապի, տրանսպորտի և առևտրի ուղիների մատչելիության փոխկապվածության հզորացում

Միջոցառման նպատակն է աջակցել տեղական զարգացմանը՝ տարբեր ուղղություններով բարելավելով կապերը և հաղորդակցությունը ծրագրի տարածաշրջանի դիտարկվող շրջանների միջև: Այն ենթադրում է տեղական ավանդական արտադրանքը՝ այլ շուկաներ մուտք գործելուն աջակցող առևտրային կապերը:

Հիմնական ինդիկատիվ գործողությունները հետևյալն են.

- տարածաշրջանում միջազգային առևտրային կապերի խթանում՝ ներառյալ էներգիայի վաճառքի առնչությամբ.
- միջազգային շուկաներում Սև ծովի գյուղատնտեսական ավանդական արտադրանքի խթանմանն աջակցություն.
- համագործակցության ցանցերի զարգացում՝ ուղղված տեղական/տարածաշրջանային տնտեսական նախաձեռնություններում տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների օգտագործման խթանմանը.
- փոքրածավալ տրանսպորտային ենթակառուցվածքների նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ ավազանի թերզարգացած շրջանների և զբոսաշրջության վայրերի առավել լավ ինտեգրման համար.
- ընդհանուր նախաձեռնություններ տարածաշրջանում տարանցիկ տրանսպորտային ենթակառուցվածքների խթանման համար՝ ուղղված բեռնափոխադրման և ուղևորների փոխադրման արդյունավետության բարձրացմանը.
- շրջակա միջավայրին վնաս չհասցնող, անվտանգ ու ապահով ծովային ուղիների մշակմանն ուղղված նախնական տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների իրականացում:

Միջոցառում 1.2. Զբոսաշրջության զարգացման համատեղ նախաձեռնությունների և ավանդական արտադրանքների խթանման նպատակով զբոսաշրջության ցանցերի ստեղծում

Տվյալ միջոցառման հիմնական նպատակն է զբոսաշրջության ոլորտում ընդհանուր գործողությունների զարգացումը բոլոր գործընկեր շրջաններում

[26] Ազգային աղբյուրները, մասնավորապես՝ ծրագրի շահառուները, պետք է ծրագրին աջակցություն ցուցաբերեն ՝ ծրագրին ԵՄ-ի կողմից ցուցաբերվող աջակցության (բացառությամբ ՏԱ-ի)10-%-ի չափով կատարվող համաֆինանսավորմամբ, ինչպես նախատեսված է (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 19-րդ հոդվածով: Ըստ գերակայության համաֆինանսավորումը կարող է կիրառվել այլ տոկոսային հարաբերակցություններով՝ հաշվի առնելով տվյալ գերակայության հատուկ պայմանները, պայմանով, որ ընդհանուր գումարը կհամապատասխանի ծրագրային մակարդակում սահմանված կանոնին:

սևծովյան ռեսուրսների ինտեգրված պահպանման և շահագործման հիման վրա: Միջոցառումն ուղղված է փորձի և լավ պրակտիկայի փոխանակման համար գործընկերությունների ստեղծմանը՝ տարածաշրջանում ծառայությունների չափանիշների բարելավման և տարածաշրջանին հատուկ զբոսաշրջության ընդհանուր առաջարկների զարգացման նպատակով:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.

- զբոսաշրջության ոլորտում գործող գործակալությունների ցանցերի ստեղծում՝ տարածաշրջանում զբոսաշրջության տնտեսական ազդեցության բարձրացման նպատակով, օրինակ՝ մշակութային ուղի Սև և Կասպից ծովերի միջև («Երկու ծովերի առասպելը»).
- բնության հատուկ պահպանվող տարածքների համար պատասխանատու վարչական մարմինների միջև գործընկերության ձևավորում՝ սևծովյան ավազանի բնական տարածքներում կայուն զբոսաշրջություն խթանելու նպատակով.
- միջազգային շուկայում ընդհանուր նախաձեռնություններ իրականացնելու համար զբոսաշրջության գործակալությունների ցանցերի ձևավորում.
- միջսահմանային զբոսաշրջության պրոդուկտների և ծառայությունների ընդհանուր չափանիշների ստեղծում (թեմատիկ ուղիներ, որակի համակարգեր և այլն).
- դեպի ԵՄ զարգացած արդյունաբերական երկրներ առավել հմուտ աշխատողների միգրացիոն արտահոսքի/«ուղեղների արտահոսքի» կանխում՝ համագործակցային գործընկերությունների միջոցով:

Միջոցառում 1.3. Տեղական զարգացման քաղաքականությունների մշակման և իրականացման համար վարչական կարողությունների ստեղծում

Միջոցառման նպատակն է հզորացնել վարչական կարողությունները՝ տնտեսական և սոցիալական զարգացումը խթանելուն ուղղված միջազգային գործընկերությունների ստեղծման միջոցով տվյալ ոլորտում լավագույն փորձի և *նոու-հաուի* փոխանակման համար: Ինչպես ընդգծված է ՈւԹՀՎ վերլուծությունում, տեղական մակարդակով գործարարության համար բարենպաստ միջավայրի ստեղծումը կարևոր գործոն է զարգացման համար: Տարածաշրջանում տեղական կառավարման մարմինների կամ գործակալությունների ինտեգրումն ու համագործակցությունը կխթանեն կարողությունների հզորացումը, ինչպես նաև ընդհանուր խնդիրների նկատմամբ մոտեցումների և մեթոդաբանությունների փոխանակումը:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.

- սևծովյան ավազանում տեղական և տարածաշրջանային կառավարման մարմինների կարողությունների զարգացման ցանցի ստեղծում՝ տեղական զարգացման համար լավագույն փորձի և նորարարության փոխանակման միջոցով.
- քաղաքային և գյուղական տարածքների նորարարական պլանավորման, ինչպես նաև քաղաքային տարածքների զարգացման և վերականգնման կառավարման մեթոդաբանությունների խթանման նպատակով ցանցերի ստեղծում.
- ՓՄՁ-ների զարգացման նպատակով զարգացման գործակալությունների միջև գործընկերությունների ստեղծում՝ փորձի և զարգացման քաղաքականություններում նորարարության փոխանակման, ինչպես նաև

զարգացման հարցերով փորձագետների ուսուցման միասնական մեթոդաբանության կիրառմամբ.

- ՓՄՁ-ներին աջակցող տեղական մարմինների և հաստատությունների աշխատակազմի ուսուցում՝ հատկապես միջտարածաշրջանային նախաձեռնություններում աշխատանքային կարողությունների բարելավման նպատակով (օրինակ՝ շուկայավարման ծրագրեր, ապրանքների մշակում, փոքր ձեռնարկատիրության կառավարում).
- միգրանտների սոցիալական և տնտեսական ինտեգրմանն օժանդակող լավագույն փորձի փոխանակման խթանում (ներգրավում աշխատանքի շուկայում, կրթության ապահովում, լեզուների ուսումնասիրություն, բնակեցման հարցերով զբաղվող հատուկ ծառայություններ, սոցիալական ծառայություններ և իրավաբանական օգնություն և այլն).
- ուսումնական չափանիշների բարելավմանը (որակավորում և մասնագիտական ուսուցում՝ արտադրական ոլորտների պահանջներին համապատասխան), գործարարության զարգացմանը, որակավորման արտոնագրմանը և աշխատանքային շուկայում երիտասարդների ներգրավմանն ուղղված միջսահմանային գործողություններ.
- տարածաշրջանում տեղական իշխանությունների միջև երկկողմանի նախաձեռնությունների խթանում՝ միջսահմանային համագործակցության համար բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով.
- *Նոու-հաու*-ի փոխանակում և գործընկերությանն ուղղված ընդհանուր տեղական զարգացման նախաձեռնությունների նախապատրաստում:

Նպատակ 2. Համատեղ աշխատանք ընդհանուր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ

Ծրագրի հնարավորությունների և վտանգների, ինչպես նաև սահմանափակումների հանգամանալից գնահատումից հետո շրջակա միջավայրի պաշտպանության և զարգացման խնդիրները գերակա համարվեցին սևծովյան գործընկեր շրջանների համար: Վերը նշված բնապահպանական խնդիրների իրական միջսահմանային բնույթը, մասնավորապես, կհասցեագրվի՝ միջազգային գործընկերությունների և ցանցերի, ինչպես նաև այդ ոլորտում գործիքների, մեթոդաբանությունների և գործողությունների ինտեգրումը խթանելու միջոցով:

Գերակայություն 2. Շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության համար ռեսուրսների և կարողությունների փոխանակում

Նպատակ 2-ը կիրականացվի Գերկայություն 2-ի միջոցով: Այս գերակայությունը հիմնականում կենտրոնացած կլինի շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության վրա: Շրջակա միջավայրին վերաբերող խնդիրներին անդրադառնալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ծրագրին և գործընկերներին մատչելի տեխնիկական և քաղաքական գործիքներին: Միևնույն ժամանակ, այդ խնդիրները լիովին համապատասխանում են այնպիսի ծրագրի տեխնիկական և ֆինանսական շրջանակներին, ինչպիսին է Սևծովյան ավազանի ծրագիրը: Միջամտության հիմնական ոլորտներն են ծովային միջավայրի, ափերի և ափերից հեռու գտնվող բնական տարածքների պաշտպանությունը, ինչպես նաև թափոնների վերամշակման տեխնոլոգիաները և կառավարումը: Այս գերակայությունը կխթանի շրջակա միջավայրի պաշտպանության ու պահպանության նորարարական մոտեցումներն ու լավագույն գործելակերպի փոխանակումը

գիտական, տեխնիկական և վարչական կարողությունների և հզորությունների բնագավառում:

DABLAS նախաձեռնության հետ փոխկապակցվածության ապահովման համար, Դանուբի և սևծովյան ավազանի տարածաշրջանի ջրի և ջրային էկոհամակարգերի պահպանության նպատակով համագործակցության խթանմանն ուղղված ծրագրերում պետք է մատնանշվի, թե ինչպես են դրանք ապահովում համաձայնեցվածությունը DABLAS-ի նախաձեռնությունների հետ: Համանման համաձայնեցված մոտեցում է պետք դրսևորել նաև ՍՕՏՀ (շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող ծրագրերի), ինչպես նաև Սև ծովն աղտոտումից պաշտպանելու մասին կոնվենցիայի (աղտոտմանն առնչվող ծրագրեր) մասով:

Սույն գերակայության բոլոր երեք միջոցառումների ներքո կապերի հաստատումը կարևոր դերակատարություն ունի շրջակա միջավայրի ընդհանուր մարտահրավերների պատշաճ լուծումների փոխանակման և իրականացման գործում: Ծրագրերի ընտրության ժամանակ հաշվի է առնվելու, որ կապերի հաստատման համար տրվող ծրագրային աջակցությունը պետք է տրամադրվի միայն երկարաժամկետ և տեսանելի արդյունքներով ծրագրերին: Կապերի հաստատումը պետք է հստակ իրականացվի ընթացիկ բնապահպանական նախաձեռնությունների կամ Սևծովյան կոնվենցիայի շրջանակներում: Ամեն դեպքում, նպատակը ոչ թե նոր կառույցներ ստեղծելն է, այլ գործող կառույցների միջև համագործակցությունը հզորացնելն ու ընդլայնելը:

1. Ներգրավված աշխարհագրական տարածքները

Ծրագրի տարածքային համապատասխանելիության կանոնի համաձայն՝ դիտարկվող բոլոր շրջանները. հաշվի առնելով գերակայության շրջանակները՝ հատուկ ուշադրության են արժանանալու աղտոտման հիմնական աղբյուրներով վնասված և բնական ռեսուրսներով հարուստ տարածքները (այսինքն՝ քաղաքային և արդյունաբերական տարածքներ, ափեր, գետեր):

2. Թիրախային խմբերի և դրամաշնորհի շահառուների սահմանումները

Դիտարկվող բոլոր համապատասխան խմբերը՝ համաձայն ծրագրի 6.6 գլխում ներկայացված սահմանման. օրինակ՝ տեղական և տարածքային վարչական մարմինները, շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության ոլորտում գործող հասարակական կազմակերպությունները, հետազոտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները, շրջակա միջավայրի պաշտպանության գործակալությունները:

3. Թույլատրելի ծախսերը

Ներառում է ԵՄ համապատասխան կանոնակարգերով նախատեսված բոլոր տեսակի ծախսերը. որպես ընդհանուր կանոն, ներդրումները փոքր ենթակառուցվածքների և (կամ) սարքավորումների ձեռքբերման համար խորհուրդ է տրվում նախատեսել միայն այն դեպքում, երբ դա բխում է ծրագրի իրականացման պահանջներից՝ պատշաճ կերպով հիմնավորված փոքրաթիվ բացառությունների դեպքում:

4. Համաֆինանսավորման նկարագրությունը

Պետությունների կողմից համաֆինանսավորման չափը կկազմի ԵՄ ներդրման (բացառությամբ տեխնիկական աջակցության) 10%-ը:

5. Շահառու/Գլխավոր գործընկերները

Շահառուների բոլոր դիտարկվող խմբերը

Միջոցառում 2.1. Գետերի և ծովային համակարգերի, ինչպես նաև վերականգնվող էներգիայի ոլորտներում համընդհանուր մարտահրավերների հաղթահարման ուղղությամբ համատեղ գիտելիքների և տեղեկատվական բազայի հզորացում

Միջոցառումը միտված է սևծովյան ավազանի ծովային էկոհամակարգերի և գետերի դիտանցման, հսկողության և պաշտպանության ոլորտներում հետազոտությունների, նորարարությունների, իրազեկման և գիտական գործընկերությունների առավել խորը ինտեգրման և զարգացման խթանմանը:

Ինչ վերաբերում է այս միջոցառման միջոցով ծովային համակարգերի պաշտպանությանը, ծրագիրը նպատակ է հետապնդում՝ օգնեու շրջաններին էներգիայի այլընտրանքային ռեսուրսների, էներգաարդյունավետության և էներգախնայողության *նու-հաու*-ի, քաղաքականության և տեխնոլոգիական փորձառության մշակման գործում:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.

- աջակցություն ծովային բնական համակարգերին վերաբերող ոլորտներում գործող հետազոտական հաստատությունների և (կամ) տարածաշրջանային կազմակերպությունների միջև համատեղ գործողությունների և (կամ) տեխնիկատնտեսական ուսումնասիրության իրականացմանը.
- բնապահպանական հասարակական կազմակերպությունների և կրթական հաստատությունների միջև գործընկերությունների ստեղծման միջոցով փորձի և օգտակար փորձի փոխանակում.
- ափամերձ տարածքներում նավթի արտահոսքի դեպքերին արձագանքելու և ծովի աղտոտվածության հետևանքները մեղմելու համար պատասխանատու փրկարար մարմինների կարողությունների զարգացման նպատակով գործընկերությունների և ցանցերի ստեղծում.
- բնապահպանական գործոնների դիտանցման խթանում՝ սևծովյան ավազանում աղտոտման ոլորտում վերահսկողության համար պատասխանատու հաստատությունների միջև գործընկերություններ հաստատելու միջոցով.
- սևծովյան ավազանի ափամերձ շրջանների իշխանություններին օժանդակության տրամադրում արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիր մշակելու հարցում՝ աղտոտման հետևանքների կանխման հնարավորությունները կատարելագործելու նպատակով.
- հատկապես սևծովյան տարածաշրջանում շրջակա միջավայրի ռիսկերի դիտանցման և (կամ) հաղթահարման վերաբերյալ գիտական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով միջսահմանային գործընկերությունների ստեղծում.
- ցամաքային ծագում ունեցող, հատկապես գյուղատնտեսական գործունեության հետևանքով առաջացող, աղտոտման աղբյուրների բացահայտման, ինչպես նաև դրանց վերացման մեթոդների

ուսումնասիրության նպատակով գործընկերության ստեղծում կամ հզորացում.
- տարածաշրջանում ծովային համակարգի և գետերի դիտանցման, ստուգումների և պաշտպանության ոլորտներում գիտական ուսումնասիրությունների մշակում/խթանում.
- բնածին կամ մարդածին աղետների դեպքում համակարգման և համագործակցության հայեցակարգերի մշակում:

Միջոցառում 2.2. Հատուկ պահպանվող տարածքների պաշտպանության և պահպանության ոլորտում հետազոտության, նորարարության և իրազեկության խթանում

Այս միջոցառումը միտված է գործընկեր շրջաններում բնական տարածքների պաշտպանության շարունակական զարգացմանը: Միջոցառման նպատակը կիրագործվի կառավարման, ուսումնասիրության և տնտեսական նախաձեռնությունների ոլորտներում բազմատեսակ գործողությունների միջոցով:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.
- բնության պահպանվող տարածքների կառավարման համար պատասխանատու մարմինների միջև ցանցերի ստեղծում՝ փորձառության, օգտակար փորձի, տեխնիկական և գիտական մեթոդաբանություններում նորարարությունների փոխանակման, ինչպես նաև բնական ռեսուրսների դիտանցման, պաշտպանության և պահպանության համար.
- միջազգային շուկայում Սև ծովի բնության պահպանվող տարածքներում էկոլոգիական և մշակութային զբոսաշրջության խթանման նպատակով համատեղ նախաձեռնությունների մեկնարկ՝ տեղեկատվական և խթանման ընդհանուր գործիքների միջոցով.
- սևծովյան ավազանի բնության պահպանվող տարածքներում պլանավորման և կառավարման մեթոդաբանությունների համատեղ մշակման, ինչպես նաև դրանց վերաբերյալ տվյալների բազաների ստեղծման նպատակով ցանցերի ստեղծում կամ հզորացում.
- բնության պահպանվող տարածքներում բնակվող քաղաքացիների իրազեկության բարձրացում և վերապատրաստում:

Միջոցառում 2.3. Կոշտ թափոնների և ջրահեռացման համակարգերի տեխնոլոգիաների և կառավարման ոլորտում նորարարություններին ուղղված համագործակցության նախաձեռնությունների խթանում

Միջոցառումը միտված է սևծովյան բոլոր գործընկեր շրջաններում առկա հիմնական խնդիրներից մեկի հաղթահարմանը, այն է՝ թափոնների կառավարումը, ներառյալ ջրահեռացումը և կոշտ թափոնների կառավարումը: Թափոնների կառավարման ներկայիս եղանակը մեծ ազդեցություն ունի բնակչության առողջության, խմելու ջրի որակի, ինչպես նաև Սև ծովի շրջակա միջավայրի վրա:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.
- Հաստատությունների միջև գործընկերությունների ստեղծում թափոնների հեռացման նորարարական տեխնոլոգիաների և պրակտիկայի կիրառման ոլորտում.
- Աջակցություն տեղեկատվական և կրթական գործունեությանը, ներառյալ իրազեկության մակարդակի բարձրացման արշավները, ջրահեռացման,

կոշտ թափոնների կառավարման, ջրի խնայման և ջրի կրկնակի օգտագործման ոլորտներում.

- Զբոսաշրջության սեզոնային և տարածքային զգալի հոսքեր ունեցող շրջաններում թափոնների հեռացման համակարգերի կառավարման նորարար մոտեցումների նպատակով գործընկերությունների ստեղծում.
- ԵՄ-ի մոտեցումների հիման վրա կոշտ թափոնների կառավարման և ջրահեռացման ոլորտում օգտակար փորձի և կառավարման գործիքների փոխանակման նպատակով կառավարման մարմինների գործընկերությունների ստեղծում:

Նպատակ 3. Տեղական, միջանձնային գործողությունների խթանում

Սևծովյան ավազանի միջանձնային նախաձեռնությունների խթանումը հատկապես բարդ խնդիր է՝ հաշվի առնելով երկրների մեծ թիվը, տարածաշրջանի աշխարհագրական խոշոր չափերը, ինչպես նաև պատմական և աշխարհաքաղաքական նախապայմանները: Այնուամենայնիվ, գործընկերները համաձայնել են խթանել նման նախաձեռնությունները որպես առանցքային նպատակ: Վերջինիս հասնելու նպատակով իրականացվելիք գործողությունները կարող են ստեղծել կայուն համադաշնեցումներ 1-ին և 2-րդ նպատակների գերակայությունների ներքո իրականացվող գործողությունների հետ, որոնք բոլորն էլ կապված են մարդկային ռեսուրսների զարգացման, կառավարման ունակությունների, ինչպես նաև ավազանի համայնքների առավել սերտ ինտեգրման հետ:

Գերակայություն 3. Աջակցություն մշակութային և կրթական նախաձեռնություններին՝ ավազանում ընդհանուր մշակութային միջավայր ստեղծելու նպատակով

Երրորդ նպատակն իրականացվելու է Գերակայություն 3-ի միջոցով: Գերակայության հիմնական շեշտը կդրվի գործընկեր երկրներում հարուստ մշակութային ժառանգության և ընթացիկ մշակութային կյանքի ինտեգրման և ցանցային համագործակցության խթանման վրա: Նպատակին հասնելուն օժանդակող գործունեության հիմնական ոլորտներն ընդգրկում են երիտասարդ սերունդները, մշակութային ու կրթական հաստատությունները: Երկարաժամկետ կտրվածքով երկու ոլորտներն էլ առավել խոստումնալից են, մասնավորապես՝ տեղական ռեսուրսների օգտագործմամբ տեղական զարգացման ապահովման առումով: Կրթական հաստատություններն ու մշակութային միությունները կլինեն տվյալ ռազմավարության հիմնական գործիքները: Մշակութային հաստատությունների միջև համագործակցությունը կխթանվի հատկապես փորձի փոխանակման և մշակութային ժառանգության և ավանդույթների փոխճանաչման միջոցով: Այն ուղղված է սևծովյան ավազանի համայնքներում ընդհանուր մշակութային համակարգն ստեղծելուն, ինչն իր հերթին կմեղմացնի մարդկանց բաժանող սահմանների բացասական ազդեցությունը փոխըմբռնման և բարեկամական հարաբերությունների վրա:

1. Ներգրավված աշխարհագրական տարածքները

Ծրագրի տարածքային համապատասխանելիության կանոնի համաձայն՝ դիտարկվող բոլոր շրջանները, հաշվի առնելով գերակայության շրջանակները՝

հատուկ ուշադրության են արժանանալու աղտոտման հիմնական աղբյուրներով վնասված և բնական ռեսուրսներով հարուստ տարածքները (այսինքն՝ քաղաքային և արդյունաբերական տարածքներ, ափեր, գետեր):

2. Թիրախային խմբերի և դրամաշնորհի շահառուների սահմանումները

Դիտարկվող բոլոր համապատասխան խմբերը՝ համաձայն ծրագրի 6.6 գլխում ներկայացված սահմանման. օրինակ՝ տեղական և տարածքային վարչական մարմինները, մշակույթի և սոցիալական ոլորտներում գործող հասարակական կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները:

3. Թույլատրելի ծախսերը

Ներառում է ԵՄ համապատասխան կանոնակարգերով նախատեսված բոլոր տեսակի ծախսերը. որպես ընդհանուր կանոն, ներդրումները փոքր ենթակառուցվածքների և (կամ) սարքավորումների ձեռքբերման համար խորհուրդ է տրվում նախատեսել միայն այն դեպքում, երբ դա բխում է ծրագրի իրականացման պահանջներից՝ պատշաճ կերպով հիմնավորված փոքրաթիվ բացառությունների դեպքում:

4. Համաֆինանսավորման նկարագրությունը

Պետությունների կողմից համաֆինանսավորման չափը կկազմի ԵՄ ներդրման (բացառությամբ տեխնիկական աջակցության) 10%-ը:

5. Շահառու/Գլխավոր գործընկերները

Շահառուների բոլոր դիտարկվող խմբերը

Միջոցառում 3.1. Սևծովյան ավազանի համայնքներում մշակութային ցանցերի և կրթական փոխանակման խթանում

Միջոցառումը միտված է սոցիալական և տնտեսական զարգացմանն օժանդակելու նպատակով սևծովյան ավազանի համայնքների միջև սոցիալական և մշակութային առավել ամուր կապերի ստեղծմանը՝ համայնքների միջև բարիդրացիական հարաբերությունները, ինչպես նաև սևծովյան ավազանում գործող առավել կայուն և լավ ինտեգրված կազմակերպությունների գործունեությունը խթանելու համար: Այն ուղղված է հարևանների միջև փոխըմբռնումը, ինչպես նաև մշակութային տարբերությունների նկատմամբ հարգանքը խթանելուն: Նախատեսվող գործողությունները բազմատեսակ են, որոնցում ներգրավված են մշակութային, սոցիալական կամ միջէթնիկական հարաբերությունների ոլորտում գործող մշակութային հաստատություններ և հասարակական կազմակերպություններ: Սևծովյան ավազանում գործող կրթական հաստատությունների միջև կապերի բարելավումը նպաստելու է տարածաշրջանների միջև կրթական առումով բացերի լրացմանը:

Հիմնական ինդիկատիվ գործողություններն են.

- ժառանգած մշակութային արժեքների խթանման նպատակով գործընկերությունների ստեղծում.

- տարածաշրջանի ինքնության հզորացման նպատակով սևծովյան ավազանի մշակութային հաստատությունների ցանցերի ստեղծում.
- մշակութային կենտրոնների ցանցերի ստեղծում, բոլոր շրջանների մշակութային արժեքների տարածում.
- սևծովյան ավազանում ընդհանուր մշակութային միջոցառումների կազմակերպման միջոցով ավանդական մշակութային արժեքների վերաբերյալ գիտելիքների փոխանակման նպատակով գործընկերությունների հաստատում.
- սևծովյան ավազանի մշակութային ինտեգրման ուղիների ստեղծման նպատակով ուսանողների և գիտնականների փոխանակման կազմակերպում.
- համալսարանների, ավագ միջնակարգ դպրոցների և հետազոտական կենտրոնների գործընկերությունների ստեղծում՝ սևծովյան ավազանի ընդհանուր հետաքրքրության առարկա հանդիսացող թեմաների հիման վրա հատուկ կրթական ծրագրերի մշակման նպատակով.
- ընդհանուր մոտեցումները հաշվի առնելով՝ շուկայական տնտեսության կարիքներին համապատասխանող կրթական և մասնագիտական ուսուցման համակարգերի ստեղծման գործում փորձի փոխանակում.
- միգրացիայի և հակամարտության ռիսկերի խնդիրներին ուղղված գործընկերությունների ստեղծում:

Տեխնիկական աջակցությունը

Ծրագրի Տեխնիկական աջակցության (ՏԱ) բաղադրիչը միտված է աջակցելու ծրագրի արդյունավետ իրականացմանը՝ հետևյալ երկու հիմնական միջոցառումների ֆինանսավորման միջոցով.

- ծրագրի կառավարում. նախագծերի ընտրություն, ընթացիկ կառավարում, դիտանցում, աուդիտ և վերահսկողություն.
- ծրագրի ներքին և արտաքին հաղորդակցություն և տեղեկատվական հոսքեր. սեմինարներ, թարգմանություն, տեղեկատվության տարածում, գնահատում և հանրային միջոցառումներ:

Գործընկերների մեծ թիվը, դիտարկվող տարածքի մեծությունը, երեք տեսակի գործընկերների մասնակցությունը, ներառյալ ԵՄ անդամ պետությունները, բանակցությունների փուլում գտնվող մեկ թեկնածու երկիր և այլ գործընկեր երկրներ, ծրագրի իրականացումը դարձնում են ծախսատար՝ մարդկային, տեխնիկական և նյութատեխնիկական ռեսուրսների առումով, ինչպես նաև չափազանց թանկարժեք՝ ծրագրի ընդհանուր ֆինանսավորման առումով: Հետևաբար, ծրագրի իրականացման ընթացքում ՏԱ-ի գործողությունների համար կարող է առաջանալ ֆինանսական պակասուրդ, և պետք չէ բացառել ՏԱ-ի ուղղությամբ հատկացվելիք գումարների հնարավոր վերանայումը: Համաձայն ՏԱ-ի բյուջեի մոտավոր գնահատականների՝ ընթացիկ 10% առավելագույն գումարը չի բավարարի ՀՏՔ-ի պատշաճ գործունեության, ինչպես նաև ծրագրի այլ բաղադրիչների ապահովման համար: Հետևաբար, հնարավոր է ՏԱ-ի ուղղությամբ հատկացվելիք գումարների ավելացման նպատակով վերանայումը, եթե ծրագրի միջնաժամկետ գնահատումը կհիմնավորի այդ որոշումը, որը ենթակա է Հանձնաժողովի կողմից հաստատման:

Ռումինիան ծրագրում ֆինանսական ներդրում կանի ՀՂՄ-ի աշխատակազմի, գրասենյակի և վերադիր ծախսերի գծով:

Հունաստանը կկատարի ներդրում՝ ապահովելով սևծովյան ծրագրի Գլխավոր խորհրդատուի աշխատաքների հետ կապված ծախսերը, որը կգործի ՀՂՄ-ում, կունենա հստակ սահմանված դեր ու պարտականություններ՝ օժանդակություն տրամադրելով ծրագրի կառավարման գործընթացին: Թուրքիան ՏԱ-ի միջոցով ծրագրի իրականացմանը կօժանդակի ՆԱԳ-ի միջոցներից: Թուրքիան ինքնուրույն կվճարի ՀՂԿ-ի հանդիպումներին իր պատվիրակության մասնակցության հետ կապված ծախսերը, ծրագրերի ընտրության ծախսերը, ինպես նաև կապահովի վերապատրաստումը, տեղեկատվական ապահովումը և հրապարակայնությունը Թուրքիայի՝ դիտարկվող շրջանների հնարավոր շահառուների համար: Մյուս մասնակից երկրները կարող են ներդրում անել սեփական ռեսուրսներից՝ վճարելով ՀՏՔ-ի հետ համագործակցող Ազգային տեղեկատվական կենտրոնների (ԱՏԿ) աշխատակազմի ծախսերը: Այդ ԱՏԿ-ների խնդիրների մասին առավել մանրամասն տեղեկատվությունն ընդգրկված է 6-րդ գլխում:

Գործընկեր երկրները նաև հնարավորություն կունենան օգտվելու երեք տարի տևողությամբ (2007-2009թթ.) ԵՀ տարածաշրջանային կարողությունների ստեղծման նախաձեռնության (ՏԿՍՆ) ծրագրի 2-րդ փուլից, որը միտված է աջակցելու ԵՀԳԳ-ՄՍՀ բոլոր ծրագրերի իրականացմանը (ՏԱ տրամադրում ղեկավարման կառույցներին, հնարավոր շահառուների վերապատրաստում, տեղեկատվական և հրապարակայնության ապահովման միջոցառումներ):

ՀՂՄ-ն պատասխանատու է ՏԱ-ի միջոցների հետ կապված գնումների և պայմանագրեր կնքելու համար՝ համաձայն (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի: Ինչ վերաբերում է ՆԱԳ-ի միջոցներից վճարվող Թուրքիայի մասնակցությանը ՏԱ-ում, պայմանագիրը կնքվելու է թուրքական ՖՊԿՄ- ի կողմից (տես 6-րդ գլուխը):

1. Ներգրավված աշխարհագրական տարածքները

Բոլոր դիտարկվող տարածքները

2. Թիրախային խմբերի և դրամաշնորհի շահառուների սահմանումները

ՀՂՄ-ն և ՀՏՔ-ն հանդիսանալու են ՏԱ-ի ուղղակի շահառուներ: Այնուամենայնիվ, բոլոր մյուս (հնարավոր) գործընկերների մասնակցությունը կնախատեսվի ՏԱ-ի նախաձեռնություններում՝ ծրագրեր մշակելու և խթանելու, ինչպես նաև իրականացմանը աջակցություն տրամադրելու համար:

3. Թույլատրելի ծախսերը

Ներառում է ԵՄ համապատասխան կանոնակարգերով նախատեսված բոլոր տեսակի ծախսերը:

4. Համաֆինանսավորման նկարագրությունը

ԵՀ ֆինանսավորման ենթակա ՏԱ-ի բյուջեն կազմում է ծրագրի բյուջեին ԵՄ-ի կողմից տրամադրվող ընդհանուր ֆինանսավորման առավելագույնը 10%-ը[27]: ՀՂԿ-ն որոշումներ է կայացնում ՏԱ-ի միջոցների բաշխման վերաբերյալ[28]: Այս գերակայության համար չի նախատեսվում որևէ պետության համաֆինանսավորում, բացառությամբ ծրագրի մեկնարկի հետ կապված որոշ ծախսերի, ԵՀ-ի կողմից

[27] (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 18-րդ հոդված
[28] ՏԱ-ի միջոցների բաշխման ինդիկատիվ բյուջեն ներկայացված է հավելվածում

ծրագիրը հաստատելուց հետո և անդամ չհանդիսացող պետությունների կողմից Ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրելուց առաջ:

5. Շահառուները

ՏԱ-ն իրականացվելու է ՀՂՄ-ի կողմից: Արտաքին աջակցությունը կապահովվի (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 23-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերի համաձայն:

Միջոցառում 1. Ծրագրի կառավարումը և իրականացումը

Այս միջոցառումը կաջակցի հետևյալ մարմինների գործունեությանը. ՀՂՄ, ՀՏՔ, ՀԴԿ և (ծրագրերի) Ընտրող կոմիտեներ (ԸԿ-ներ): Հիշատակված մարմինների դերն ավելի մանրամասն նկարագրված է 6-րդ գլխում: Միջոցառումը պետք է հիմնականում կենտրոնանա ՀՂՄ-ին օժանդակող ՀՏՔ-ի ստեղծման և գործունեության վրա (համաձայն 6-րդ գլխի դրույթների): Աջակցությունը տրամադրվելու է հետևյալ հիմնական գործողությունների մասով.

- Համատեղ տեխնիկական քարտուղարության ստեղծում և գործունեություն.
- ծրագրի այլ ղեկավար մարմինների գործունեություն.
- ծրագրերի ընտրության ընթացակարգերի իրականացում.
- ծրագրի գնահատում՝ 6-րդ գլխի դրույթների և ՀՂՄ-ի կողմից նախապատրաստված ծրագրերի աուդիտի իրականացման պլանների համաձայն.
- աջակցություն ՀՂՄ-ին՝ ծրագրի իրականացմանը և ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարությանը վերաբերող թեմաների ուսումնասիրությունների և փորձագիտական խորհրդատվության առումով:

Ծրագրի գնահատումը կկազմակերպվի ԵՀ-ի կողմից՝ (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն:

Միջոցառում 2. Տեղեկատվական, խթանման և ծրագրերի մշակման հետ կապված գործողություններ

Այս միջոցառումը կֆինանսավորի ծրագրի տեղեկատվությանը և խթանմանն առնչվող բոլոր գործողությունները, ինչպես նաև բոլոր այն գործողությունները, որոնք ուղղված են ծրագրերի մշակմանը և ծրագրի ոլորտում գործընկերների միջև գործընկերությունների ստեղծմանը: Ծրագրի ֆինանսավորման հնարավորությունների և հայտ ներկայացնելու հրավերների մեկնարկի վերաբերյալ իրազեկության բարձրացման նպատակով տեղեկատվական գործողությունները կկազմակերպվեն տարբեր եղանակներով. դիտարկվող շրջաններում ՀՏՔ-ի կողմից կազմակերպված սեմինարների, ծրագրի ինտերնետային կայքի միջոցով, ինչպես նաև գրավոր նյութերի նախապատրաստման և ԱՏԿ-ի միջոցով տարածման եղանակով: ՀՏՔ-ն հնարավոր դիմողներին նույնպես կաջակցի միջազգային գործընկերոջ որոնման, նպատակների, գերակայությունների և իրականացման կանոնների վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև անաչառ խորհրդատվության տրամադրման գործում: Աջակցությունը տրամադրվելու է հետևյալ հիմնական գործողությունների մասով.

- տեղական և միջազգային հանդիպումներ.

- սեմինարներ, համաժողովներ, տեղեկատվության օրեր.
- նյութերի հրապարակում.
- ինտերնետային կայքի պատրաստում և գործարկում:

4.5 Դիտարկվող ծրագրերի բնույթը[29]

Սևծովյան ավազանի ծրագրի շրջանակներում կիրականացվեն երեք տեսակի ծրագրեր[30].

1. **Ինտեգրված ծրագրերի** շրջանակներում մի շարք երկրներում իրականացվում են տարբեր գործողություններ, որոնց միջոցով հնարավոր կլինի հասնել միջսահմանային նշանակության որոշակի նպատակի.
2. **Համաչափ ծրագրերի** շրջանակներում ծրագրում մասնակցող բոլոր երկրներում իրականացվում են համանման գործողություններ,
3. **Ծրագրեր,** որոնք իրականացվում են հիմնականում կամ ամբողջությամբ մեկ մասնակից երկրում, սակայն ունեն միջսահմանային նշանակություն:

Մեկ կամ մի քանի անդամ երկրների կամ մեկ կամ մի քանի գործընկեր երկրների գործընկերները բոլոր նախագծերը կներկայացնեն համատեղ[31]: Թուրքական գործընկերների մասնակցությունը համատեղ նախագծերում հնարավոր է միայն անդամ պետությունից առնվազն մեկ գործընկերոջ և (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի հավելվածում թվարկված երկրներից առնվազն մեկ գործընկերոջ մասնակցության դեպքում: Նախագծերը բոլոր դեպքերում պետք է լինեն միջսահմանային նշանակության: Հաշվի առնելով սևծովյան ավազանի ծրագրի և դրա նպատակների առանձնահատկությունները՝ գերակայությունը տրվելու է ինտեգրված նախագծերին: Ծրագրի բյուջեի սահմանափակ բաժին կտրամադրվի այն նախագծերին, որոնք հիմնականում կամ ամբողջությամբ կիրականացվեն մեկ մասնակից երկրում, բայց կլինեն միջսահմանային նշանակության: Հայտ ներկայացնելու հրավերներում կսահմանվեն յուրաքանչյուր նախագծի ֆինանսավորման նախընտրելի ծավալը և ներգրավված գործընկերների թիվը:

Ծրագրով սահմանվում են հետևյալ ծավալները.

Համատեղ նախագծեր	
Ծրագրի ընդհանուր բյուջեի առավելագույն թույլատրելի չափը	Նվազագույնը՝ 50 000 եվրո

Հայտերի հրավերներ ներկայացնելիս Համատեղ դիտանցման կոմիտեն կարող է փոփոխել բյուջեի վերը նշված շեմը՝ ըստ ծրագրի տեսակի (ինտեգրված, համաչափ և հիմնականում կամ ամբողջությամբ մեկ մասնակից երկրում իրականացվող) և հասցեագրվող գերակայությունների՝ չխախտելով սահմանված սահմանաչափերը (առանց նվազագույն շեմը նվազեցնելու): Նախընտրությունը տրվելու է այն

[29] (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգում նկարագրված են ԵՀԳԳ ՄՍՀ Íñ³·ñ»ñáí ¹Çï³ñÏíáÕÝ³Ë³·Í»ñÇ հիմնական բնութագրիչները՝ գործընկերությունների կառուցվածքի և նախագծերի գործողությունների հիմնական բնութագրիչների առնչությամբ: Սևծովյան ծրագրի դեպքում ՀՂՄ-ն օգտակար և հարմար է համարում ընդունել դիտարկվող նախագծերի բոլոր երեք տեսակները՝ ելնելով բոլոր գործընկերների շահերից: Այնուամենայնիվ, համաձայն գործընկերների կայացրած որոշման, գերակա է ճանաչվել ինտեգրված նախագծերի մոդելը:

[30] Իրականացման կանոնների նախագծի 41-րդ հոդված:

[31] Իրականացման կանոնների նախագծի 40-րդ հոդված:

ծրագրերին, որոնց մասնակցելու է առնվազն երեք գործընկեր, իսկ երկկողմանի ծրագրերի դեպքում կիրառվելու է որոշակի սահմանաչափ:

4.6 Ցուցանիշները

Ծրագրի իրականացումը և նպատակների իրագործումը կդիտանցվի և կգնահատվի մի խումբ համապարփակ ցուցանիշների միջոցով: Սահմանվել են երեք տեսակի ցուցանիշներ ԵՄ-ի մեթոդաբանությանը[32], ԵՀԳԳ-ՄՍՀ ռազմավարության ցուցումների և ԵՀԳԳ-ի ծրագրերի մշակման ուղեցույցի[33] համաձայն: Ցուցանիշների սահմանման համար ընդունված սկզբունքների և ռազմավարության միջոցով հնարավոր է դարձել ԵՄ դիտանցման և գնահատման մեթոդաբանության և Սևծովյան ավազանի ծրագրի առանձնահատկությունների միջև փոխկապակցվածության ապահովումը:

Ազդեցության ցուցանիշները

Ազդեցության ցուցանիշները սահմանելիս առաջին հերթին պետք է հաշվի առնել ծրագրի գործընկերության աշխատանքների ծավալի ու բարդության համեմատ ծրագրի շատ սահմանափակ բյուջեն, ինչպես նաև տարածքում առկա տնտեսական փոփոխությունների ազդեցիկ գործոնները: Բացի այդ, հեշտ չէ սահմանել այնպիսի ցուցանիշներ, որոնք կիրառելի կլինեն բոլոր երկրների համար՝ հաշվի առնելով տնտեսության կառուցվածքի, տնտեսական զարգացման մակարդակների, ինչպես նաև տնտեսական հաստատությունների և օրենսդրության բազմազանությունը: Դիտարկվող տարածաշրջանի վերաբերյալ վիճագրական տվյալների հավաքումը և վերլուծությունը նույնպես բարդ է, քանի որ ազգային վիճակագրական տվյալները տարաբնույթ են, իսկ տարածաշրջանային մակարդակով բոլոր երկրների համար համեմատելի վիճակագրական ուսումնասիրություններ գոյություն չունեն:

Այս խնդիրը հատկապես վերաբերում է գործընկեր երկրներին, որտեղ տարածաշրջանային մակարդակով վիճակագրությունն ավելի քիչ է զարգացել, քան ԵՄ անդամ երկրներում: Հաշվի առնելով այս բոլոր հանգամանքները, ծրագրի իրականացման ցուցանիշները սահմանելիս կիրառվել են պարզեցված որոշ հիմնական սկզբունքներ:

Առաջին սկզբունքը կայանում է նրանում, որ ստեղծվեն արդյունավետ մեխանիզմներ ծրագրի իրականացման ընթացքը վերահսկելու և ծրագրային նպատակների իրագործման աստիճանը գնահատելու համար: Երկրորդ սկզբունքը կայանում է նրանում, որ սահմանվեն հստակ և հեշտ գնահատվող ցուցանիշներ, ինչը թույլ կտա հնարավորինս սահմանափակել ծրագրի դիտանցման և գնահատման համար պահանջվող մարդկային և ֆինանսական ռեսուրսները՝ հաշվի առնելով ծրագրի բյուջեի սղությունը: Երրորդ սկզբունքը կայանում է նրանում, որ սահմանվեն այնպիսի ցուցանիշներ, որոնք համեմատելի, կիրառելի և բնորոշ կլինեն բոլոր գործընկեր երկրների համար:

---

[32] ¦Գնահատման մեթոդների ինդիկատիվ ուղեցույց. և գնահատման ցուցանիշներ», Գլխավոր տնօրինության 2007թ. թիվ 2 աշխատանքային փաստաթուղթ

[33] ԵՀԳԳ ՄՍՀ ռազմավարական փաստաթուղթ, 2006թ. սեպտեմբեր, «ԵՀԳԳ- Միջսահմանային համագործակցության ծրագրերի նախապատրաստման ուղեցույց», ԵՀ-ի 2006թ. աշխատանքային փաստաթղթի էջ 2.1

Հիմք ընդունելով այս սկզբունքները՝ առաջարկվող հնարավոր բոլոր տարբերակներից ծրագրի իրականացման փուլի համար ընտրվել են միայն սահմանափակ թվով ազդեցության ցուցանիշներ[34]: Ազդեցության ցուցանիշների բազիսային (ելակետային) մակարդակների որոշման, ինչպես նաև ծրագրի իրականացման ընթացքի վերահսկման ու ծրագրային նպատակների իրագործման աստիճանը գնահատելու համար նպատակահարմար կլիներ նախ վերլուծել հիշյալ ազդեցության ցուցանիշները առանձին երկրների մակարդակով և այնուհետև դիտարկել ստացված արդյունքները ծրագրի մակարդակով ամփոփելու հնարավորությունը՝ հաշվի առնելով ծրագրում ընդգրկված երկրների ազգային առանձնահատկությունները՝ կապված տնտեսական կառուցվածքի և վիճակագրական մեթոդաբանության հետ:

Արդյունքի ցուցանիշները

Արդյունքի ցուցանիշները սահմանելիս ենթադրվել է, որ դրանք պետք է կարևոր դեր խաղան Սևծովյան ծրագրում՝ մասնավորապես ծրագրի ընդհանուր և որոշակի նպատակների իրագործման ընթացքը դիտանցելու և դրանց կապն ավելի համապարփակ նպատակի հետ ապահովելու գործում: Ըստ էության, ԵՄ մեթոդաբանության համաձայն՝ բարձր որակ ունեցող և հեշտությամբ չափվող արդյունքի ցուցանիշներն ավելի արդյունավետ են ծրագրի գնահատման գործում, քան ազդեցության ցուցանիշները, քանի որ վերջիններս միշտ ենթակա են բազմաթիվ արտաքին գործոնների անվերահսկելի և ուժեղ ազդեցությանը: Հաջորդ հարցը, որը պետք է հաշվի առնել արդյունքի ցուցանիշները սահմանելիս, դիտանցման հետ կապված ծախսերի հարցն է, որը սակայն նշանակություն չի ունենա այն դեպքում, եթե արդյունքի ցուցանիշները հաշվարկվեն ծրագրի շրջանակներում ստեղծված դիտանցման համակարգից կամ շահառուների վերլուծական ավտոմատացված համակարգերից հեշտությամբ ստացվող տվյալների հիման վրա:

Այս նպատակով սահմանվել են գերակայություններից բխող մի շարք արդյունքի ցուցանիշներ, որոնք տրամաբանորեն կապված են ազդեցության ցուցանիշների հետ: Արդյունքի առաջարկվող ցուցանիշները տալիս են ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքների հստակ և ամբողջական նկարագրությունը և կարող են դիտանցվել՝ օգտագործելով հիմնականում ծրագրի գործընկերների կողմից տրամադրվող կամ համատեղ կառույցների կողմից ողջամիտ ջանքերի շնորհիվ իրականացվող օժանդակ ուսումնասիրությունների արդյունքում ստացվող տեղեկատվությունը:

Արդյունավետության ցուցանիշները

Ծրագրի արդյունավետության ցուցանիշները մշակվել են ԵՄ մեթոդաբանությամբ նախատեսված յուրաքանչյուր միջոցառման բովանդակության հիման վրա և համապատասխանեցվել են ծրագրի գերակայություններին և դրանց շրջանակներում իրականացվելիք միջոցառումներին: Մոտեցումները ձևավորելիս հաշվի են առնվել Սևծովյան ծրագրի առանցքում ընկած հետևյալ սկզբունքները.

- **Խնայողության** (արդյունավետության) սկզբունքը, որի թելադրանքով նախատեսվել են ցուցանիշներ, որոնք ծրագրից և առանձին նախագծերից ակնկալվող արդյունքները կապում են դրանց ֆինանսավորման ծավալների հետ:

[34] Հատկապես հաշվի են առնվել ԵՀԳԳ-ի շրջանակներում իրականացվող միջսահմանային համագործակցության ռազմավարության դրույթները. տես՝ ԵՀԳԳ-ի ՄՍՀ 2006թ. սեպտեմբերի ռազմավարություն, էջ 28-29:

Ըստ էության, Սևծովյան ծրագրի շրջանակներում հատկացվող ֆինանսավորումը չափազանց սահմանափակ է լինելու:

- Իրականացման ռազմավարությանը **համապատասխանության** սկզբունքը, որը թելադրում է իրականացման գործընթացի նկատմամբ ռացիոնալ մոտեցում, քանի որ ծրագրի կողմից ֆինանսական միջոցները հատկացվում են ըստ գերակայությունների, իսկ ծրագիրն իրականացվում է յուրաքանչյուր գերակայության մասով անցկացվող մրցույթների հրավերների միջոցով, առանց կոնկրետ միջոցառման համար նախատեսված ֆիքսված բյուջեի: Այդ պատճառով դժվար կլինի յուրաքանչյուր միջոցառման համար սահմանել արդյունավետության ցուցանիշի թիրախային միավոր և դիտանցման ընթացակարգ, հաշվի առնելով նաև այն, որ առանձին միջոցառումներ իրենց ծախսատարությամբ և կատարման ժամկետներով կարող են միանգամայն տարբեր լինել միմյանցից:

4.5-4.7 աղյուսակներում ներկայացված են ազդեցության, արդյունքի և արդյունավետության ցուցանիշները, առանձնացված է դիտանցման աղբյուրը, չափման միավորը, ելակետային ցուցանիշը և համապատասխան դեպքում նաև թիրախային ցուցանիշը:

Աղյուսակ 4.5 – Ազդեցության ցուցանիշները (ծրագրի մակարդակ)

Նկարագրությունը	Աղբյուրը	Չափման միավորը	Բազիսային արժեքը	Թիրախային արժեքը
Ազդեցություն 1. Դիտարկվող շրջաններում գործող ՓՄՁ-ների թիվը (տեղական ռեսուրսների վրա հիմնված տեղական տնտեսական համակարգերի զարգացման ցուցանիշ)	Ազգային վիճակագրական ծառայություններ	Միավորներ	271 554[35]	Դրական զուտ աճ[36]
Ազդեցություն 2. Ժամանող զբոսաշրջիկների թիվը (տեղական տնտեսությունների կողմից արտահանվող ծառայությունների և միջազգային ինտեգրման կողմնորոշման ցուցանիշ)	Ազգային վիճակագրական ծառայություններ	Միավորներ	13 349 680[37]	Դրական աճ
Ազդեցություն 3. Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների թիվը (միջսահմանային համագործակցությամբ խթանված բարձրագույն կրթության մատչելիության աճի ցուցանիշ)	Համաշխարհային բանկի ցուցանիշներ - Ազգային վիճակագրական ծառայություններ	%	44%	Դրական աճ
Ազդեցություն 4. Բարելավված ջրային ենթակառուցվածքի հասանելիությունը բնակչության համար (միջսահմանային համագործակցությամբ բարելավված կայուն զարգացման ցուցանիշ)	Համաշխարհային բանկի ցուցանիշներ - Ազգային վիճակագրական ծառայություններ	%	86%	Դրական աճ
Ազդեցություն 5. Ավազանի տարածքում մշակութային և գիտական համագործակցության մշտական նախաձեռնություններ (ավազանում մշակութային և գիտական ինտեգրման ցուցանիշներ)	Ազգային վիճակագրական ծառայություններ և մշակութային հաստատություններ, հատուկ ուսումնասիրություններ	Միավորներ	Տես վիճակագրությունը և որակական տեղեկատվությունը 1-ին և 2-րդ գլուխներում	Դրական աճ

[35] Բացառությամբ Հայաստանի, Բուլղարիայի և Թուրքիայի

[36] Գործընկերները կարող են դիտարկել թիրախային կոնկրետ արժեքի սահմանումը՝ հաշվի առնելով ծրագրի սահմանափակ բյուջեն և գործընկեր երկրներում տնտեսական գործընթացների բարդությունը:

[37] Բացառությամբ Հայաստանի, Բուլղարիայի և Թուրքիայի

Աղյուսակ 4.6 – Արդյունքի ցուցանիշները (գերակայության մակարդակ)

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1				
Նկարագրությունը	**Աղբյուրը**	**Չափման միավորը**	**Բազիսային արժեքը**	**Թիրախային արժեքը**
Արդյունք 1. Նախագծի ավարտից հետո տարբեր երկրների տնտեսավարողների միջև կայուն տնտեսական հարաբերություններ ստեղծող գործընկերությունների թիվը	Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ – ուսումնասիրություններ	Միավորներ	Կիրառելի չէ	5
Արդյունք 2. Նախագծերում ներգրավվելուց հետո նորարարություններ որդեգրած և նոր արտադրություններ հիմնող ձեռներեցների թիվը	Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ – ուղղակի ուսումնասիրություններ	Միավորներ	Կիրառելի չէ	10
Արդյունք 3. Գործունեություն ծավալող և նոր հմտություններ ու ունակություններ ձեռք բերող ձեռնարկատերերի/տնտեսավարող սուբյեկտների թիվը	Դիտանցման համակարգ - Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունք 4. Զբոսաշրջության ոլորտում մշտական համատեղ նոր արտադրությունների կամ գործընկերությունների թիվը		Միավորներ	Կիրառելի չէ	5
Աղյունք 5. Նոր ծառայություններ կամ առկա ծառայությունների մատուցման նոր ուղիներ խթանող տեղական ինքնակառավարման մարմինների և հաստատությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2				
Նկարագրությունը	**Աղբյուրը**	**Չափման միավորը**	**Բազիսային արժեքը**	**Թիրախային արժեքը**
Արդյունք 6. Շրջակա միջավայրի ոլորտում գործող հաստատությունների/գործակալությունների միջև կայուն հարաբերություններ հիմնող գործընկերությունների պայմանագրերի/համաձայնագրերի թիվը	Դիտանցման համակարգ - Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	5
Արդյունք 7. Գործողություններին մասնակցող և նոր ունակություններ ու հմտություններ ձեռք բերող ձեռնարկատերերի/մասնագետերի/հետազոտողների թիվը	Դիտանցման համակարգ - Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունք 8. Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում գործող այն հաստատությունների թիվը, որոնք որդեգրում են նախագծերի շրջանակներում մշակվող նորարարությունները	Գործողության վերջնական հաշվետվություններ, Մասնակիցների դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	10

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3				
Նկարագրությունը	**Աղբյուրը**	**Չափման միավորը**	**Բազիսային արժեքը**	**Թիրախային արժեքը**
Արդյունք 9. Նախագծերի իրականացումից հետո հիմնված մշակութային և կրթական մշտական ցանցերի թիվը	Նախագծերի վերջնական հաշվետվություններ, Դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	10

Արդյունք 10. Մշակութային նախագծեր իրականացնող և կրթական/մշակութային նպատակներն իրագործող քաղաքացիների թիվը	Նախագծերի վերջնական հաշվետվություններ, Դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունք 11. Գործընկեր երկրներում փորձնակություն կամ վերապատրաստում անցնող ուսանողների թիվը	Նախագծերի վերջնական հաշվետվություններ, Դիտանցման հաշվետվություններ	Միավորներ	Կիրառելի չէ	50

Աղյուսակ 4.7 – Արդյունավետության ցուցանիշները (գերկայության մակարդակ)

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 1

Նկարագրությունը	Աղբյուրը	Չափման միավորը	Բազիսային արժեքը	Թիրախային արժեքը
Արդյունավետություն 1. Ստեղծված տեղական զարգացման նախագծերի գծով միջսահմանային գործընկերությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10
Արդյունավետություն 2. Նախագծի գործողություններում ներգրավված ձեռներեցների/տնտեսավարող սուբյեկտների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունավետություն 3. Սկսնակ գործարարների համար վերապատրաստման/նորարարության խթանման նախաձեռնությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10
Արդյունավետություն 4. Կարողությունների ստեղծման նախաձեռնություններում ներգրավված տեղական ինքնակառավարման մարմինների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունավետություն 5.Ուսումնասիրված և (կամ) ստեղծված տեղեկատվական, կապի, տրանսպորտային և առևտրային հարաբերությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 2

Նկարագրություն	Աղբյուրը	Չափման միավորը	Բազիսային արժեքը	Թիրախային արժեքը
Արդյունավետություն 6. Բնապահպանության գծով իրականացված սեմինարների և (կամ) ուսումնասիրությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	20
Արդյունավետություն 7. Նախագծի գործողություններում ներգրավված գործակալությունների/միությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	100
Արդյունավետություն 8. Նախագծի նախաձեռնությունների շրջանակում աջակցություն ստացած/ներգրավված հետազոտական/կրթական հաստատությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	50
Արդյունավետություն 9. Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում մեկնարկած վերապատրաստման նախաձեռնությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10
Արդյունավետություն 10. Իրազեկության միջոցառումներում մասնակցող բնական տարածքների բնակիչների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	100

ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ 3

Նկարագրություն	Աղբյուրը	Չափման միավորը	Բազիսային արժեքը	Թիրախային արժեքը
Արդյունավետություն 11. Մշակութային և կրթական նախաձեռնությունների նպատակով ստեղծված գործընկերությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	5
Արդյունավետություն 12. Նախագծերի կողմից արտադրված և տարածված լրատվական առաջարկների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	10
Արդյունավետություն 13.Նախագծի գործողություններում մասնակցող մշակութային գործակալությունների/միությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	50
Արդյունավետություն 14. Նախագծի նախաձեռնությունների միջոցով աջակցություն ստացած կրթական հաստատությունների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	20
Արդյունավետություն 15. Նախագծերի շրջանակներում իրականացված միջոցառումներում և գործողություններում մասնակցող քաղաքացիների/ուսանողների թիվը	Դիտանցման համակարգ	Միավորներ	Կիրառելի չէ	1000

5 Ինդիկատիվ ֆինանսավորման պլանը

Ծրագիրը կֆինանսավորվի ԵՀԳԳ-ի կողմից՝ արտաքին և ներքին միջոցների ներգրավման միջոցով: Թուրքիայի մասնակցությունը կֆինանասավորվի Նախանդամակցային աջակցության գործիքի (ՆԱԳ) միջոցներից: Մասնակից երկրները կֆինանսավորեն ծրագրերը ԵՄ ներդրման առնվազն 10%-ին համարժեք չափով: Բացի այդ, ծրագրի արդյունավետ իրականացումը երաշխավորելու համար ԵՄ տրամադրվող գումարների 10%-ը կհատկացվի ՏԱ-ին:

Ծրագրի իրականացման ժամանակահատվածի համար (2007-2013թ.թ.) ԵՀԳԳ ընդհանուր բյուջեն կազմում է 17 305 944 եվրո: Թուրքիայի մասնակցության համար ԵՄ ՆԱԳ-ի միջոցներից տրամադրվող ինդիկատիվ հատկացումը 2007-2009թ.թ. համար կկազմի տարեկան 1 000 000 եվրո, որը պետք է հաստատվի ֆինանսավորման վերաբերյալ կայացվող ամենամյա որոշումներով:

Ամբողջ ֆինանսավորումը բաշխվել է ըստ գերակայությունների՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- գործընկերների տեսանկյունից երեք գերակայությունների նպատակահարմարությունը ընդհանուր նպատակի իրագործման համար,
- յուրաքանչյուր սահմանված միջոցառման համար դրամաշնորհների ակնկալվող պահանջարկը,
- ինդիկատիվ գործողությունների ակնկալվող ծախսերը,
- առաջարկվող տարբեր միջոցառումների իրականացման մասով հնարավոր շահառուների ֆինանսական կարողությունները:

Հիմք ընդունելով այս չափորոշիչները՝ առավելագույն ծավալով հատկացումը (40%) տրամադրվել է Գերակայություն 2-ին, որն ուղղված է շրջակա միջավայրի պաշտպանության և պահպանության ընդհանուր մարտահրավերների հաղթահարմանը: Գերակայություններ 1-ի և 3-ի համար տրամադրվել է հատկացումների ընդհանուր գումարի համապատասխանաբար 35 և 25 տոկոսը: Աղյուսակ 5.1-ում ներկայացված է միջոցների տեղաբաշխումն ըստ աղբյուրների և նպատակների: Թուրքիայի մասնակցության համար տրամադրվող ՆԱԳ միջոցները նույն սկզբունքով կբաշխվեն ըստ գերակայությունների:

Աղյուսակ 5.1 ԵՀԳԳ ՄՄՀ ծրագրի ինդիկատիվ ֆինանսավորման պլանը, որը ծրագրի ամբողջ ժամանակահատվածի կտրվածքով ներկայացնում է ֆինանսավորումն ըստ գերակայությունների

Գերակայություններն ըստ ֆինանսավորման աղբյուրի /եվրո/՝									
	ԵՀԳԳ ԵՀ ֆինանսավորում (a) *	ՆԱԳ ԵՀ ֆինանսավորում (b)	ԵՀԳԳ համաֆինանսավորում (c)	ՆԱԳ համաֆի-նանսավո-րում (d)	ԵՀԳԳ-ի համաֆինանսավորման չափը (%) (e) ՀԴԿ	ՆԱԳ համաֆինանսավորման չափը (%) (f)	ԵՀԳԳ ֆինանսա-վորում, ընդամենը (g) = (a)+(c)	ՆԱԳ ֆինանսավորում, ընդամենը (h) = (b)+(d)	ԵՀ ֆինանսավորում, ընդամենը (i) = (g)+(h)
Գերակա-յություն 1	5,500,000	2,224,700	550,000	392,594	10%	15%	6,050,000	2,617,294	8,667,294
Գերակա-յություն 2	6,250,000	2,528,000	625,000	446,118	10%	15%	6,875,000	2,974,118	9,849,118
Գերակա-յություն 3	3,825,350	1,547,300	382,535	273,053	10%	15%	4,207,885	1,820,353	6,028,238
Տեխնիկա-կան աջակցություն	1,730,594	700,000	կիրառելի չի	123,529	եթե կիրառելի է	15%	1,730,594	823,529	2,554,123
Ընդամենը	17,305,944	7,000,000	1,557,535	1,235,294	9%	15%	18,863,479	8,235,294	27,098,773

Մասնակից երկրների համաֆինանսավորումը կազմում է ԵՄ ֆինանսավորման, բացառությամբ ՏԱ-ի բաղադրիչը, 10%-ը: Համաֆինանսավորումը ծածկում է ամբողջ ծրագիրը, սակայն, դրա իրականացումը դյուրին դարձնելու համար, յուրաքանչյուր հաստատված ծրագրի մասով պահանջվում է համաֆինանսավորման միանման չափ (10%): Յուրաքանչյուր մասնակից երկիր ինքն է որոշում, թե համաֆինանսավորման ինչպիսի համակարգ կիրառի (պետական կամ տարածաշրջանային/տեղական, թե շահառուի մակարդակով):

A	B	C	D	E	F	G	H	I
	ԵՀ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԵՀԳԳ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	ԵՀ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՆԱԳ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	ԵՀԳԳ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	ՆԱԳ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ	ԾՐԱԳՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԵՀ ԵՀԳԳ ֆինանսավորում	ԾՐԱԳՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ. ԵՀ ԵՀԳԳ ֆինանսավորում	ԾՐԱԳՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԵՀ ՆԱԳ ֆինանսավորում -	ԾՐԱԳՐԻ ԻՆԴԻԿԱՏԻՎ ՆԱԽՆԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ. ԵՀ ՆԱԳ ֆինանսավորում
2008								
Ծրագրեր			0	0	0	0	0	0
տա			կիրառելի չէ	17,647	210,168	210,168	100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2008	2,378,974	1,166,667	0	17,647	210,168	210,168	100,000	100,000
2009								
Ծրագրեր			132,455	94,546	3,311,369	1,324,548	1,339,401	535,760
տա			կիրառելի չէ	17,647	318,028	318,028	100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2009	2,600,655	1,166,667	132,455	112,193	3,629,397	1,642,576	1,439,401	635,760
2010								
Ծրագրեր			274,763	196,125	3,557,697	2,747,626	1,439,036	1,111,375
տա			կիրառելի չէ	17,647	442,137	442,137	100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2010	2,652,668	1,166,667	274,763	213,772	3,999,834	3,189,763	1,539,036	1,211,375
2011								
Ծրագրեր			362,124	258,483	3,839,708	3,621,236	1,553,105	1,464,737
տա			կիրառելի չէ	17,647	442,137	442,137	100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2011	3,402,250	1,166,667	362,124	276,130	4,281,845	4,063,373	1,653,105	1,564,737
2012								
Ծրագրեր			419,405	299,370	4,866,576	4,194,053	1,968,458	1,696,432

տա			կիրառելի չէ	17,647	318,124	318,124	100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2012	3,456,365	1,166,667	419,405	317,017	5,184,700	4,512,177	2,068,458	1,796,432
2013								
Ծրագրեր			271,457	193,765	0	2,714,572	0	1,098,004
տա			կիրառելի չէ	17,647			100,000	100,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2013	2,815,032	1,166,665	271,457	211,412	0	2,714,572	100,000	1,198,004
2014								
Ծրագրեր			97,332	69,475	կիրառելի չէ	973,315	կիրառելի չէ	393,692
տա			կիրառելի չէ	7,059	0	0	40,000	40,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2014	կիրառելի չէ	կիրառելի չէ	97,332	76,534	0	973,315	40,000	433,692
2015								
Ծրագրեր			0	0	կիրառելի չէ	0	կիրառելի չէ	0
տա			կիրառելի չէ	5,294			30,000	30,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2015	կիրառելի չէ	կիրառելի չէ	0	5,294	0	0	30,000	30,000
2016								
Ծրագրեր			կիրառելի չէ	0	կիրառելի չէ	0	կիրառելի չէ	0
տա			կիրառելի չէ	5,294			30,000	30,000
ԸՆԴԱՄԵՆԸ 2016	կիրառելի չէ		կիրառելի չէ	5,294	0	0	30,000	30,000
			x		x			
ԸՆԴԱՄԵՆԸ 2007-2016	17,305,944	7,000,000	1,557,535	1,235,294	17,305,944	17,305,944	7,000,000	7,000,000
ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ			9%	15%				

ԵՀ ինդիկատիվ նախնական պարտավորությունները 2011, 2012 և 2013 թվականների մասով ենթակա են միջնաժամկետ կտրվածքով վերանայման

6 Համատեղ կառույցները և իրավասու մարմինների նշանակումը

Ծրագրի անխափան իրականացումն ապահովելու նպատակով ծրագրի կազմման և իրագործման համար պատասխանատու Համատեղ աշխատանքային հանձնախմբի (ՀԱՀ) կողմից նշանակվել են հետևյալ մարմինները.

- **Համատեղ դիտանցման կոմիտեն (ՀԴԿ)** վերահսկում և դիտանցում է ծրագրի իրականացումը և պատասխանատու է նախագծերի իրականացման համար ներկայացվող հայտերի հաստատման համար՝ **Ընտրող կոմիտեի (ԸԿ)** կողմից տրված գնահատականի հիման վրա,
- **Համատեղ ղեկավարման մարմինը (ՀՂՄ)** պատասխանատու է ծրագրի կառավարման և իրագործման համար,
- **Համատեղ տեխնիկական քարտուղարությունն (ՀՏՔ)** աջակցում է ՀԴԿ-ին և ՀՂՄ-ին իրենց պարտականությունների իրականացման հարցում,
- **Ազգային տեղեկատվական կենտրոնները (ԱՏԿ)** տեղեկություններ են տրամադրում հնարավոր շահառուներին՝ ծրագրի շրջանակներում իրենց երկրներում պլանավորվող միջոցառումների վերաբերյալ,
- **Աուդիտ իրականացնող մարմինը (ԱԻՄ)** իրականացնում է ՀՂՄ-ի ծախսերի և հաշիվների տարեկան ֆինանսական աուդիտը, ինչպես նաև Գործադիր մարմնի աուդիտը՝ Թուրքիայում ՆԱԳ-ի միջոցների օգտագործման մասով:
- **Ազգային մարմինները (ԱՄ-ներ)** ծրագրի պատրաստման փուլում ՀՂՄ-ի գործընկերներն են և պատասխանատու են իրենց համապատասխան երկրներում ծրագրի մշակման գործընթացի համակարգման, ՀԴԿ-ի հանդիպումներին մասնակցելու և ԸԿ-ի անդամների թեկնածությունները վերջինիս հաստատմանը ներկայացնելու համար: ՀՂՄ-ն և Բուլղարիայի և Հունաստանի ԱՄ-ները նաև կնքելու են փոխըմբռնման հուշագիր անտեղի ծախսերի վերադարձման վերաբերյալ: Գործընկեր երկրների ԱՄ-ները ստորագրելու են Ֆինանսավորման համաձայնագիր (ՖՀ) ԵՀ-ի հետ: Թուրքիայում ԱՄ-ի դերը կատարելու է Գործադիր մարմինը (ԳՄ),
- **Ֆինանսների և պայմանագրերի հարցերով կենտրոնական մարմինը (ՖՊԿՄ)** Թուրքիայում գործում է որպես համատեղ ծրագրերում մասնակցող թուրք գործընկերների հետ ծրագրի անունից պայմանագրեր կնքող մարմին՝ Նախանդամակցային աջակցության գործիքի (ՆԱԳ) միջոցների ֆինանսավորմամբ:

6.1 Համատեղ դիտանցման կոմիտեն

Ծրագրին մասնակցող երկրների կողմից կստեղծվի Համատեղ դիտանցման կոմիտե (ՀԴԿ): ՀԴԿ-ն լինելու է ծրագրի շրջանակներում համատեղ որոշումներ կայացնող մարմինը:

Համատեղ դիտանցման կոմիտեի խնդիրները

ՀԴԿ-ն ունի հետևյալ հիմնական խնդիրները.

- հաստատել ՀՂՄ-ի աշխատանքային ծրագիրը,
- նշանակել ԸԿ՝ նախագծերի իրականացման հայտերի գնատատման համար,

- հաստատել հայտերի փաթեթները՝ նախքան ՀՂՄ-ի կողմից հայտերի հրավերների ներկայացումը,
- սահմանել կիրառման ենթակա ընտրության չափորոշիչները և հաստատել դրանցում՝ ծրագրի կարիքներին համապատասխան կատարված ցանկացած փոփոխություն,
- կայացնել որոշումներ նախագծերի վերջնական ընտրության, ինչպես նաև յուրաքանչյուր նախագծի բյուջեի ֆինանսավորման վերաբերյալ,
- կայացնել որոշումներ տեխնիկական աջակցության գծով միջոցների և ռեսուրսների, ներառյալ մարդկային ռեսուրսների տեղաբաշխման վերաբերյալ,
- յուրաքանչյուր նիստում քննարկել ՀՂՄ-ի կողմից ընդունված վարչական որոշումները,
- տարին առնվազն մեկ անգամ մանրամասն ուսումնասիրել ՀՂՄ-ի կողմից ներկայացված աշխատանքային և ֆինանսական հաշվետվությունը,
- ՀՂՄ-ի կողմից ներկայացվող փաստաթղթերի հիման վրա պարբերաբար ուսումնասիրել ծրագրի ընդհանուր և հատուկ նպատակների գծով արձանագրված առաջընթացը,
- անհրաժեշտության դեպքում առաջարկություններ ներկայացնել ԵՀ-ին ծրագրում այնպիսի փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որոնք հնարավորություն կտան բարելավելու ծրագրի արդյունավետությունը կամ կառավարումը,
- մանրամասն ուսումնասիրել ՀՂՄ-ի կողմից իր ուշադրությանը ներկայացված խախտումների հնարավոր դեպքերը և (կամ) դրանց շտկման անհրաժեշտությունը:

Համատեղ դիտանցման կոմիտեի կազմը և ընթացակարգային կանոնները

Յուրաքանչյուր մասնակից երկիր ՀԴԿ-ում նշանակում է մեկ ներկայացուցիչ՝ Հանձնաժողովի կողմից ծրագիրը հաստատվելուց հետո մեկամսյա ժամկետում: Ներկայացուցիչները նշանակվում են որպես պաշտոնատար անձինք, այլ ոչ որպես անհատներ: Բացի այդ, մասնակից երկրները կարող են համատեղ որոշում կայացնել այլ մասնակիցների, հատկապես ներգրավված շրջանների ներկայացուցիչների՝ որպես դիտորդ հրավիրելու վերաբերյալ: Յուրաքանչյուր ազգային պատվիրակություն ունենալու է մեկ ձայնի իրավունք: Թուրքիայի դեպքում, Թուրքիայում ԵՀ պատվիրակության ներկայացուցիչները ՀԴԿ-ի նիստերին մասնակցում են խորհրդատուի կարգավիճակով՝ առանց քվեարկելու իրավունքի[38]: ԵՀ ներկայացուցիչները ՀԴԿ-ի նիստերին մասնակցում են որպես դիտորդներ: ՀՂՄ-ի և ՀՏՔ-ի ներկայացուցիչները ՀԴԿ-ի նիստերին մասնակցում են առանց քվեարկելու իրավունքի:

ՀԴԿ-ի նիստերը նախագահելու է ՀՂՄ-ի ներկայացուցիչը՝ առանց քվեարկելու իրավունքի:

ՀՂՄ-ը, ՀՏՔ-ի օժանդակությամբ, պատասխանատու է քարտուղարության և ՀԴԿ նիստերի կազմակերպման համար (հրավերների, տեղեկությունների տրամադրման և այլն): Յուրաքանչյուր նիստից հետո ՀՏՔ-ն պատրաստելու է նախագահողի և քարտուղարի կողմից ստորագրված արձանագրությունները, որոնք տրամադրվելու են հանձնաժողովի բոլոր անդամներին և ԵՀ-ին:

---

[38] Բացի այդ, Թուրքիայում ԵՀ պատվիրակության ներկայացուցիչների մասնակցությունը (ՆԱԳ-ի ներքո հատկացվող միջոցներով) պետք է նպաստի համատեղ նախագծերում թուրք գործընկերների մասնակցության հնարավոր բոլոր խոչընդոտների վերացմանը վաղ շրջանում:

ՀԴԿ-ի որոշումները պետք է ընդունվեն փոխհամաձայնության կարգով: Առանձին դեպքերում, երբ ընդհանուր համաձայնության հնարավոր չէ հասնել, հատկապես նախագծերի վերջնական ընտրության և դրանց հատկացվելիք դրամաշնորհների չափին վերաբերող հարցերում, ՀԴԿ-ի որոշումները կայացվում են քվեարկությամբ՝ տասը ձայնից ութի մեծամասնությամբ: Որոշումները կարող են կայացվել նաև գրավոր ընթացակարգով: ՀԴԿ-ի նիստերն անցկացվում են տարին առնվազն մեկ անգամ կամ ՀՂՄ-ի կամ Եվրոպական հանձնաժողովի առնվազն մեկ անդամի պատշաճ կերպով հիմնավորված պահանջով:

ԵՀ-ի կողմից ծրագրի հաստատումից հետո առաջին նիստի ընթացքում ՀԴԿ-ն պետք է հաստատի իր ընթացակարգային կանոնները:

6.2. Համատեղ ղեկավարման մարմինը

Համատեղ ղեկավարման մարմինը (ՀՂՄ) պատասխանատու է ծրագրի կառավարման և իրականացման համար: ՀՂՄ-ն ծրագրի Պայմանավորվող մարմինն է է, չնայած որ Պայմանավորվող մարմնի որոշ խնդիրներ դրվելու են ՀԴԿ-ի վրա: Այդ խնդիրները, որոնք սահմանվում են (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգով, հետևյալն են.

- ԸԿ անդամների թեկնածությունների առաջադրում,
- ընտրության չափորոշիչների սահմանում,
- նախագծերի վերջնական ընտրության և ծրագրից հատկացվող ֆինանսական միջոցների առավելագույն չափի վերաբերյալ որոշման կայացում:

ԵՀԳԳ-ի կանոնակարգերի պահանջներին համապատասխան, ՀՂՄ-ը հիմնելու է առանձին և անկախ գրասենյակներ՝ վավերացման և աուդիտի գործառույթներն իրականացնելու համար: ՀՂՄ-ի ֆինանսական բաժինը ապահովելու է ծրագրի առանձին և անկախ հաշվապահական հաշվառումը՝ ֆինանսական դիտանցման տվյալներն ըստ նպատակների և գերակայությունների ներկայացնելու նպատակով: ՀՂՄ-ի ներքին աուդիտի բաժինը (այսինքն՝ Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանաշինության նախարարության աուդիտի տնօրինությունը) իրականացնելու է տարեկան աուդիտ ստորև նկարագրված ընթացակարգով:

ՀՂՄ-ն պատասխանատու չէ ՆԱԳ-ի միջոցների ֆինանսական կառավարման համար, որոնցով ապահովվում է Թուրքիայի մասնակցությունն այս ծրագրում: Այս պարտականությունը դրվելու է Թուրքիայի ՖՊԿՄ-ի՝ որպես ՆԱԳ միջոցների գծով իրավասու մարմնի, ինչպես նաև Գործադիր մարմնի վրա: ՀՂՄ-ը և Թուրքիայի ՖՊԿՄ-ն ստորագրելու են համագործակցության արձանագրություն, որով սահմանվելու են ծրագրի իրականացումը համակարգելու համար անհրաժեշտ աշխատանքային ընթացակարգերը:

Համատեղ ղեկավարման մարմնի խնդիրները

ՀՂՄ-ի համար նախատեսված խնդիրների համաձայն.

ՀՂՄ-ի Գործառնական բաժինը՝

- ղեկավարում է ՀԴԿ-ն, կազմակերպում դրա աշխատանքը, հրավիրում նիստերը՝ վերջինիս հետ համաձայնեցված ընթացակարգային կանոնների համաձայն,
- պատասխանատու է հայտերի հրավեր ներկայացնելու, ինչպես նաև նախագծերի ընտրության ընթացակարգի համար,

- հետևում է ՀԴԿ-ի կողմից նախագծերի ընտրությանը, տարբեր նախագծերի մասով պայմանագրեր ստորագրում շահառուների և կապալառուների հետ,
- իրականացնում է ՏԱ ծախսերը՝ ՀՏՔ-ի օժանդակությամբ և Ֆինանսական բաժնի հետ համագործակցությամբ,
- մշակում է տարեկան զեկույցներ և, ՀԴԿ-ի հաստատումից հետո, ուղարկում դրանք ԵՀ-ին՝ նախքան յուրաքանչյուր տարվա հունիսի 30-ը[39];
- ֆինանսական և այլ ցուցանիշների հիման վրա դիտանցում է ծրագրի իրականացումը,
- ֆինանսական կառավարման, դիտանցման, հաստատման, աուդիտի և գնահատման նպատակով յուրաքանչյուր նախագծի համար ստեղծում է տվյալների վարման համակարգ՝ Ֆինանսական բաժնի հետ համագործակցությամբ,
- հաստատում է աշխատանքային ստուգումների հաշվետվությունները, որոնք հավաստում են նախագծի շահառուների կողմից ներկայացված հատուցման պահանջագրերը,
- ապահովում է ծրագրի պատշաճ տեղեկատվական և իրազեկման պլանի իրականացումը,
- իրականացման համաձայնագիր է կնքում ՀՏՔ-ի հետ՝ խնդիրների և պարտականությունների պատվիրակման նպատակով,
- սույն ծրագրին մասնակցող անդամ պետությունների հետ կնքում է փոխհամաձայնության հուշագիր՝ խախտումների դեպքում միջոցների վերադարձման ընթացակարգի վերաբերյալ,
- ՀԴԿ-ին ծանուցում է խախտումների և վերադարձման դեպքերի մասին:

ՀՂՄ-ի Ֆինանսական բաժինը՝

- ծրագրի իրականացման համար բացում է անհատական և առանձին հաշիվներ և վարում դրանք այնպես, որ հնարավոր լինի դիտանցել ծրագիրն ըստ նպատակների, գերակայությունների և միջոցառումների,
- կառավարում է ծրագրի ֆինանսական հոսքերը, հաստատում վճարման պահանջագրերը և վճարումներ կատարում նախագծի շահառուներին,
- վճարման պահանջագրերը ներկայացնում է ԵՀ-ին: Մասնավորապես, ՀՂՄ-ի Ֆինանսական բաժինը ֆինանսավորման բոլոր հայտերը ուղղում է ԵՀ-ին և պատրաստում կից փաթեթը (աուդիտի և ֆինանսական հաշվետվություններ),
- ստանում է ԵՀ-ի կողմից կատարված վճարումները (նախնական ֆինանսավորում, միջանկյալ ֆինանսավորում և վերջնական մնացորդի վճարում) և փոխանցում այդ միջոցները նախագծերի շահառուներին,
- հաստատում է ֆինանսական ստուգման հաշվետվությունները, որոնք հավաստում են նախագծի շահառուների կողմից ներկայացված հատուցման պահանջագրերը: Նախագծի ավարտին և անհրաժեշտ աուդիտի իրականացման արդյունքում, ՀՂՄ-ը կատարում է վերջնական վճարումներն և ընդունում վերադարձման հրամաններ,
- ապահովում է, որ խախտման հետևանքով առաջացած ցանկացած ծախս վերադարձվի,
- ՀՂՄ-ի Օպերատիվ շտաբին ծրագրի տարեկան հաշվետվությունների կազմման նպատակով տրամադրում է անհրաժեշտ ֆինանսական տվյալները:

ՀՂՄ-ի Աուդիտի բաժինը՝

[39] (ԵՀ) Ãիվ 951/2007 կանոնակարգի 28-րդ հոդվածին համապատասխան:

- իրականացնում է ՀՂՄ-ի ներքին ֆինանսական հոսքերի և ընթացակարգերի ամենամյա աուդիտը: Այդ աուդիտի անմիջական պատասխանատուն Ներքին աուդիտի բաժինն է: Ամենամյա ներքին աուդիտի հաշվետվությունները կներկայացվեն ՀԴԿ-ին և ԵՀ-ին[40],
- ապահովում է ՀՂՄ-ի կատարած ծախսերի և հաշիվների ամենամյա ֆինանսական աուդիտի իրականացումը[41] (տես բաժին 6.4): Ռումինիայում ստեղծված ԱՄ-ը պատասխանատու է այդ աուդիտի համար:
- յուրաքանչյուր հաջորդ տարվա համար մշակում է ֆինանսավորվող նախագծերի աուդիտի անցկացման պլան[42]:

Համատեղ ղեկավարման մարմնի նշանակումը

Բոլոր մասնակից երկրների համաձայնությամբ Ռումինիայի Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանային շինարարության նախարարությունը նշանակվել է որպես ՀՂՄ-ի գործառույթներ իրականացնող մարմին: ՀՂՄ-ի ներքո օպերատիվ կառավարման, ֆինանսական կառավարման և աուդիտի գործառույթների հստակ տարանջատման անհրաժեշտության (ինչպես նկարագրված է (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի հոդված 14.5-ում) հետ կապված՝

- *Միջազգային տարածքային համագործակցության տնօրինության եվրոպական տարածքային համագործակցության գլխավոր տնօրինությունը* պատասխանատու է ծրագրի իրականացման ընդհանուր վերահսկման համար, ինչպես նաև ծրագրի օպերատիվ կառավարման, հանձնաժողովներում մասնակցության, ՀԴԿ-ին հաշվետվություններ ներկայացնելու համար. Եվրոպական տարածքային համագործակցության գլխավոր տնօրենը կզբաղեցնի ՀՂՄ-ի ղեկավարի, իսկ Միջազգային տարածքային համագործակցության տնօրենը՝ ՀՂՄ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնը,
- *Ծրագրերի հաստատման և վճարումների գլխավոր տնօրինությունը* պատասխանատու է նախագծերին վճարումներ կատարելու և վերադարձման հրամաններ ընդունելու համար, ինչպես նաև ծրագրի տարեկան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման, ԵՀ-ից միջոցներ ստանալու և նախագծի շահառուներին փոխանցումներ կատարելու համար,
- *Աուդիտի տնօրինությունը* պատասխանատու է ծրագրի աուդիտի համար (տես բաժին 7.3):

Սևծովյան ծրագրի գլխավոր խորհրդատուն, որն առաջարկվել և ֆինանսավորվել է հույն գործընկերների կողմից, գտնվելու է ՀՂՄ-ում, *Միջազգային տարածքային համագործակցության տնօրինությունում*: Գլխավոր խորհրդատուն ունենալու է հստակ սահմանված դերակատարություն ու պարտականություններ՝ նպաստելով ծրագրի կառավարմանը: Ռումինիան և Հունաստանը սահմանելու են համատեղ չափորոշիչներ գլխավոր խորհրդատու ընտրելու համար:

ՀՏՔ-ն օժանդակելու է ՀՂՄ-ին ծրագրի ընթացիկ կառավարման գործում: ՀՂՄ-ի կողմից ՀՏՔ-ին պատվիրակվող հստակ խնդիրները կամրագրվեն երկու մարմինների միջև ստորագրվելիք համաձայնագրում:

---

[40] (ºÐ) Ãիվ 951/2007 կանոնակարգի 29-րդ հոդվածին համապատասխան:
[41] (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 31-րդ հոդվածին համապատասխան:
[42] Այդ աուդիտի իրականացման համար ՀՂՄ-ն կարող է պայմանագիր կնքել արտաքին աուդիտորների հետ ((ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 37-րդ հոդված):

ՀՂՄ-ի աշխատակազմում ներգրավված են Ռումանիայի պետական ծառայողներ, որոնք աշխատավարձ են ստանում Ռումինիայի պետական բյուջեից: Փորձառու և պատշաճ վերապատրաստում անցած անձնակազմ, ինչպես նաև ծրագրի կառավարման բարձր մասնագիտական չափանիշ ապահովելու նպատակով, համաձայն Ռումինիայի օրենսդրության, ՀՂՄ-ի աշխատակազմը ստանում է պետական ծառայողների համար նախատեսված միջինից բարձր աշխատավարձ և օգտվում որոշակի արտոնություններից:

ՀՂՄ-ում ամբողջ աշխատաժամանակով ներգրավվելու է անհրաժեշտ որակավորում ստացած այնպիսի թվով անձնակազմ, որպեսզի ապահովվի ծրագրի արդյունավետ կառավարումը՝ ծրագրի շրջանակներում նախատեսված գործողությունների ծավալին, բովանդակությանը և բարդությանը համապատասխան:



Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանաշինության նախարարություն
Համատեղ ղեկավարման մարմին
Աշխատակազմի ինդիկատիվ թիվը

6.3 Համատեղ տեխնիկական քարտուղարությունը

ՀՂՄ-ն կստեղծի Համատեղ տեխնիկական քարտուղարություն (ՀՏՔ)՝ ծրագրի իրականացման հետ կապված խնդիրները լուծելու համար: ՀԴԿ-ը կհաստատի դրա կառուցվածքը, կազմը, աշխատակազմը և աշխատակարգային կանոնները: ՀՏՔ-ն ֆինանսավորվելու է տեխնիկական աջակցության բյուջեից[43]: ՀՏՔ-ի տարեկան բյուջեն և աշխատանքային ծրագիրը կհաստատվեն ՀՂՄ-ի և ՀԴԿ-ի կողմից: ՀՏՔ-ի խնդիրների իրականացման համար պատասխանատվությունը կրում է ՀՂՄ-ն:

ՀՏՔ-ն կապահովվի անհրաժեշտ ռեսուրսներով: ՀՏՔ-ն կունենա միջազգային աշխատակազմ՝ ծրագրով դիտարկվող տարածաշրջանի վերաբերյալ համապատասխան գիտելիքներով և համագործակցության միջազգային նախագծերի գնահատման և կառավարման տեխնիկական ունակություններով: ՀՏՔ-ի աշխատակազմը պետք է կարողանա օժանդակել ծրագրի իրականացմանը բոլոր մասնակից երկրներում: Պայմանագրային հարաբերություններին, ֆինանսավորմանը, աշխատակազմի կառավարմանը վերաբերող մանրամասները և այլ հարցեր կսահմանվեն ՀՂՄ-ի և ՀՏՔ-ի միջև կնքվող համաձայնագրով:

ՀՏՔ-ի խնդիրները

ՀՏՔ-ը կօժանդակի ՀՂՄ-ին ծրագրի իրականացման աշխատանքների ամենօրյա գործում, իսկ նրա խնդիրները կսահմանի ՀԿՄ-ը: Դրանք հետևյալն են՝

- օժանդակել ԸԿ-ին և ՀԴԿ-ին իրենց պարտականությունը կատարելու գործում.
- իրականացնել տեղեկատվություն և հրապարակայնություն ապահովող աշխատանքներ՝ նախագծերի կայացմանն օժանդակելու նպատակով (ինտերնետային կայքի ստեղծում և վարում, աշխատաժողովների և սեմինարների կազմակերպում և այլն).
- գործել որպես ԸԿ-ի և ՀԴԿ-ի քարտուղարություն, այսինքն՝ կազմակերպել հանդիպումներ, կազմել արձանագրություններ, պատրաստել, կատարել ՀՂՄ-ի կողմից հաստատման ենթակա որոշումները և հետևել դրանց կատարմանը.
- ներկայացնել նախագծերի իրականացման հայտերի հրավերներ՝ ՀԴԿ-ի որոշումներին համապատասխան և ՀՂՄ-ի հետ համաձայնեցնելով, պատրաստել մրցութային փաստաթղթերը (հայտի ձևեր և ուղեցույցներ հայտատուների համար), տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրել հայտատուներին, ստանալ և գրանցել նախագծերի իրականացման հայտերը (նախնական եզրակացություն չի

[43] Ելնելով ՏԱ սահմանափակ բյուջեից՝ ՀՏՔ-ն կֆինանսավորվի նաև այլ աղբյուրներից, եթե այդպիսիք լինեն:

կարող տրվել հայտատուի համապատասխանելիության, գործընկերոջ, գործողության կամ հատուկ գործունեության մասին).

- պատրաստել ԸԿ-ի և ՀԴԿ-ի հանդիպումներին վերաբերող փաստաթղթեր, իրականացնել նախագծերի իրականացման համար հայտերի վարչական և համապատասխանելիության ստուգումներ, պատրաստել պարզաբանման մասին դիմումներ և կազմել նիստերի բացման զեկույցներ.
- դիտանցել ֆինանսավորվող նախագծերի իրականացման առաջընթացը, ներառյալ ֆինանսական առաջընթացը, ֆինանսական հաշվետվությունների և գործունեության մասին զեկույցների ստուգման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տեղում իրականացվող ստուգայցերի միջոցով.
- կառավարել ծրագրի/նախագծի իրականացումը՝ Եվրոպական տեղեկատվական համագործակցության կառավարման տեղեկատվական համակարգում (ԵՏՀ-ԿՏՀ) տվյալներ ներմուծելու միջոցով, ինչը հնարավորություն կտա ծրագրերի դիտանցման համար քանակական և որակական տեղեկատվություն ապահովել.
- օժանդակել ՀՂՄ-ին նախագծերի ֆինանսական կառավարման գործում, մասնավորապես, ստուգել նախագծերից ստացված տեխնիկական, ֆինանսական հաշվետվությունները և ստուգումների մասին զեկույցները.
- ապահովել նախագծի արդյունքների և համագործակցության լավագույն փորձի տարածումը (ծրագրի տեղեկագիր, Շահառուների հանդիպումներ և այլն).
- սերտ կապեր հաստատել և տեղեկությունների կանոնավոր փոխանակում ապահովել ԱՄ-ների և ԱՏԿ-ների միջև.
- համագործակցել համապատասխան կազմակերպությունների, հաստատությունների և ցանցերի հետ՝ ծրագրի նպատակներն իրագործելու համար:

Համատեղ տեխնիկական քարտուղարության նշանակումը

Ծրագրի ՀՏՔ-ն կհիմնադրվի Ռումինիայում ՀՂՄ-ի կողմից՝ ՀԴԿ-ի նախնական համաձայնությունից հետո, (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 16-րդ հոդվածին համապատասխան:

Եթե որոշվի հիմնադրել ՀՏՔ, Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանային շինարարության նախարարությունն իր համակարգման ներքո կհիմնադրի նոր կառույց՝ համաձայն Ռումինիայի օրենսդրության: Աշխատակազմի հավաքագրման կարգը կախված կլինի աշխատակազմի աշխատավարձերի համար նախատեսվող ֆինանսական միջոցներից, այսինքն՝ դա հնարավոր կլինի իրականացնել միջազգային մրցույթի կամ մասնակից երկրներից գործուղված աշխատակազմի միջոցով: ՀՏՔ-ի աշխատակազմը բաղկացած կլինի 4-5 անձից:

ՀՏՔ-ի չհիմնադրման դեպքում՝ ՀՂՄ-ն կստանձնի 6.2 բաժնով նախատեսված բոլոր պարտականությունները և, ըստ անհրաժեշտության, կընդլայնի իր կազմը:

Լրացուցիչ ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ Սոչիում հնարավոր կլինի ստեղծել ՀՏՔ-ի մասնաճյուղ:

Ազգային տեղեկատվական կենտրոնները[44]

Ազգային տեղեկատվական կենտրոններ (ԱՏԿ) կարող են հիմնադրվել յուրաքանչյուր մասնակից երկրում: Գործընկերները կնշեն այն ազգային կառույցները, որոնք իրականացնելու են այդ գործառույթը: ԱՏԿ-ը ծրագրի

[44] Այդ մարմինների ստույգ թիվը և դրանցից յուրաքանչյուրի պարտականությունները կսահմանվեն ծրագրի իրականացման կառուցվածքի, ՏԱ-ի առկայության, Թուրքիայի և անցումային միջոցառումների համար հատուկ դրույթների շուրջ վերջնական համաձայնության գալուց հետո:

շրջանակներում նախատեսված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ կտրամադրի հնարավոր շահառուներին իրենց երկրներում: ԱՏԿ-ի հիմնադրման արդյունքում՝ յուրաքանչյուր երկրում կլինի առնվազն մեկ անձ, որը հնարավոր շահառուներին տեղեկություններ կտրամադրի իրենց իսկ լեզվով՝ հաշվի առնելով տվյալ երկրի առանձնահատկությունները:

ԱՏԿ-ի աշխատակազմը կվերապատրաստվի ՏԱ-ի բյուջեից և ԿՁՏՆ II-ից տրամադրվող աջակցությամբ: Ծրագրի ՏԱ-ի բյուջեի սահմանափակ ֆինանսական միջոցների պատճառով ԱՏԿ-ի աշխատակազմի և գործառնական կամ ընթացիկ ծախսերը չեն ֆինանսավորվի ՏԱ-ի բյուջեից. այդ ծախսերը պետք է վճարվեն մասնակից երկրների կողմից:

ԱՏԿ-ի գործունեության ինդիկատիվ ուղղությունները հետևյալն են՝

- տեղեկություններ տրամադրել հնարավոր շահառուներին իրենց երկրներում (կազմակերպել փոքրամասշտաբ սեմինարներ, ծրագրի ինտերնետային կայքից նրանց ազգային լեզուներով թարգմանված նյութեր տրամադրել, տեղեկացնել հայտերի հրավերների մասին, և, ի թիվս այլոց, բացատրել կանոնները և ընթացակարգերը).
- կապեր հաստատել այլ երկրների ԱՏԿ-ների հետ (ուղղակիորեն կամ ՀՏՔ-ի միջոցով)՝ գործընկերների որոնման գործընթացը պարզեցնելու համար.
- վարել տվյալների փոքրածավալ բազա (հնարավոր) շահագրգիռ կողմերի մակարդակով:

6.4 Աուդիտ իրականացնող մարմինը

Ինչպես նշված է (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 31-րդ հոդվածում և թիվ 1638/2006 կանոնակարգի 10(5) հոդվածում, ՀՂՄ-ն ենթակա է տարեկան արտաքին փաստացի աուդիտի, որն իրականացվում է ՀՂՄ-ից լիովին անկախ կազմակերպության կողմից: Ելնելով գոյություն ունեցող գործելակերպերից ու համակարգերից՝ **Ռումինիայի Հաշվիչ դատարանի աուդիտ իրականացնող մարմինը,** բոլոր մասնակից երկրների հետ համաձայնեցմամբ, կանցկացնի ՀՂՄ-ի հաշիվների տարեկան ֆինանսական փաստացի աուդիտ:

Աուդիտ իրականացնող մարմնի պարտականությունը ՀՂՄ-ի կատարած ուղղակի ծախսերի աուդիտի իրականացումն է: Դա կապահովի նաև ՀՂՄ-ի հաշիվների ճշգրտությունը, հետևաբար, նաև ՀՂՄ-ի կողմից վճարների կատարումը նախագծերի շահառուներին:

Աուդիտ իրականացնող մարմնի պատրաստած տարեկան արտաքին աուդիտի հաշվետվությունը կներկայացվի որպես ՀՂՄ-ի տարեկան զեկույցի հավելված և կհաստատի ՀՂՄ-ի կողմից ներկայացվող տարեկան ֆինանսական հաշվետվությունում ընդգրկված եկամուտների և ծախսերի մասին հայտարարագիրը: Մասնավորապես, այն կհաստատի, որ ներկայացված ծախսերը փաստացի կատարվել են, ստույգ են և օրինական:

6.5 Թուրքական մարմինները

Համաձայն ՆԱԳ-ի կանոնների՝ թուրքական մարմինները պետք է ստեղծեն Գործադիր մարմին, որը պատասխանատու կլինի ՆԱԳ-ի ֆինանսական միջոցների կառավարման համար, որոնք հատկացվում են ԵՀԳԳ Սևծովյան ավազանի ծրագրում Թուրքիայի մասնակցությունն ապահովելու նպատակով: Գործադիր մարմնի կազմում է պետք է լինի Իրականացնող գործակալություն, որը պատասխանատու է ՆԱԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող գնումների և դրամաշնորհների համար անցկացվող մրցույթների, պայմանագրերի կնքման, վճարումների, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար: Այս գործառույթները կիրականացվեն Թուրքիայի Պայմանագրերի և ֆինանսների կենտրոնական մարմնի կողմից:

Գործադիր մարմինն իրականացնում է մի շարք գործառույթներ, որոնցից են, մասնավորապես՝

- մասնակցությունը ՀԴԿ-ում.
- ՆԱԳ-ի կողմից ֆինանսավորվող և համատեղ նախագծերին մասնակցող թուրք գործընկերների կողմից իրականացվող գործողությունների դիտանցումը.
- ՀՂՄ-ի կողմից օգտագործվող ԵՏՀ-ԿՏՀ-ի հետ համատեղելի ՝ հաշվետվողական և տեղեկատվական առանձին համակարգի ստեղծումը, վարումը և թարմացումը.
- ստուգումների անցկացումը՝ համոզվելու համար, որ ՆԱԳ-ի հայտարարված ծախսերը փաստացի իրականացվել են կիրառվող կանոններին համապատասխան, կամ ապրանքներն ու ծառայություններն առաքվել են հաստատման մասին որոշմանը համապատասխան, և որ վերջնական շահառուի կողմից ներկայացված վճարման պահանջագրերը ճշգրիտ են: Անհրաժեշտության դեպքում, այդ ստուգումները տարածվում են գործարքների վարչական, ֆինանսական, տեխնիկական և ֆիզիկական կողմերի վրա.
- սերտ համագործակցությունը ՀՂՄ-ի, ՀՏՔ-ի և ՀԴԿ-ի հետ դիտանցման և զեկույցներ ներկայացնելու հարցում, մասնավորապես Թուրքիայում ՆԱԳ-ի միջոցներից ֆինանսավորվող գործունեության մասով:

Բացի այդ, Աուդիտ իրականացնող նշանակված մարմինն անցկացնում է ՆԱԳ-ի միջոցների աուդիտ՝ Խորհրդի (ԵՀ) թիվ 1085/2006 կանոնակարգը կիրարկող՝ Հանձնաժողովի (ԵՀ) 2007 թվականի հունիսի 12-ի թիվ 2499/2007 կանոնակարգի 29-րդ հոդվածին համապատասխան:

6.6 Ծրագրով դիտարկվող գործընկերները

Պետական մարմինները, պետական մարմիններին հավասարեցված սուբյեկտները[45], տեղական և տարածաշրջանային մարմինները, հանրային շահերի համար նախագծեր իրականացնող հասարակական կազմակերպությունները և շահույթ չհետապնդող կազմակերպությունները, ոչ պետական սուբյեկտները,

[45] Պետական մարմիններին հավասարեցված սուբյեկտները հանրային իրավունքով կարգավորվող սուբյեկտներն են, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի մարտի 31-ի 2004/18/ԵՀ հրահանգի 1(9) հոդվածով՝ յուրաքանչյուր մասնակից երկրի ազգային օրենսդրության պահպանմամբ:

ինչպես սահմանված է ԵՀԳԳ կանոնակարգի 14(ը) հոդվածով, դիտարկվում են ծրագրով աջակցություն ստանալու նպատակով:

Որպես կանոն, սույն ծրագրի շրջանակներում ֆինանսավորման համար կարող են դիմել միայն այն սուբյեկտները, որոնք գտնվում են ծրագրով դիտարկվող տարածաշրջանում: Ծրագրի տարածաշրջանից դուրս գտնվող նման մարմինների մասնակցությունը ենթակա է հաստատման ՀԴԿ-ի կողմից՝ հայտատուների համար ուղեցույցների շրջանակներում: Բացառություն կարող է արվել միայն այն լուրջ հիմնավորմամբ, որ առանց տվյալ գործընկերոջ մասնակցության նախագծերի իրականացումը անհնար է, կամ դրանց նպատակների իրագործումը դժվար է, ինչպես նշված է (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 40(2) հոդվածում:

Այս դասակարգումներում չընդգրկված իրավաբանական անձինք հրավիրվում են մասնակցելու նախագծերի իրականացմանը՝ Ասոցիացված գործընկերոջ կարգավիճակով: Ասոցիացված գործընկերները պետք է իրենց գործունեությունը ֆինանսավորեն իրենց միջոցներից և իրավունք չունեն ԵՀԳԳ կամ ՆԱԳ ֆինանսավորում ստանալ ծրագրից:

Շահառուների (Գլխավոր գործընկերներ) և այլ գործընկերների պարտականությունները

Յուրաքանչյուր նախագծի համար գործընկերները համատեղ նշանակում են Շահառու (Գլխավոր գործընկեր): ԵՀԳԳ-ի միջոցներից իրականացվող ֆինանսավորման դեպքում՝ Շահառուն ՀՂՄ-ի հետ ստորագրում է դրամաշնորհային պայմանագիր, որով սահմանվում են նախագծի իրականացման բոլոր պայմանները, ՀՂՄ-ի հետ հարաբերությունները, ինչպես նաև անտեղի վճարված գումարների վերադարձման պայմանները (համագործակցության համաձայնագիր):

Շահառուն ստանձնում է հետևյալ պարտականությունները՝

- ՀՂՄ-ի հետ ստորագրել դրամաշնորհային պայմանագիր.
- «համագործակցության համաձայնագրում» սահմանել նախագիծն իրականացնող գործընկերների միջև հարաբերությունները՝ մասնավորապես ներառելով դրույթներ, որոնք կապահովեն տվյալ գործողության համար հատկացված ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը, այդ թվում՝ անտեղի վճարված գումարների վերադարձման պայմանները.
- կազմակերպել անտեղի ծախսված գումարների վերադարձը.
- ապահովել ամբողջ նախագծի իրականացումը.
- ԵՀԳԳ-ի ներդրումը փոխանցել նախագծում ներգրավված գործընկերներին.
- համոզվել, որ նախագծում ներգրավված գործընկերների ներկայացրած ծախսերը կատարված են գործողության իրականացման նպատակով և համապատասխանում են այն միջոցառումներին, որոնց շուրջ համաձայնության են եկել գործընկերները.
- ապահովել ողջ նախագծի սահուն ֆինանսական կառավարումը: Ծախսերի ստուգման նպատակով պայմանագրեր կնքել աուդիտորների հետ՝ ծրագրի ընթացակարգերին համապատասխան[46].
- պահանջել ծախսերի հատուցում ՀՂՄ-ից և փոխանցել դրանք գործընկերներին.

[46] Ծրագրի ընթացակարգերը PRAG-ով սահմանված ընթացակարգերն են՝ այն շեղումներով ու լրացումներով, որոնք համաձայնեցվել են գործընկերների միջև և հաստատվել ԵՀ-ի կողմից:

- գրանցել և պահել նախագծի փաստաթղթերը (բնօրինակները և պատճենները)՝ դրամաշնորհային պայմանագրով սահմանված կարգով.
- ՀՂՄ-ին և ՀՏՔ-ին տրամադրել դիտանցման ցուցանիշներին վերաբերող բոլոր տվյալները, ինչպես ձևակերպված է դրամաշնորհային պայմանագրում:

Գործընկերներն ստանձնում են հետևյալ պարտականությունները՝

- ապահովել նախագծի գործողությունների իրականացումն իրենց պատասխանատվությամբ՝ նախագծի պլանին և Շահառուի հետ ստորագրված պայմանագրին համապատասխան.
- համագործակցել նախագծում ներգրավված գործընկերների հետ նախագծի իրականացման, զեկույցներ ներկայացնելու և դիտանցում կատարելու հարցում.
- ֆինանսական և ընթացիկ հաշվետվությունը՝ ներառյալ բոլոր օժանդակ փաստաթղթերը, ներկայացնել այն մարմնին, որը պատասխանատու է նախագծի համար սահմանված յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ծախսերի ստուգման համար, և ապահովել լիարժեք համագործակցություն և օժանդակություն՝ ստուգումը ժամանակին և ճշգրիտ կերպով կատարելու համար.
- ծախսերում հայտնաբերված խախտումների դեպքում ստանձնել պատասխանատվություն և Շահառուին հատուցել նրանից անտեղի ստացված գումարները:

Հատուկ դրույթներ Թուրքիայի համար

Մեկ կամ ավելի թուրք գործընկերների կողմից իրականացվող համատեղ նախագծերի համար վերջիններս իրենց թվից նշանակում են **ՆԱԳ-ի ֆինանսական գլխավոր շահառու** («Գլխավոր շահառու» ՆԱԳ-ի տերմինաբանությամբ[47]): ՖՊԿՄ-ն ՆԱԳ-ի համապատասխան միջոցներ ստանալու համար ՆԱԳ-ի ֆինանսական գլխավոր գործընկերոջ հետ կստորագրի դրամաշնորհային պայմանագիր՝ սահմանելով նախագծի իրականացման բոլոր ընթացակարգերը, համատեղ նախագծի (ԵՀԳԳ-ի միջոցներ) վերաբերյալ պայմանագրի ստորագրման մասին ՀՂՄ-ից ծանուցում ստանալուց հետո:

ՆԱԳ-ի ֆինանսական գլխավոր գործընկերը պետք է սերտորեն համագործակցի ԵՀԳԳ Շահառուի հետ՝ համատեղ ծրագրի արդյունավետ իրականացման համար, նպատակ ունենալով նաև ծրագրի իրականացմանն ուղղված գործողությունների վերաբերյալ ներկայացնել ընդհանուր զեկույց, նույնիսկ եթե ԵՀԳԳ-ի և ՆԱԳ-ի ծախսերը տարբեր են: ՆԱԳ-ի ֆինանսական գլխավոր գործընկերը ֆինանսական հարցերով հաշվետու կլինի ՖՊԿՄ-ին՝ համապատասխան դրամաշնորհային պայմանագրով սահմանված դրույթների համաձայն:

6.7 Թույլատրելի ծախսերը

Հանձնաժողովի որոշմամբ համատեղ գործառնական ծրագրի ընդունումից հետո ծրագիրն անմիջապես մեկնարկում է անդամ երկրներում՝ Ֆինանսական ծրագրի 1Բ գլխի համաձայն հատկացումներ անելով Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքին՝ միջսահմանային համագործակցության համար (Միջինստիտուցիոնալ համաձայնագիր 2006/C 139/01):

[47] Նախանդամակցային աջակցության գործիքը (ՆԱԳ) սահմանող՝ Խորհրդի (ԵՀ) թիվ 1085/2006 կանոնակարգը կիրարկող՝ Հանձնաժողովի (ԵՀ) թիվ 718/2007 կանոնակարգի 96-րդ հոդված

Հանձնաժողովի այս որոշումը կիրառվում է յուրաքանչյուր գործընկեր երկրի նկատմամբ՝ վերջինիս կողմից Ֆինանսավորման համաձայնագիրը ստորագրելուց հետո:

ՆԱԳ-ի միջոցներով Թուրքիայի մասնակցությունը ծրագրին կարգավորվելու է ՆԱԳ-ի՝ առանձին և հատուկ Ֆինանսավորման համաձայնագրով:

Նախագծի իրականացման փուլում թույլատրելի և ոչ թույլատրելի ծախսերը ներկայացվում են հայտի փաստաթղթերի փաթեթում՝ Եվրոպական հանձնաժողովի արտաքին գործողությունների համար պայմանագրերի կնքման ընթացակարգերի մասին գործնական ուղեցույցին համապատասխան:

7 Ծրագրի իրականացումը

Ծրագրի իրականացումը կապահովվի հետևյալ փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝

- Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման ընդհանուր դրույթներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի հոկտեմբերի 24-ի (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգ.
- Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ստեղծման ընդհանուր դրույթներ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի (ԵՀ) թիվ 1638/2006 կանոնակարգի համաձայն ֆինանսավորվող միջսահմանային համագործակցության ծրագրերի համար կիրարկող կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 9-ի (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգ.
- Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին Խորհրդի 2002 թվականի հունիսի 25-ի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 1605/2002 կանոնակարգ (փոփոխություններով).
- Եվրոպական համայնքների ընդհանուր բյուջեի նկատմամբ կիրառվող Ֆինանսական կանոնակարգի մասին Խորհրդի (ԵՀ, Եվրատոմ) թիվ 1605/2002 կանոնակարգի կիրարկման համար մանրամասն կանոններ սահմանող՝ Հանձնաժողովի 2002 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 2342/2002 կանոնակարգ (փոփոխություններով).
- ԵՀ արտաքին գործողությունների համար պայմանագրերի կնքման ընթացակարգերի մասին գործնական ուղեցույց և դրա հավելվածները:

7.1 Նախագծերի իրականացման հայտերը և դրանց ընտրությունը

Սույն բաժինը նկարագրում է նախագծերի իրականացման համար հայտերի ընդունման և ընտրության ընդհանուր սկզբունքները: Այս հարցերի վերաբերյալ վերջնական որոշում պետք է կայացնի ՀԴԿ-ն՝ հաշվի առնելով ծրագրի առանձնահատկությունները, սահմանափակ ֆինանսական միջոցները և անցումային միջոցառումների անհրաժեշտությունը:

ՀԴԿ-ն հաստատում է հայտերի հրավերը և դրա ընթացակարգը: ՀԴԿ-ն հաստատում է նաև հայտերի համապատասխանելիության ստուգման և գնահատման չափորոշիչները՝ առաջարկված ՀՂՄ-ի կողմից:

ՀՂՄ-ն, ՀՏՔ-ի աջակցությամբ, պատրաստում է հայտերի փաստաթղթերի փաթեթը, ներկայացնում է հայտերի հրավերը և ապահովում դրա հրապարակայնությունը: Հրավերի մասին հայտարարվում է ծրագրի ինտերնետային կայքի, ՆԱԳ-ի և ՏԱ –ի միջոցով, ինչպես նկարագրված է 4-րդ գլխում:

ՆԱԳ-ի միջոցների հաշվին Թուրքիայի մասնակցությունն ապահովելու համար ՀՂՄ-ն, նախքան հայտերի հրավեր ներկայացնելը, այդ մասին ծանուցումը և հայտերի փաստաթղթերի փաթեթը սահմանված կարգով ներկայացնում է

Թուրքիայում ԵՀ պատվիրակության հաստատմանը[48]: ԵՀ պատվիրակությունը արձագանքում է 15 աշխատանքային օրվա ընթացքում՝ ծանուցումը և հայտի փաստաթղթերի փաթեթը ստանալուց հետո:

Շահառուները (Գլխավոր գործընկերները) նախագծի իրականացման հայտերը ներկայացնում են ՀՏՔ-ին՝ մինչև հայտերի հրավերում նշված վերջնաժամկետը: Հայտերի ստացման մասին ծանուցումն ուղարկվում է էլեկտրոնային փոստի կամ նամակի միջոցով: Հայտերը գնահատում է **Ընտրող (Գնահատող) կոմիտեն (ԸԿ)**, որի կազմը նշանակվում է ՀԴԿ-ի կողմից և կազմված է՝

- ձայնի իրավունք չունեցող մեկ նախագահից՝ առաջադրված ՀՂՄ-ի կողմից.
- ձայնի իրավունք չունեցող մեկ քարտուղարից՝ ՀՏՔ-ից.
- ձայնի իրավունք ունեցող 5 անդամներից՝ առաջադրված մասնակից երկրների կողմից՝ ռոտացիոն հիմքով.
- դիտորդներից:

ՀԴԿ-ը ԸԿ-ի՝ ձայնի իրավունք ունեցող անդամների ռոտացիայի կարգը կսահմանի հայտերի տարբեր հրավերներում՝ գործածելով ծրագրին մասնակցող երկրների կողմից ներկայացված անձանց ցուցակները, որով կապահովվի բոլոր երկրների հավասար մասնակցությունը կոմիտեների աշխատանքին: ԸԿ-ի անդամները պետք է ունենան հայտերը գնահատելու տեխնիկական կարողություններ:

Այն մասնակից երկրները, որոնք տվյալ հրավերի մասով ներկայացված չեն ձայնի իրավունք ունեցող անդամներով, ԸԿ-ի աշխատանքին մասնակցելու համար կարող են նշանակել դիտորդներ, որոնք կվարձատրվեն իրենց միջոցներից: Դիտորդների ներկայացրած դիտողությունները գրանցվում են Ընտրող կոմիտեի հանդիպումների արձանագրություններում և գնահատման զեկույցում, որոնք վերլուծության են ենթարկվում ՀԴԿ-ի կողմից: Արտաքին գնահատողները, որոնց հետ ՀՂՄ-ը պայմանագրեր է կնքել Եվրոպական միության գործնական ուղեցույցին (ԳՈՒ) համապատասխան, անհրաժեշտության դեպքում կաջակցեն ԸԿ-ի անդամներին գնահատման աշխատանքներն իրականացնելիս՝ հիմք ընդունելով ՀԴԿ-ի կողմից սահմանված չափորոշիչները: Այդ արտաքին գնահատողների թիվը կախված կլինի ստացված հայտերի թվից, որոնք՝ սակայն, չպետք է լինեն երեքից պակաս, որպեսզի դրանց տեխնիկական փորձաքննությունը հնարավորություն տա գնահատելու հայտերի հրավերներում նշված բոլոր առավելությունները:

Ընտրող կոմիտեի բոլոր անդամները, ինչպես նաև դիտորդները, արտաքին գնահատողները և ՀՏՔ-ի աջակցող անձնակազմը պարտավոր են պահպանել գաղտնիության և անաչառության սկզբունքները:

ՀՏՔ-ի անձնակազմն ԸԿ-ի Քարտուղարի և Նախագահի վերահսկողությամբ իրականացնում է հայտերի **վարչական ստուգումը**: Հաշվի առնելով երկար ժամանակով ԸԿ-ի անդամներին ժողովելու հետ կապված մեծ ծախսերն ու նյութատեխնիկական միջոցների ապահովման բարդությունը՝ ՀՏՔ-ի անձնակազմը կարող է զուգահեռաբար իրականացնել **համապատասխանելիության ստուգումը՝** ԸԿ-ի քարտուղարի վերահսկողությամբ:

---

[48] Նախնական ստուգումներՀ կկիրառվեն՝ մինչև Հանձնաժողովը թույլ տա իրականացնել ապակենտրոնացված կառավարում՝ առանց Թուրքիայում ՆԱԳ-ի միջոցների նախնական ստուգումների (ՆԱԳ-ը կիրարկող 2007 թվականի հունիսի 12-ի (ԵՀ) թիվ 2499/2007 կանոնակարգի 18-րդ հոդված):

Երկու ստուգումների ավարտից հետո ԸԿ-ն հաստատում է վարչական ստուգման և համապատասխանելիության մասին զեկույցները և անցնում հայտերի **տեխնիկական գնահատմանը**՝ Գործնական ուղեցույցում մանրամասն ներկայացված ընթացակարգերին համապատասխան: Անհրաժեշտության դեպքում և կախված իրենց թվից՝ ԸԿ-ի նախագահի վերահսկողությամբ գործող արտաքին գնահատողները կարող են սկսել դիտարկվող հայտերի գնահատման աշխատանքը նախքան ԸԿ-ի պաշտոնական հանդիպումը:

ԸԿ-ի նախագահը պատասխանատու է գնահատման աշխատանքների անաչառությունն ու թափանցիկությունն ապահովելու համար:

Գնահատման աշխատանքների ողջ ընթացքը ԸԿ-ի առաջարկությունների հետ միասին արձանագրվում է գնահատման զեկույցում, որը ներկայացվում է ՀԴԿ-ի հաստատմանը: Զեկույցը պարունակում է ֆինանսավորման համար առաջարկված հայտերը, ինչպես նաև պահուստային ցուցակը: Որևէ հայտի վերաբերյալ առաջարկութուն ներկայացնելիս ԸԿ-ն կարող է մատնանշել հայտում կատարվելիք աննշան փոփոխություններ:

Հնարավոր համագործակցությունների միջսահմանային գործողությունների բարձր արդյունավետությունը խթանելու և ԵՄ-ի իրականացրած այլ քաղաքականությունների ներքո ֆինանսավորվող նախագծերի և ծրագրերի հետ համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաև կրկնություններից խուսափելու համար, անհրաժեշտության դեպքում, Գլխավոր տնօրինությունների միջև կարող են փոխանակվել տեղեկություններ ոչ վաղ անցյալում ֆինանսավորում ստացած գործողության մասին՝ նախքան հայտերի հրավեր ներկայացնելը: Այդ նպատակով՝ ԵՕՀԳ-ը կպահանջի, որպեսզի յուրաքանչյուր ԳՏ նշանակի կապն ապահովող մեկ կամ մի քանի անձ, որոնց հետ կխորհրդակցեն հայտերի հրավերի ընթացքում ներկայացված հայտերի մասին:

Նախագծի իրականացման հայտերի առաջնահերթությունը և ԸԿ-ի առաջարկությունները ՀԴԿ-ի կողմից հաստատվում են միաձայն որոշմամբ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ 10 ձայնից առնվազն 8-ի մեծամասնությամբ: Տեխնիկական պահանջներին չհամապատասխանող նախագծի իրականացման հայտերը չեն հաստատվում:

Եթե վերը նշված որոշումներն ընդունելիս ՀԴԿ-ն որոշում է ամբողջովին կամ մասամբ չհետևել ԸԿ-ի առաջարկություններին, ապա այն պետք է գրավոր հիմնավորի իր որոշումը: Այնուհետև, որոշումը ՀՂՄ-ի միջոցով ուղարկվում է ԵՀ-ի նախնական հաստատմանը[49]: ԵՀ-ը իր որոշման մասին տեղեկացնում է ՀՂՄ-ին 15 աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՂՄ-ն գնահատման զեկույցը ՀԴԿ-ի կողմից հաստատված նախագծերի առաջնահերթության հետ միասին փոխանցում է Թուրքիայում ԵՀ պատվիրակության հաստատմանը[50]: ԵՀ պատվիրակությունը կարծագանքի՝ գնահատման զեկույցը նախագծերի ցանկի հետ միասին ստանալուց հետո 15 աշխատանքային օրվա

[49] (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 13-ոդ հոդված

[50] Նախնական ստուգումները կկիրառվեն մինչև Հանձնաժողովը թույլ տա իրականացնել ապակենտրոնացված կառավարում՝ առանց Թուրքիայում ՆԱԳ-ի միջոցների նախնական ստուգումների (ՆԱԳ-ը կիրարկող 2007 թվականի հունիսի 12-ի (ԵՀ) 2499/2007 կանոնակարգի 18-րդ հոդված):

ընթացքում: ԵՀ պատվիրակության հաստատումը վերաբերում է միայն համապատասխան նախագծերին թուրք գործընկերների մասնակցությանը: Զուգահեռաբար, ՀՂՄ-ն կծանուցի Թուրքիայի Գործադիր մարմնին (ներառյալ՝ Իրականացնող գործակալությանը) հաստատված այն ծրագրերի մասին, որոնցում ներգրավված է թուրք գործընկեր, որպեսզի ԵՀ պատվիրակության հաստատումից հետո իրականացվի դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը:

ՀՂՄ-ի կողմից կնքված պայմանագրերի ցանկը կհրապարակվի ՀՂՄ-ի կայքում՝ ԵՀ ֆինանսական կանոնակարգի և ԳՈՒ-ի պահանջներին համապատասխան:

7.2 Ֆինանսական կառավարումը[51]

Պայմանագրերի/փոփոխությունների ստորագրման համար անհրաժեշտ թույլտվությունները

1. ՀՂՄ-ի գործառնական բաժինը պատրաստում է պայմանագիրը կամ դրա փոփոխությունները բոլոր անհրաժեշտ օժանդակ փաստաթղթերի հետ մեկտեղ և ներկայացնում Իրավական հարցերով տնօրինությանը.
2. Իրավական հարցերով տնօրինությունն ստուգում է պայմանագրի համապատասխանությունը ԵՄ և ազգային օրենսդրությանը, հաստատում է պայմանագիրը իրավական մասով և ներկայացնում Ֆինանսական կանխարգելիչ վերահսկողության բաժին.
3. Ֆինանսական վերահսկողության բաժինը ստուգում է պայմանագրի՝ Հայտատուների համար ուղեցույցի հետ համապատասխանությունը, ինչպես նաև գումարները և հաստատում է պայմանագիրը.
4. Վերջին երկու ստորագրությունները պատկանում են պայմանավորվող կողմերին՝ ՀՂՄ-ի ղեկավարին և Շահառուին (Գլխավոր գործընկեր):



[51] Սույն բաժինը չի վերաբերում ՆԱԳ-ի միջոցներին (Թուրքիայի մասնակցություն)

Փոխանցումները ԵՀ-ից ՀԿՄ-ի ֆինանսական բաժին

(ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 24-26-րդ հոդվածներին համապատասխան՝ ԵՀ-ը կտրամադրի տարեկան հատկացումներ, որոնց մասին ծանուցելուց հետո, ՀՂՄ-ի ֆինանսական բաժինը որպես նախնական ֆինանսավորում կպահանջի տարեկան ներդրման առավելագույնը 80%-ը: Նախնական ֆինանսավորման մասին դիմումի հիման վրա և համապատասխան հաշվետվությունների ստուգումից ու ծրագրի փաստացի ֆինանսական կարիքների գնահատումից հետո, ԵՀ-ն ամբողջությամբ կամ մասամբ կվճարի նախնական ֆինանսավորման պահանջվող գումարը: Տարվա երկրորդ կիսամյակում և տարեկան հաշվետվությունների հիման վրա ԵՀ-ն վերջնահաշվարկ է անում նախորդ նախնական ֆինանսավորումների գծով՝ համաձայն թույլատրելի և փաստացի առաջացած ծախսերի, ինչպես հաստատված է արտաքին աուդիտի տարեկան հաշվետվությամբ: Այդ վերջնահաշվարկի արդյունքների հիման վրա ԵՀ-ն լրացնում կամ կրճատում է պահանջվող նախնական ֆինանսավորման գումարը:

ՀՂՄ-ի ֆինանսական բաժնից նախագծերին կատարվող փոխանցումները

ՀՂՄ-ն պատասխանատու է նախագծերի Շահառուներին վճարումների փոխանցման համար՝ պայմանով, որ ԵՀ-ն անհրաժեշտ նախնական ֆինանսավորումը տրամադրի ժամանակին: Շահառուի հետ դրամաշնորհային պայմանագիրը ստորագրելուց և նախնական ֆինանսավորման մասին դիմումը ստանալուց հետո ՀՂՄ-ի ֆինանսական բաժինը Շահառուին է փոխանցում նախագծի իրականացման համար ԵՀ-ի կողմից հատկացված գումարը՝ դրա առաջին տարեկան բյուջեն ապահովելու համար: Հատուկ դրույթները մանրամասն կներկայացվեն հայտատուների համար ուղեցույցներում, որոնք կմշակվեն ՀՂՄ-ի կողմից:

Կկիրառվեն ԳՈՒ-ում և դրան կից՝ դրամաշնորհային պայմանագրի համար օրինակելի փաստաթղթերում ներկայացված՝ նախատեսված վճարումների պայմանները[52]: Բոլոր նախագծերի համար, անկախ դրանց չափից, կպահանջվի ծախսերի ստուգում՝ «ծախսերի ստուգման մասին հաշվետվությանը» համապատասխան:

Նախագծի ծախսերի ստուգման (աուդիտ) վերաբերյալ հաշվետվությունը կուղարկվի վճարման պահանջագրերի (բացառությամբ ցանկացած կանխավճարի), տեխնիկական և ֆինանսական հաշվետվությունների հետ մեկտեղ: ՀՂՄ-ն համապատասխան փոխանցումը կատարում է վճարման մասին դիմումն ստանալուց հետո: Եթե ՀՏՔ-ն նախագծի Շահառուից պահանջում է պարզաբանում, ուղղում կամ լրացուցիչ տեղեկություններ, վճարման ընթացակարգը կասեցվում է մինչև Շահառուի պատասխանը ստանալը:

[52] ԵՀ արտաքին գործողությունների պայմանագրերի ընթացակարգերի գործնական ուղեցույցին (“PRAG”) կցված օրինակելի ձևերը կարող են համապատասխանեցվել ԵՕՕ-ի կողմից ԵՀ-ի նախնական հաստատմամբ (եթե այլ ցուցում չի տրվում ԵՀ համապատասխան ծառայության կողմից):

Ծախսերի ստուգումը նախագծի իրականացման փուլում

ԵՄ անդամ պետությունները կարող են հիմնել մի համակարգ, որը թույլ կտա ստուգել իրենց տարածքներում իրականացվող գործողությունների համար հայտարարագրված ծախսերի հիմնավորվածությունը և դրանց համապատասխանությունը Համայնքի և իրենց ազգային կանոններին[53], կամ կարող են նման ստուգումներն իրականացնել մասնավոր աուդիտորական ընկերությունների միջոցով: Անդամ պետություններում գործող հսկողության համակարգը կներկայացվի ՀՂՄ-ի հետ կնքված համապատասխան Փոխըմբռնման հուշագրերում: Գործընկեր երկրների համար ծախսերի ստուգումները միշտ իրականացվում են մասնավոր աուդիտորական ընկերությունների միջոցով:



[53] Թիվ 951/2007 կանոնակարգի (ԵՀ) 39-րդ հոդված

Վճարումների ընթացակարգը ՀՂՄ-ի ներսում



1. **Պայմանագրի գծով պատասխանատու աշխատակիցներն** ստուգում են նախնական ֆինանսավորման/հատուցման մասին դիմումը պայմանագրով պահանջվող հաշվետվությունների հիման վրա և նշված դիմումների համար տրամադրում Հսկիչ ցուցակը և Վճարումը թույլատրելու մասին տեղեկանքը:
2. **Վճարումների հաստատման բաժնի պետը** հաստատում է պայմանագրի գծով պատասխանատու աշխատակիցների կողմից տրամադրված՝ Վճարումը թույլատրելու մասին տեղեկանքը և ուղարկում այն Ծրագրերի գծով հաշվապահության բաժին:
3. **Հաշվապահության բաժինը** Վճարումը թույլատրելու մասին տեղեկանքի հիման վրա Ծրագրերի վճարումների բաժնին տրամադրում է ՀՂՄ-ի ղեկավարի կողմից ստորագրված՝ կատարվելիք վճարումների հաստատման մասին փաստաթուղթը:
4. **Ծրագրերի վճարումների բաժինն** իր՝ վճարումների համար պատասխանատու աշխատակիցների միջոցով տրամադրում է վճարման հանձնարարականներ և գումարը վճարում Շահառուին:

5. Վճարումը կատարելուց հետո **Ծրագրերի գծով հաշվապահության բաժինը** հաշվապահական հաշվառման համակարգում իր հաշվապահների միջոցով գրանցում է կատարված վճարումները՝ հիմնվելով բանկի կողմից հաստատված՝ հաշիվների մասին տեղեկանքի և վճարման հանձնարարականների վրա:

Ինչ վերաբերում է բյուջեի կատարման քայլերին, ապա Ռումինիայի ազգային օրենսդրությանը համապատասխան՝ ՀՂՄ-ի ֆինանսական բաժնի ներքին կազմակերպական ձևը հնարավորություն է տալիս, որ հատկացումները և դրանց հաստատման, թույլատրման և վճարման հետ կապված գործառույթներն իրականացվեն միմյանցից բոլորովին անկախ: Հետևաբար, ՀՂՄ-ի գործառնական բաժինը կատարում է հատկացումները, Հաստատման բաժինը հաստատում է դրանք, Հաշվապահության բաժինը թույլատրում է դրանց վճարումը, և Վճարման բաժինը կատարում է վճարումները: Այսպիսով, վճարման հանձնարարականը, որի հիման վրա գործարքը գրանցվում է ծրագրի բանկային հաշվում, պահանջում է երկու ստորագրություն՝ վճարման համար պատասխանատու աշխատակցի և Ֆինանսական բաժնի պետի: Այնուամենայնիվ, վճարման հանձնարարականը միշտ տրվում է ՀՂՄ-ի ղեկավարի կողմից հաստատված՝ վճարումների հաստատման մասին փաստաթղթի հիման վրա:

Խորհրդի 1605/2002 կանոնակարգի (փոփոխություններով) 59-62-րդ հոդվածներին համապատասխան և Սևծովյան համատեղ գործառնական ծրագրի իմաստով՝ հաշվապահության համար պատասխանատու պաշտոնյայի գործառույթներն իրականացնում է Վճարումների բաժնի պետը, իսկ թույլատրման համար պատասխանատու պաշտոնյայի գործառույթները՝ ՀՂՄ-ի ղեկավարը:

Ծրագրի հաշվապահական համակարգը

ՀՂՄ-ի ֆինանսական բաժնում գործածվող հաշվապահական հաշվառման մեթոդը համաձայնեցված է Ռումինիայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության հետ և ապահովում է չհատուցվող արտաքին միջոցների վերաբերյալ տվյալների միասնական համակարգ՝ Ղեկավարման մարմինների մակարդակով:

Ծրագրի հաստատման և վճարումների գծով գլխավոր տնօրինությունը այդ մեթոդը կիրառում է 2007 թվականի հուլիսի 1-ից: Յուրաքանչյուր գործառնական ծրագրի համար տվյալները վարվում են առանձին՝ եվրոյով և ռոնով (յուրաքանչյուր ծրագրի և յուրաքանչյուր ֆինանսավորման աղբյուրի համար կազմվում է առանձին հաշվեկշիռ):

Յուրաքանչյուր գործառնական ծրագրի համար վարվում է բանկային վերլուծական հաշիվների տվյալների համակարգ՝ նախագծի մասով (շահառուներին տրամադրված կանխավճարներ, միջանկյալ և վերջնական վճարումներ, բանկային վճարների հետ կապված ծախսեր, տոկոսներից ստացվող եկամուտներ, գրանցված կամ դադարեցված պայմանագրով պարտապան շահառուների կողմից վերադարձված գումարներ):

Ծրագրի համար եվրոյով բանկային հաշիվ կբացվի Ռումինիայի ազգային գանձապետարանում՝ Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանային շինարարության նախարարության կողմից:

Վճարների վերադարձը

Երբ ՀՏՔ-ն ստանում և ստուգում է վերջնական հաշվետվությունը, ՀՂՄ-ն կատարում է մնացորդի վճարում կամ կատարում միջոցների վերադարձ այն դեպքում,

երբ հայտնաբերված որևէ չթույլատրված ծախս գերազանցում է մնացորդի գումարը: ՀՂՄ-ն պատասխանատու է ԵՄ անդամ պետություններում գործունեություն իրականացնող կատարողների կողմից ցանկացած անհիմն կամ չթույլատրված ծախսերի գումարները վերադարձնելու համար, ինչպես նաև ԵՀ-ին որևէ այլ կերպ հատուցելու համար ցանկացած այն գումարը, որը հնարավոր չէ վերադարձնել: Այնուամենայնիվ, եթե ՀՂՄ-ն չի կարողանում ետ բերել վճարման ենթակա գումարները մեկ տարվա ընթացքում, անդամ պետությունը, որտեղ իր գործունեությունն է իրականացնում տվյալ կատարողը, պետք է հատուցի այդ գումարը ՀՂՄ-ին: Այդ նպատակով, ՀՂՄ-ն փոխըմբռնման հուշագիր կկնքի այն պետական մարմինների հետ, որոնք պատասխանատու են ծրագրին մասնակցող անդամ պետություններում անտեղի ծախսված միջոցների վերադարձման համար:

Եթե գումարների վերադարձը վերաբերում է որևէ գործընկեր երկրի, և ՀՂՄ-ն չի կարողանում ստանալ այդ միջոցները Շահառուից մեկ տարվա ընթաքում, ապա ՀՂՄ-ն գործը փոխանցում է ԵՀ-ին, որն էլ ստանձնում է հարցը կարգավորելու պարտականությունը:

ՀՂՄ-ի կողմից ծրագրի շրջանակներում կնքված պայմանագրերում սահմանվում է դրույթ, որը Հանձնաժողովին կամ տվյալ անդամ պետությանը թույլ կտա գումարները ետ ստանալ շահառուից, կապալառուից կամ գործընկերոջից, եթե ՀՂՄ-ի կողմից գումարների վերադարձման պահանջագիրը ներկայացնելուց մեկ տարի հետո պահանջը դեռ չի բավարարվել:

Թուրքիայի հետ կապված դրույթները

ՆԱԳ-ի միջոցների (վճարումներ թուրք գործընկերներին, միջոցների վերադարձ, նախագծի իրականացման փուլում աուդիտի իրականացում) ֆինանսական կառավարմանը վերաբերող դրույթները կսահմանվեն ԵՀ-ի և թուրքական իշխանությունների միջև կնքվող ԵՀԳԳ ՄՍՀ Սևծովյան ավազանի ծրագրին մասնակցության համար ՆԱԳ-ի միջոցների վերաբերյալ ֆինանսավորման համաձայնագրում: Այս դրույթները հնարավորին չափով կհամապատասխանեցվեն ԵՀԳԳ-ի կանոններին (օրինակ՝ նախնական ֆինանսավորման մասնաբաժինը և այլն):

7.3 Ծրագրի աուդիտը

ՀՂՄ-ի ներքին աուդիտի բաժինը (Աուդիտի տնօրինություն, Զարգացման, հանրային աշխատանքների և բնակարանային շինարարության նախարարություն) իրականացնում է ներքին ֆինանսական հոսքերի և ՀՂՄ-ում ընթացակարգերի պատշաճ կիրառման ամենամյա ստուգումներ: Վերջնական հաշվետվությունն ուղարկվում է ՀԴԿ և ԵՀ ((ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 29-րդ հոդված)՝ ծրագրի տարեկան (գործառնական և ֆինանսական) հաշվետվությունների հետ մեկտեղ:

ՀՂՄ-ի ծախսերի և հաշիվների տարեկան արտաքին ֆինանսական աուդիտը կիրականացվի Աուդիտ իրականացնող մարմնի կողմից:

Ծրագրի իրականացման մեկնարկի տարվա ավարտից սկսած՝ ՀՂՄ-ը պատասխանատու է յուրաքանչյուր հաջորդ տարվա կտրվածքով իր կողմից ֆինանսավորվող նախագծերի աուդիտի իրականացման պլան սահմանելու համար: Աուդիտը պետք է իրականացվի փաստաթղթերի ուսումնասիրությամբ կամ ՀՂՄ-ի

կողմից պատահական ընտրության վիճակագրական մեթոդով ընտրված որևէ նախագծի ստուգումը տեղում իրականացնելու միջոցով: Ընտրված նախագիծը պետք է լինի տիպային օրինակ, որը կերաշխավորի հավաստիության բավարար մակարդակ՝ կապված ՀՂՄ-ի կողմից իրականացվող նախագծերի համար պահանջվող ծախսերի առկայության, պատշաճ կատարման և համապատասխանելիության անմիջական ստուգումների հետ ((ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 37-րդ հոդված): Այդ աուդիտը հիմնականում իրականացվում է ՀՂՄ-ի համապատասխան անձնակազմի կողմից, սակայն ՀՂՄ-ի որոշմամբ կարող են ներգրավվել արտաքին աուդիտորներ:

7.4 Դիտանցման ընթացակարգերը

Ծրագրի իրականացման փուլում դիտանցում կատարելու հետ կապված ՀԴԿ-ի հիմնական խնդիրներն են՝

- ծրագրի նպատակների իրականացման ուղղությամբ գրանցված առաջընթացի պարբերական վերանայում.
- ՀՂՄ-ի կողմից ներկայացված՝ ծրագրի իրականացման մասին տարեկան և վերջնական զեկույցների քննարկում և հաստատում.
- ծրագրի կառավարման որակը բարձրացնելու նպատակով ծրագրի վերանայման կամ գնահատման վերաբերյալ առաջարկների ներկայացում ՀՂՄ-ին:

Ծրագրի դիտանցման մեթոդները հետևյալն են՝

- ծրագրի իրականացման վերաբերյալ **ամենամյա և վերջնական զեկույցներ.** ամենամյա կամ երկամյա զեկույցները կկազմվեն ՀՂՄ-ի կողմից՝ ՀՏՔ-ի աջակցությամբ և կհաստատվեն ՀԴԿ-ի կողմից նախքան Եվրոպական հանձնաժողով ուղարկվելը.
- **ցուցանիշների համակարգ.** պետք է մշակել հստակ սահմանված ցուցանիշների համակարգ, որը կկիրառվի ծրագրի իրականացման փուլում դիտանցման և գնահատման համար (տես Գլուխ 4-ը՝ նման համակարգի ստեղծման հիմքերի համար): Սույն ծրագրի համար կիրառվող ցուցանիշները պետք է դասակարգվեն երեք տարբեր մակարդակներով՝ ծրագրի, գերակայության և նախագծի մակարդակ: Նախագծի մակարդակի ցուցանիշները պետք է թույլ տան դիտանցել նախագծով կատարված ներդրումները գերակայության և ծրագրի ցուցանիշներին հասնելու ուղղությամբ.
- **համակարգչայնացված համակարգ**՝ ՀՂՄ-ն պատասխանատու է մի համակարգ ձևավորելու համար, որը ֆինանսական և վիճակագրական հավաստի տեղեկություններ կհավաքի ծրագրի իրականացման վերաբերյալ՝ ծրագրի դիտանցման և գնահատման ցուցանիշները չափելու և այդ տվյալները փոխանցելու համար, գործընկեր երկրների և ԵՀ-ի միջև ձեռք բերված պայմանավորվածություններին համապատասխան: ՀՂՄ-ը կկիրառի **Եվրոպական տարածքային համագործակցությանը վերաբերող Կառավարման տեղեկատվական համակարգ** (ԵՏՀ-ԿՏՀ), որը թույլ է տալիս հավաքել ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ֆինանսական կառավարման, դիտանցման, ստուգման, աուդիտի և ծրագրի գնահատման համար, և ապահովում է տվյալների փոխանակումը ԵՀ-ի հետ՝ տպագիր տարբերակով:

Ծրագրի և նախագծի մակարդակում իրականացվող դիտանցման ինդիկատիվ քայլերը

1. Գործընկերները Շահառուին (Գլխավոր գործընկերոջն) են ուղարկում իրենց գործունեության մասին զեկույցների թղթային և էլեկտրոնային տարբերակները.
2. Շահառուն (Գլխավոր գործընկերը) պատրաստում է նախագծի իրականացման մասին զեկույցների թղթային և էլեկտրոնային տարբերակները.
3. Շահառուն (Գլխավոր գործընկերը) զեկույցների թղթային և էլեկտրոնային տարբերակները ներկայացնում է ՀՏՔ-ի հաստատմանը.
4. ՀՏՔ-ն ստուգում և հաստատում է զեկույցները և նախագծերի էլեկտրոնային տվյալները ներմուծում է ԵՏՀ-ԿՏՀ.
5. ՀՏՔ-ն պատրաստում է ծրագրի իրականացման մասին տարեկան զեկույցները և վերջնական զեկույցը.
6. ՀՏՔ-ն ծրագրի իրականացման մասին տարեկան զեկույցները և վերջնական զեկույցն ուղարկում է ՀՂՄ-ին.
7. ՀՂՄ-ն ծրագրի իրականացման առաջընթացի մասին տեղեկացնում է պետական մարմիններին և ՀՏՔ-ին, որն էլ իր հերթին տեղեկացնում է Ազգային տեղեկատվական կենտրոններին.
8. ՀՂՄ-ն ստուգում և հաստատում է ՀՏՔ-ի կողմից ԵՏՀ–ԿՏՀ ներմուծված էլեկտրոնային տվյալները.
9. ՀՂՄ-ը ստուգում և ՀԴԿ-ի հաստատմանն է ներկայացնում տարեկան զեկույցները և վերջնական զեկույցը.
10. ՀԴԿ-ն հաստատում է ծրագրի իրականացման մասին տարեկան զեկույցները և վերջնական զեկույցը.
11. ՀՂՄ-ն Եվրոպական հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում ծրագրի իրականացման մասին տարեկան զեկույցները և վերջնական զեկույցը.
12. ԵՀ-ն ուսումնասիրում է տարեկան զեկույցները և կատարում առաջարկություններ կամ ներկայացնում գնահատման պահանջներ.



Եվրոպական տարածքային համագործակցություն - Կառավարման տեղեկատվական համակարգ (ԵՏՀ-ԿՏՀ)

Եվրոպական տարածքային համագործակցություն - Կառավարման տեղեկատվական համակարգի հասկացությունը

Եվրոպական տարածքային համագործակցությանն առնչվող Կառավարման տեղեկատվական համակարգը (ԵՏՀ-ԿՏՀ) տեղեկատվական համակարգ է, որը մշակվել է համապատասխան կառույցների կողմից՝ Ռումինիայի էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության համակարգմամբ և ֆինանսավորմամբ: Համակարգը հավաքում է ծրագրի իրականացման վերաբերյալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Եվրոպական տարածքային համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի ֆինանսական կառավարման, դիտանցման, ստուգման, աուդիտի և գնահատման համար: Համակարգը բավարար է կառավարման բոլոր մակարդակների կարիքների համար (Կառավարման մարմիններ կամ Համատեղ

ղեկավարման մարմիններ, Համատեղ տեխնիկական քարտուղարություններ, Հաստատող մարմին, Աուդիտ իրականացնող մարմին և այլն) ծրագրի իրականացման բոլոր փուլերում (ծրագրի մշակում, մրցույթի հայտարարում, պայմանագրի կնքում, դիտանցում, գնահատում, վճարումներ, աուդիտ և ստուգում): ԵՏՀ-ԿՏՀ-ի հիմնական հատկանիշը այս համակարգից օգտվողներին իրենց խնդիրների իրականացմանն օժանդակող միասնական մեխանիզմով ապահովելն է:

Որպես դիտանցման մեթոդ՝ ԵՏՀ-ԿՏՀ-ն նախագծի և ծրագրի մակարդակներում դրանց իրականացման առաջընթացի վերաբերյալ տեղեկությունների հիմնական մատակարարն է, որ հնարավորություն է տալիս դիտանցման մասին զեկույցները կազմել ավտոմատ կերպով:

ԵՏՀ–ԿՏՀ համակարգն ունի երեք հիմնական սկզբունք. տվյալների մատչելիություն (տվյալներն ուղղակիորեն մատչելի են թույլտվություն ստացած օգտվողի պահանջի դեպքում), տվյալների գաղտնիություն (տվյալները տրամադրվում են միայն դրանք ստանալու թույլտվություն ունեցող օգտվողներին), տվյալների հուսալիություն (տվյալների մշակում կարող է կատարվել միայն թույլտվություն ունեցող օգտվողների կողմից՝ թույլատրելի միջոցներով): Որպես վերը նշված երեք սկզբունքների իրականացման միջոց՝ համակարգը հնարավորություն է տալիս, որ օգտվողները դասակարգված լինեն ըստ խմբերի կամ կատեգորիաների, ինչի շնորհիվ համակարգից օգտվելու թույլտվությունները հեշտությամբ խմբավորվում և կառավարվում են, իսկ տեղեկություններից օգտվելու հնարավորությունը կարող է ամբողջությամբ ստուգվել և գրանցվել ճկուն ձևով:

Կառավարման արդյունավետ գործիք ապահովելու նպատակով ԵՏՀ–ԿՏՀ ֆունկցիոնալ մոդելը հիմնված է մի շարք մոդուլների վրա, որոնք միասին արտացոլում են համակարգի բազմաֆունկցիոնալության այն հնարավորությունները, որոնց իրականացման համար ստեղծվել է համակարգը: Դրանք են՝

- ծրագրի մշակում, որը թույլ է տալիս գրանցել և փոփոխել գործառնական ծրագրերի վերաբերյալ հիմնական տեղեկությունները, որոնք դասակարգված են ավելի ցածր մակարդակների՝ ըստ գերակայության, միջոցի և գործունեության տեսակի.
- նախագծի կառավարում (նախագծերի, ներառյալ պայմանագրերի մասին հիմնական տեղեկությունների գրանցում և փոփոխում).
- դիտանցում, որը թույլ է տալիս հետևել ծրագրի իրականացման առաջընթացին բոլոր փուլերում, անհրաժեշտության դեպքում՝ համեմատելով նախկինում սահմանված թիրախների հետ: Այն թույլ է տալիս նաև ավտոմատ կերպով կուտակել համակարգի ավելի ցածր մակարդակներում գրանցված առանցքային տվյալները՝ ըստ դրանց փաստացի նշանակության.
- աուդիտ և ստուգում, որը գրանցում է ստուգման և աուդիտի արդյունքները.
- գնահատում, որը թույլ է տալիս իրականացնել ծրագրի գնահատումը.
- միջոցների հոսքի կառավարում, որն առնչվում է կանխատեսվող վճարման պահանջների, ներհոսքի, նախագծերից ստացվող հասույթի, կասեցումների, վճարումների և միջոցները վերադարձնելու հետ:

Ծրագրի վերաբերյալ տվյալները համապատասխան փուլում ներմուծվում են ԵՏՀ-ԿՏՀ՝ հիմնվելով օգտվողի իրավունքների հստակ սահմանված բնութագրիչների

վրա՝ օգտվողի խնդիրներին և պարտականություններին համապատասխան: Համակարգ մուտք գործելու հնարավորությունը կտրվի գրանցման հատուկ ընթացակարգով տրամադրվող ծածկանվան և գաղտնաբառի մուտքագրման միջոցով:

ԵՏՀ-ԿՏՀ–ը համակարգողների ցանցը

Կառավարման մարմինների, Հաստատող մարմնի, Աուդիտ իրականացնող մարմնի և Համատեղ տեխնիկական քարտուղարության մակարդակով նշանակվել են կամ կնշանակվեն ԵՏՀ-ԿՏՀ-ն համակարգողներ, որոնք պատասխանատու են իրենց հաստատությունների ներկայացրած՝ համակարգի բարելավմանը վերաբերող պահանջներն ընդունելու և դրանց ընթացք տալու, ինչպես նաև Կառուցվածքային գործիքների իրականացման ժամանակ կիրառվող ընթացակարգերի ամբողջականությունն ու միասնականությունն ապահովելու համար:

ԵՏՀ-ԿՏՀ-ը համակարգողների խնդիրների ու պարտականությունների շարքում կարելի է նշել հետևյալները՝

- ԵՏՀ-ԿՏՀ-ին վերաբերող հարցերում հանդես գալ որպես համակարգող և կապող օղակ մի կողմից Համատեղ ղեկավարման մարմնի և ACIS-ի միջև, մյուս կողմից՝ Համատեղ ղեկավարման մարմնի և Համատեղ տեխնիկական քարտուղարության միջև.
- տեղեկություններ հավաքել և տարածել իրենց ներկայացրած հաստատությունների ներսում և դրանց միջև.
- օգտվողների և նոր աշխատողների համար անցկացնել վերապատրաստման ներքին դասընթացներ:

Նախագծի մակարդակում ՆԱԳ միջոցների դիտանցումը

Թուրքիայի Գործադիր մարմինը (ներառյալ՝ Իրականացնող գործակալությունը) ՆԱԳ-ի միջոցները նախագծի մակարդակում կենթարկի դիտանցման՝ համաձայն նախագծում կամ դրամաշնորհային պայմանագրում սահմանված ցուցանիշների: ՆԱԳ-ի Ֆինանսական գլխավոր շահառուն հաշվետու է Գործադիր մարմնին (ներառյալ Իրականացնող գործակալությանը) ՆԱԳ-ի միջոցների օգտագործման համար: Այնուամենայնիվ, ամբողջ ծրագրի ընթացքում առաջընթացի մասին հաշվետվություն ներկայացնելու համար պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր քայլերը: Քանի որ յուրաքանչյուր նախագծի առաջընթացի վերաբերյալ պետք է կազմել հնարավորինս անհատականացված հաշվետվություն, որը կներառի տեղեկություններ ԵՀԳԳ-ի և ՆԱԳ-ի միջոցների օգտագործման մասին, ՀՂՄ-ը պետք է ստանա բոլոր անհրաժեշտ տեղեկությունները (նախագծի Շահառուից և (կամ) Թուրքիայի Գործադիր մարմնից (ներառյալ Իրականացնող գործակալությունից))՝ տարեկան կտրվածքով ՀԴԿ-ին և ԵՀ-ին ամբողջ ծրագրի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու համար: Աուդիտ իրականացնող թուրքական մարմնի տարեկան աշխատանքային ծրագիրը և հաշվետվությունները ևս կարող են ուղարկվել ՀԴԿ:

7.5 Գնահատումը

Ծրագրի որակը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ ԵՀ-ի կողմից կիրականացվեն ծրագրի սկզբնական, միջանկյալ և վերջնական

գնահատումներ: Համաձայն ԵՀԳԳ ՄՍՀ-ի ռազմավարության փաստաթղթի՝ միջանկյալ գնահատումը կիրականացվի ԵՀ-ի կողմից, իսկ ՀԴԿ-ն ու ՀՂՄ-ն կտեղեկացվեն արդյունքների մասին: Բացի միջանկյալ գնահատումից՝ ԵՀ-ն ցանկացած պահի կարող է իրականացնել ծրագրի կամ դրա մի մասի գնահատում: ԵՀ-ն, որպես ծրագիրը եզրափակող գործընթացի փուլ, վերջնական փաստացի գնահատում կիրականացնի սույն ծրագրի կողմից ֆինանսավորվող բոլոր նախագծերի ավարտին հաջորդող տարվա ընթացքում:

7.6 Անցումային միջոցառումները

Անցումային միջոցառումներ կիրականացվեն ԵՀ-ի կողմից ծրագրի ընդունման և գործընկեր երկրների կողմից Ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման միջև ընկած ժամանակահատվածում՝ ծրագրի մեկնարկը չհետաձգելու և բոլոր գործընկերների ներգրավումն ապահովելու նպատակով: Այդ միջոցառումները հիմնականում ընդգրկում են ՀԴԿ-ի հանդիպումները: ՀԴԿ-ի հանդիպումները տեղի են ունենալու ԵՀ-ի կողմից ծրագիրն ընդունելուց հետո երկու ամսվա ընթացքում: Գործընկեր երկրների ներկայացուցիչները, որոնք դեռ չեն ստորագրել Ֆինանսավորման համաձայնագիրը, կհրավիրվեն մասնակցելու որպես լիարժեք պարտականություններ և իրավունքներ ունեցող անդամներ:

7.7 ՏԱ-ի բյուջեի օգտագործումը

ԵՀ-ի կողմից ծրագրի ընդունումից անմիջապես հետո ՏԱ-ի բյուջեն կարող է օգտագործվել ծրագիրը մեկնարկելու համար: ՏԱ-ի բյուջեն կհաստատվի ՀԴԿ-ի կողմից՝ առաջին հանդիպման ընթացքում: Այնուհետև, այն պարբերաբար՝ տարին մեկ անգամ, կընդունվի ՀԴԿ-ի հաջորդ նիստերի ընթացքում: Բացի դրանից, ՀՂՄ-ն հնարավորինս շուտ կստեղծի ՀՏՔ-ն՝ հիմք ընդունելով ՀԴԿ-ի առաջին հանդիպման ժամանակ համաձայնեցված բյուջեն և աշխատանքային ծրագիրը:

ԵՀԳԳ ՄՍՀ սևծովյան ավազանի ծրագրին մասնակցելու համար Թուրքիային հատկացված ՆԱԳ-ի տարեկան միջոցների մինչև 10%-ը կարող է օգտագործվել ՏԱ-ի նպատակներով՝ հատկապես ծրագրի իրականացման գործառնական և վարչական ծախսերը ծածկելու համար: ԵՀ-ի և թուրքական իշխանությունների միջև կնքվելիք Ֆինանսավորման համաձայնագիրը թույլ կտա Թուրքիայի Գործադիր մարմնին (ներառյալ՝ Իրականացնող գործակալությանը) կնքել անհատական անմիջական դրամաշնորհի համաձայնագիր՝ ՆԱԳ-ի ՏԱ-ի միջոցների մի մասը ՀՂՄ-ին փոխանցելու համար՝ որպես օժանդակություն ծրագրում Թուրքիայի մասնակցության (օրինակ՝ ՀՏՔ, ՀԴԿ-ի հանդիպումներ, ԸԿ, տեղեկատվություն և հրապարակայնություն և այլն) հետ կապված գործառնական և վարչական ծախսերը ծածկելու նպատակով (մանրամասն կներկայացվեն անմիջական դրամաշնորհի համաձայնագրում): ՆԱԳ-ի ՏԱ-ի միջոցների մնացած մասը կառավարվում է Թուրքիայի Գործադիր մարմնի (ներառյալ Իրականացնող գործակալության) կողմից՝ Թուրքիայի տարածքում ծրագիրն իրականացնելու ընթացքում Թուրքիայի առաջացրած ծախսերը ծածկելու համար (օրինակ՝ տեղեկատվական արշավներ, ճանապարհածախսեր):

7.8 Հայտերի հրավերը

Ինչպես պարզաբանվել է 7.1 բաժնում, ՀԴԿ-ի նախնական հաստատումից հետո ՀՂՄ-ն պետք է ներկայացնի հայտերի հրավեր: Այնուամենայնիվ, մասնակից երկրները, ԵՀ-ի կողմից հաստատումն ստանալուց հետո, կարող են համատեղ

սահմանել լայնածավալ միջսահմանային ներդրումային նախագծեր, որոնք կընտրվեն ոչ թե մրցույթների միջոցով, այլ ԳՈՒ-ում ներկայացված՝ գնումների իրականացման ընթացակարգերով: Այդ նախագծերը պետք է ընտրվեն ՀԴԿ-ի կողմից ավելի ուշ փուլում՝ պայմանով, որ դրանք համապատասխանեն ծրագրի գերակայություններին և միջոցառումներին, և այդ նպատակի իրականացման համար առկա լինեն բավարար բյուջետային միջոցներ:[54] Պայմանագրի կնքման ընթացակարգերը, որոնք կիրառվում են լայնածավալ միջսահմանային ներդրումային նախագծերի նկատմամբ, պետք է համապատասխանեն ԳՈՒ-ին: Լայնածավալ միջսահմանային ներդրումային նախագծերի հայտերը պետք է ներկայացվեն բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով և ենթարկվեն վարչական, համապատասխանելիության և որակի գնահատման:

7.9 Լեզուները

Քանի որ ծրագիրը, ըստ սահմանման, միջազգային է, ծրագրի կառավարումը դյուրացնելու և ընթացակարգերը կրճատելու նպատակով, ինչպես նաև (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 8-րդ հոդվածին համապատասխան՝ ծրագրի պաշտոնական լեզուն կլինի անգլերենը:

[54] (ԵՀ) թիվ 951/2007 կանոնակարգի 4-րդ հոդված

ՆԱԽՆԱԿԱՆ ԻՆԴԻԿԱՏԻՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

(Կիրարկող կանոնների հոդված 4(թ))

		2007				2008				2009				2010				2011				2012				2013				2014				2015				2016			
		I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV	I	II	III	IV
Հղում ԿԿ-ին	**Ծրագրով նախատեսվող գործողությունները**																																								
Հոդ. 12	ՀԴԿ-ի հանդիպումներ																																								
	Հայտերի հրավերներ																																								
	Նախագծերի գնահատում և ընտրություն																																								
	Նախագծերի գործառնական և ֆինանսական դիտանցում (բ)																																								

ա) ԿԿ-ի 43-րդ հոդվածի համաձայն՝ մրցույթի հայտարարություն կամ հայտերի հրավեր չի կարող ներկայացվել 2013թ. դեկտեմբերի 31-ից հետո

բ) ԿԿ-ի 43-րդ հոդվածի համաձայն՝ ծրագրով ֆինանսավորվող նախագծերի բոլոր գործողությունները պետք է ավարտվեն ամենաուշը մինչև 2014թ. դեկտեմբերի 31-ը

Տեխնիկական աջակցության բաղադրիչի կողմից ֆինանսավորվող գործողությունների ինդիկատիվ ժամանակացույց 2008 թվականի համար

Ամիս / Գործողություն	Հուն.	Փետր.	Մարտ	Ապր.	Մայիս	Հուն.	Հուլ.	Օգոստ.	Սեպտ.	Հոկտ.	Նոյ.	Դեկտ.
ՀԴԿ-ի հանդիպումներ												
Ծրագրի մեկնարկի համաժողով												
ՀՏՔ-ի հիմնադրում												
Հայտերի հրավերներ, նախագծի գնահատում և ընտրություն												
Հնարավոր շահառուների համար սեմինարներ												
Շահառուների (Գլխավոր գործընկերներ) համար սեմինարներ												
Կարողությունների զարգացման միջոցառումներ ՀՂՄ-ի, ՀՏՔ-ի և ԱՏԿ-ների համար												
Տեղեկատվություն (ինտերնետային կայք, հրապարակումներ, գովազդային նյութեր և այլն)												
Տեղեկատվական ցանց (գովազդ և հրապարակայնություն)												